ԿՐԹԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔՈՒՄ

Մեթոդական ուղեցույց
մանկապարտեզների դաստիարկների համար





Երևան 2007

ԿՐԹԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔՈՒՄ

Մեթոդական ուղեցույց

Երևան 2007թ.

Երաշխավորված է
ՀՀ կրթության և գիտության նախարարության
Կրթական բարեփոխումների կենտրոնի կողմից
որպես ուսումնամեթոդական ձեռնարկ

Հեղինակ՝ Գայանե Մարտիրոսյան

Գրախոս՝ Անահիտ Գասպարյան
կենսաբանական գիտությունների թեկնածու

«Էկոլոգիական դաստիարակությունը նախադպրոցական տարիքում» ուսումնամեթոդական ձեռնարկում ներկայացված և արծարծված են նախադպրոցական տարիքի երեխաների էկոկրթության և դաստիարակության կարևորագույն խնդիրները, նպատակները, դրանց իրականացման ուղիները, ձևերն ու միջոցները:

Սույն ուղեցույցը հասցեագրված է կրթօջախների դաստիարկներին: Այն օգտակար է լինելու նաև ծնողներին, բուհերի և միջնակարգ մասնագիտական հաստատությունների համապատասխան ֆակուլտետների ու բաժինների ուսանողների համար:

ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔԻ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Մարդկային հասարակության կարևորագույն խնդիրներից են բնության մեջ գոյություն ունեցող էկոլոգիական օրենքների իմացության հիման վրա բնության խելամիտ օգտագործումն ու պահպանումը: Այդ հնարավորությունն ընձեռնում է «էկոլոգիա» գիտությունը: Վերջինս կարգավորվում է մարդկային հասարակության և բնության փոխհարաբերությունները: Այսօր վճռորոշ նշանակություն է ստանում էկոլոգիական կրթության և դաստիարակության անհրաժեշտությունը. Այն հնարավորություն կտա մատաղ սերնդի ներկայացուցիչներին մտահոգվելու և անհանգստանալու էկոլոգիական համամարդկային հիմանահարցերով, կբարձրացնի պատասխանատվությունը շրջակա միջավայրի նկատմամբ և դրա պահպանության ուղղությամբ կնդի կոնկրետ գործունեության: Էկոլոգիական կրթությունն ու դաստիարակությունը հասարակության ապագա անդամների համար պետք է ունենան աշխարհայացքային նշանակություն: Էկոլոգիան ապագայի գիտություն է, և հնարավոր է, որ դրա զարգացման առաջընթացից է կախված լինելու մարդու գոյությունը երկիր մոլորակի վրա:

Ներկայումս «էկոլոգիա» հասկացությունը գիտականից վերաճել է հասարակականի: «էկոլոգիա» արտահայտությունը առաջին անգամ 1866 թվականին օգտագործել է գերմանացի գիտնական Էռնեստ Հեկկելը: «Էկոլոգիա» բառը ծագել է հունարեն «օյկոս» (տուն) և «լոգոս» (գիտություն) բառերից: Էկոլոգիան գիտություն է, որն ուսումնասիրում է կենդանի օրգանիզմի և շրջակա միջավայրի փոխազդեցությունները և դրանց օրինաչափությունները: Հասարակության զարգացման տարբեր դարաշրջաններում մարդու ազդեցությունը շրջակա միջավայրի վրա տարբեր բնույթ է կրել: Պատմական անցյալում մարդն իր գործունեությամբ հաճախ ունեցել է բացասական ազդեցություն բնության առանձին կառուցվածքային տարրերի վրա, սակայն բնակչության սակավաթվության հետևանքով կրել է մասնակի բնույթ: Ներկայումս այն արտահայտվում է ավելի լայն սահմաններում: Ժամանակակից մարդը թափանցել է նորանոր միջավայրեր՝ շրջանցելով էկոլոգիական պահանջները, դրանով իսկ առաջացրել անցանկալի երևույթներ բնության ու մարդկության միջև և ստեղծել հարաբերությունների անհավասարակշռություն: Էկոլոգիայի խնդիրներն այժմ գտնվում են ամբողջ հասարակության, կառավարությունների, միջազգային կազմակերպությունների ուշադրության կենտրոնում: Ամենուրեք ծավալվում է ակտիվ գործունեություն՝ բնության ամբողջականությունը պահպանելու ուղղությամբ: Պահպանելով բնությունը՝ մենք պաշտպանում ենք մեզ և մեր սերունդների շահերը: Մարդը բնության մի մասն է: Նա իր կենսագործունեությամբ հազարավոր թելերով կապված է բնությանը: Մարդկության առաջ խնդիր է ծառացել կարգավորելու, կայունացնելու, հավասարակշռելու իր հարաբերությունները բնության հետ: Ուստի և դրանք իրականացնելու նպատակով ստեղծվել է բնապահպանական կրթության մի ամբողջ համակարգ: Առողջ և մաքուր շրջակա միջավայր ունենալու խնդրով շահագրգռված են բոլորը, ուստի բնապահպանական խնդիրները վերաբերում են և՛ փոքրերին, և՛ երիտասարդությանը, և՛ մեծերին: Այս շղթայում առաջին օղակը նախադպրոցահասակ երեխաների էկոլոգիական կրթությունն է: Այն թերևս ամենակարևորն է, քանի որ ամենավաղ տարիքում են ձևավորվում և ամրապնդվում մարդու համար հիմնական արժեքները, բարոյական նորմերը, որոնք էլ հետագայում բնության և շրջապատի նկատմամբ ճիշտ պահվածքի հիմքերն են դառնալու: Էկոկրթության նպատակն է ձևավորել մոլորակի և սեփական երկրի կենսական շահերը պահպանող քաղաքացի, որն ընդունակ կլինի պահպանելու և համադրելու մարդկության շահերը և երկիր մոլորակի ողջ կենսոլորտը:

Նախադպրոցականի էկոլոգիական կրթության իրականացման խնդրում կարևորվում է երեխայի օրգանիզմի անատոմիաֆիզիոլոգիական և հիգիենիկ առանձնահատկությունների դերը. Անհատական և հասարակական կանոնների պահպանումը խիստ կարևոր է ինչպես երեխայի առողջության պահպանման, այնպես էլ զանազան հիվանդությունների կանխարգելման առումով. Մարդը պարտավոր է առողջ լինել. սա է բնության հրամայական պահանջը: Մթնոլորտային օդի տարբեր աստիճանի աղտոտվածության պայմաններումս դիտվում են հիվանդության սպեցի բարձր ցուցանիշներ: Այդ հանգամանքը արտաքին շրջակա միջավայրի վիճակի բարելավումից բացի պարտադրում է լրացուցիչ առողջարար միջոցառումների կազմակերպման անհրաժեշտություն: Մանկապարտեզում կարևոր խնդիր է երեխայի օրգանիզմի կուտման գործընթացը, որի համար անգնահատելի են բնության զորեղ գործոնների (օդ, արև, հող, ջուր) դերը և ազդեցությունը: Օրգանիզմի և շրջապատող միջավայրի միջև գոյություն ունեցող փոխադարձ կապի ամենագլխավոր կարգավորիչը կենտրոնական նյարդային համակարգն է: Վաղ տարիքից երեխան անցնում է նյարդահոգեկան զարգացման մեծ ճանապարհ: Ճիշտ դաստիարակության պայմաններում նախադպրոցահասակ երեխայի զգայական օրգանները օրինաչափ են զարգանում: Դա կարևորվում է շրջապատի ընկալման դիտանկյունից: Ուստի երեխան պետք է ապահովված լինի հոգեբանական և հասարակական միջավայրի լավագույն պայմաններով, որոնց ստեղծողները մենք՝ մանկավարժներս ենք:

Երեխայի էկոլոգիական մտածելակերպի ձևավորման գործընթացը փոխկապակցված է մարդու էկոլոգիայի տեսության հետ: Բանն այն է, որ մարդը բնության մեջ զբաղեցնում է իր ուրույն տեղը, ունի շրջակա միջավայրի հետ փոխազդեցության տարբեր մակարդակներ: Դրանցից յուրաքանչյուրում մարդու և շրջապատող միջավայրի փոխազդեցությամբ ձևավորում է անհատին որպես անձ իր բոլոր արժեքներով: Այդ համակարգի մակարդակներն են միկրոհամակարգը, մեզոհամակարգը, էկոհամակարգը և մակրոհամակարգը:

1. Միկրոհամակարգը այն միջավայրն է, ուր երեխան իր անմիջական գործունեությամբ փոխազդեցության մեջ է մտնում շրջապատի հետ: Շրջապատող մեծահասակները ներազդում են երեխայի, իսկ երեխան իր ֆիզիկական, անձնային հատկանիշներով և ունակությամբ փոխազդում է մեծերի վրա, դրանով իսկ ձևավորում մեծահասակների վարքը իր անձի նկատմամբ:

2. Մեզոհամակարգը միկրոհամակարգի և երեխայի շրջակա միջավայրի փոխազդեցությունն է (ընտանիք, մանկական հիմնարկ , հասակակիցներ):

3. էկոհամակարգը երեխային շրջապատող այն միջավայրն է, որտեղ երեխան անմիջական փոխազդեցության մեջ չի մտնում շրջապատի հետ, սակայն այն ներազդում է երեխայի վրա (հեռավոր ազգականներ, մանկական պոլիկլինիկա համաբուժարան, ծնողների աշխատավայր):

4. Մակրոհամակարգը նախորդ բոլոր համակարգերի գաղափարական ընդհանրությունն է, որն իր մեջ ներառում է անձի դաստիարակության ու կրթության խնդիրներ (մշակույթ, օրենքներ, սովորույթներ, արժեքներ):



Երեխային շրջապատող միջավայրի էկոլոգիական համակարգի բոլոր մասերը միմյանց և երեխայի հետ գտնվում են փոխազդեցության մեջ և նպաստում նրա անձի ձևավորմանը:

Նախադպրոցական հիմնարկներում էկոլոգիական կրթության ծրագրի խնդիրը երեխաների շրջակա միջավայրի նկատմամբ մարդասիրական վերաբերմունքի ձևավորումն է՝ բնության հետ շփման, բույսերի ու կենդանիների նկատմամբ սիրո և հոգատար վերաբերմունքի դրսևորումը: Դեռևս վաղ տարիքից երեխաների մեջ անհրաժեշտ է ձևավորել ու դաստիարակել սեր և հոգատար վերաբերմունք՝ բույսերի, կենդանիների նկատմամբ, վայրի ճիշտ դրսևորում բնության գրկում: Հարկավոր է ձևավորել որոշակի գիտելիքներ՝ բույսերի, ընտանի և վայրի կենդանիների կյանքի պայմանների մասին, պարզաբանել բնության կարևորագույն երևույթները և այն ուղիները, որոնցով կարելի է պահպանել բնությունը: Նախադպրոցականները երեխաները պետք է պատկերացում ունենան այն մասին, որ շրջապատող բնության տարրերը փոխկապակցված են միմյանց, օրգանիզմի յուրաքանչյուր տեսակի գոյությունը սահմանափակվում է էկոլոգիական գործոնների ազդեցությամբ: Երեխան ինքն էլ լինելով բնության մի մասնիկ՝ պետք է կարողանա իրականացնել բնապահպանական առաջադիմ խնդիրներ: Ոչ մի կենդանի, ոչ մի բույս բնության մեջ ավելորդ չէ՝ մի օրգանիզմի գոյությունը պայմանավորված է մյուսով: Բույսերը մարդու նյութական և հոգևոր կյանքի աղբյուրներն են: Մարդը միշտ օգտագործում է բնությունը, նրանից վերցնում կյանքի և զարգացման համար անհրաժեշտ ամեն ինչ: Սակայն անհրաժեշտ է վերցնել այնպես, որպեսզի չվնասվի բնությունը: Հարկավոր է ոչ միայն վերցնել, այլև տալ ու պահպանել այն:

Նախադպրոցական երեխայի էկոլոգիական կրթությունը հաջող ընթացք կարող է ունենալ միայն այն դեպքում, երբ դաստիարակը բաց գիտակցի դրա կարևորությունը, պատկերացնի նպատակները ու խնդիրները, իրականացման ուղիներն ու միջոցները: Նա պետք է իմանա կարևորագույն հարցերի («ի՞նչ տեղ է գրավում մարդը բնության մեջ», «ինչպիսի՞ն պետք է լինեն մարդու և բնության փոխհարաբերությունները», «ինչպե՞ս կառուցել ամենօրյա կենցաղը») պատասխանները: Յուրաքանչյուր մանկավարժ պարտավոր է գիտակցել, որ բնությունը երեխայի վրա ներազդելու հզոր միջոց է և դաստիարակելու լավագույն մեթոդ, քանզի մարդկության կարևորագույն հատկանիշը գիտելիքներ ձեռք բերելու ձգտումն է, իսկ ուսուցման պարագայում իմացության խթանը ճանաչողական հետաքրքրությունների բավարարման և մտահորիզոնի ընդլայնման պահանջն է: Բնության մեջ կենդանի օրգանիզմների փոխհարաբերությունները միմյանց և շրջակա միջավայրի հետ կարգավորվում են բնության օրենքներով:

ԴԻՏՈՒՄՆԵՐԻ, ԷՔՍԿՈՒՐՍԻԱՆԵՐԻ, ԶՐՈՒՅՑՆԵՐԻ ԴԵՐԸ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Մարդուն շրջապատող բնությունն ու կենդանական աշխարհը ոչ միայն անսահման գիտելիքներ են պարունակում իրենց մեջ, այլև անչափ հետաքրքիր են, գրավիչ, սիրելի և օգտակար: Բնության միջոցով կամ բնության գրկում դաստիարակել երեխային, նշանակում է՝ ձևավորել որոշակի գիտելիքներ, վերաբերմունք, մտածողություն, աշխարհաճանաչում, աշխարհասիրություն, գեղարվեստական ունակություններ: Նման դաստիարակությունը հնարավոր է իրագործել ամենուրեք (քանի որ բոլոր վայրերն էլ, ուր բնակվում ենք մենք, ներգրավված են կենսոլորտում): Յուրաքանչուրիս վերևում երկինք է՝ ամպերով, ծիածանով, աստղերով: Այդ բոլոր վայրերն էլ կրում են ժամանակի և եղանակի ազդեցությունը: Ամենուր կան ծաղիկներ, պարտեզներ, թռչուններ, միջատներ, շրջակայքում անտառ, դաշտ և այլն: Այդ

առումով բացառիկ է էքսկուրսիաների, զբոսանքների, զրույցների, անցկացվող դիտումների դերը: Դրանց շնորհիվ երեխան անմիջականորեն առնչվում է բնությանը, ձեռք բերում որոշակի գիտելիքներ: Երեխաները բնությունից օժտված են հետաքրքրասիրությամբ և սրտառուչ աշխուժություն են ցուցաբերում՝ իրենց շրջապատող աշխարհի մասին տեղեկություններ ստանալիս: Բնական հետաքրքրասիրությունը նրանց առաջնորդում է դեպի արդյունավետ ուսումնասիրության: Դիտումների ընթացքում երեխան հնարավորություն է ունենում ծանոթանալու, տեսնելու, ճանաչելու առարկան, երևույթը: Այդ ընթացքում ձևավորվում են իմացական գիտելիքներ: Անկախ դիտարկվող առարկայի բնույթից և երեխայի տարիքից դիտումները լինում են էպիզոդիկ, կարճատև՝ մի քանի րոպե տևողությամբ և երկարատև, որ կարող են տևել օրեր, նույնիսկ շաբաթներ: Կրտսեր տարիքի երեխաների հետ անցկացվող դիտումներն առարկայական են և կարճատև, իսկ ավագ խմբերում կարելի է անցկացնել նաև երկարատև դիտումներ: Դիտումների միջոցով երեխայի մեջ տեսնելու կարողություն է սերմանվում: Բնությունը տեսնելու կարողությունը բնության հետ միասնության զգացում առաջացնելու առաջին պայմանն է: Անհրաժեշտ է երեխային սովորեցնել տեսնելու, դիտելու ծառերը, ծաղիկները, թփերը, նկարել տերևների սաառանձնահատկությունները, երանգները: Ցանկալի է, որ նրանք տեսնեն, թե ինչպես են առաջանում և բացվում բողբոջները, սկսում դեղնել տերևները, ինչպես են փթթում ծաղիկները և հասունանում պտուղները: Անուշադրության չպետք է մատնել միջատներին, օդում թռչող թռչուններին: Բնության մեջ պետք է երեխային ցույց տալ ամեն ինչ՝ ծառ ու ծաղկից մինչև բնապատկերը, ամպերն ու աստղերը, արևն ու երկինքը, շրջակա միջավայրում գտնվող ամեն մի տարր, առարկա, նյութ, մասնիկ և յուրաքանչյուրի զուգակցված կապը մեկը մյուսի հետ: Դիտումների ընթացքում երեխաները ձեռք են բերում համեմատելու, նկարագրելու, կանխագուշակելու, հաղորդակցվելու, դասակարգելու և չափումներ կատարելու կարողություններ:

Երեխաների մեջ առաջանում են հարցադրումներ՝ ի՞նչն է սուզվում, ի՞նչն է մնում ջրի երեսին, որտե՞ղ կարելի է գտնել թռչյունի բույն, որքա՞ն արագ և ինչպե՞ս կարող է հալվել ձյունը:

Կատարում են համեմատություններ՝ ինչպիսի՞ տարաներ են մեծ քանակությամբ ջուր պարունակում, ո՞ր սերմերն են բարձր, գեղեցիկ ծաղիկների վերածվում, կատարում են դասակարգումներ՝ հավաքում տերևներ, առանձնացնում ըստ ձևի, չափի, գույնի, մակերեսի հարթության:

Այնուհետև հաղորդակցվում են՝ պատմում որևէ կենդանու կամ բույսի մասին (օձ, ծաղիկ), նկարում (պարտեզից մի պատկեր, չվող թռչուններ):

Ջրի հետ կապված դիտումներն ու ուսումնասիրությունները հնարավորություն են տափս նրանց հասկանալու, որ ջրի մեջ առանձին առարկաներ սուզվում են կամ մնում ջրի մակերեսին, որ ջուրը կենդանի էակի համար անհրաժեշտ տարր է: Երեխաները ջրի դիտարկումից գալիս են այն համոզման, որ ամանի մեջ լցված ջրի գոլորշիացման առանձնահատկությունները տարբեր պայմաններում՝ ջեռուցիչի վրա դրված, արևի ճառագայթների տակ կամ ստվերում դրսևորվում են տարբեր կերպ: Ի՞նչ կկատարվի ջրի մեջ աղ կամ տաք ջուր ավելացնելիս: Երկարատև դիտումների միջոցով երեխաները կարող են հետևել երկու բույսերի աճի տարբերությունները, որոնցից մեկը ջրվում է, մյուսը՝ ոչ: Նրանց հետ կարելի է դիտել մագնիսի հատկությունները՝ զուգահեռաբար կատարելով փորձեր՝ ձգվող, կպչող և վանվող առարկաների հետ:

Էքսկուրսիաների, զբոսանքների ժամանակ կամ խմբասենյակներում անցկացվող դիտումները զուգակցվում են համապատասխան զրույցներով: Այդ ընթացքում երեխային տրվում են որոշակի գիտելիքներ: Անհրաժեշտ է ոչ միայն հաղորդել գիտելիքներ, այլև երեխայից ստանալ որոշակի հարցերի պատասխաններ և համագործակցել նրա հետ:

Անտառի, արևի, բույսերի ու կենդանիների վերաբերյալ գրույցների միջոցով երեխաները սովորում են, որ անտառը մեծ հրաշք է: Անտառը թթվածնի ամենակարևոր գործարանն է, թոթի, փայտամշակման արդյունաբերության հումքի աղբյուր: Անտառը մի վիթխարի մարգ է, որից մարդն ստանում է արժեքավոր պտուղներ, սունկ, ընկույզ, դեղաբույսեր: Այն առողջության մարգաղաշտ է, ուր մարդիկ առողջության, ուժի և գեղագիտական բավականության լիցքեր են ստանում: Դա է պատճառը, որ պետք է պահպանել անտառը և ճիշտ վերաբերվել նրա բարիքներին: Արեգակը լույսի ու ջերմության աղբյուր է: Առանց արեգակի մեր երկրի վրա կյանք լինել չի կարող: Արևը հանդիսավոր և վեհապանծորեն ազդարարում է նոր օրվա ծնունդը: Գեղեցիկը արևից է, իսկ լավը՝ մարդուց: Անհրաժեշտ է պահպանել գեղեցիկն ու լավը: Բույսերը կերակրում են մարդկանց և բոլոր կենդանիներին, մաքրում օդը և հարստացնում թթվածնով: Պետք է հոգատարությամբ և խնամքով վերաբերվել դրանց: Էքսկուրսիաների և զբոսանքների ընթացքում անցկացվող գրույցները, բացի իմացական գիտելիքների ձևավորումից, նպաստում են նաև գեղեցիկի նկատմամբ հոգատար վերաբերմունքի դրսևորմանը: Այս դեպքում երեխայի մեջ բնության նկատմամբ չի դրսևորվի սպառողական վերաբերմունք: Նա կդառնա շրջապատի ու միջավայրի նկատմամբ ուշադիր, խնամքով կվերաբերվի և հոգատարությամբ կլցվի բնության ու կենդանական աշխարհի ներկայացուցիչների հանդեպ: Դա բնապահպանական խնդիրներից մեկն է և արդիականության հրամայական պահանջը:

ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՄԲ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԸ ՆԱԽԱԴՊՐԱՏԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Մանկապարտեզում բնապահպանական թեմաներով պարապմունքներին երեխաները մասնակցում են մեծ ակտիվությամբ և մեծ հետաքրքրություն ցուցաբերում: Պատճառը մեկն է՝ բնությունն անսպառ է և տափս է բազմազան վառ ու հետաքրքիր գիտելիքներ, առաջացնում բուռն հետաքրքրություն՝ աշխարհի ու կյանքի նկատմամբ: Նման պարապմունքների ընթացքում երեխան շփվում է կենդանի էակների, բույսերի հետ, ուսումնասիրում մոտիկից, կատարում հետևություններ, տեսնում արդյունքը: Դաստիարակները երեխաներին հաղորդում են մարդկության կողմից մշակված և կյանքում վավերագրված աշխարհաճանաչության, աշխարհընկալման միջոցներն ու եղանակները: Բնապահպանական թեմաներով պարապմունքները դաստիարակներին լայն հնարավորություն են ընձեռում՝ բնապահպանական գիտելիքներ, ունակություններ և հմտություններ հաղորդելու երեխաներին: Այս պարագան էլ ենթադրում է ուշադրության, մտածողության, կամային հատկանիշների և հոգեկան գործընթացների ձևավորում ու զարգացում:

Պարապմունք 1 (կրտսեր խումբ)
(ծանոթացում՝ բանջարեղենին)

Նպատակը՝ ձևավորել գիտելիքներ բանջարեղենի մասին (համ, հոտ, ձև, գույն), հարստացնել երեխաների բառապաշարը:

Ձևական պարագաներ կաղամբ, սոխ, գազար, բազուկ, կարտոֆիլ, լոլիկ, կտրատելու համար տախտակ, դանակ, ինչպես և անձրև, արև, ցնցուղ, մարդ պատկերող նկարներ:

Պարապմունքի ընթացքը Խաղ «Հրաշալի պարկ»:

Դաստիարակ՝ Երեխաներ, այսօր մեզ հյուր են եկել տիկնիկները: Նրանք քանի՞սն են. (շատ, քիչ):

Դաստիարակ՝ նրանք բերել են մի պարկ բանջարեղեն, որը հավաքել են բանջարանոցից և խնդրում են մեզ՝ իրենց համար ճաշ եփել:

Դաստիարակը հերթականությամբ հրավիրում է երեխաներին և առաջարկում պարկից հանել բանջարեղենը: Ամեն անգամ միասին անվանում են բանջարեղենը, ներկայացնում գույնը, ձևը, համեմատում միմյանց հետ: *Դաստիարակ՝* Իսկ տիկնիկները որտեղի՞ց են հավաքել բանջարեղենը:

- Որտե՞ղ է աճում բանջարեղենը:
- Ո՞վ է ջերմացրել, որ լավ աճի (միաժամանակ երեխային առաջարկում է գտնել արևի նկարը և ցույց տալ):
- Ո՞վ է ջրել բանջարեղենը, որպեսզի լավ աճի (առաջարկում է ցուցադրել անձրև պատկերող նկարը):
- Իսկ երբ անձրև չի լինում, ո՞վ է ջրում բանջարեղենը (առաջարկում է ցույց տալ մարդ և ցնցուղ պատկերող նկարը):
- Ի՞նչ են բերել տիկնիկները մեզ:
- Ինչու՞ են բերել այդ բանջարեղենը:

Դաստիարակը տախտակի վրա կտրատում է բանջարեղենը, առաջարկում երեխաներին օգնել իրեն՝ կտրատած բանջարեղենը կաթսայի մեջ լցնելու, ճաշ եփելու և տիկնիկներին հյուրասիրելու համար:

Պարապմունք 2 (կրտսեր խումբ)

Նպատակը՝ սովորեցնել երեխաներին՝ տարբերել բողկը, գազարը, անվանել դրանք, զարգացնել զգայական ունակությունները՝ շոշափելով տարբերելու մեկը մյուսից, շարունակել ձևավորել լսելու և կրկնելու ունակությունը:

Զննական պարագաներ՝ գազար, բողկ:

Պարապմունքի ընթացքը: Դաստիարակը երեխաներին նստեցնում է աթոռակներին: Տիկնիկին ցուցադրելով՝ ներկայացնում է որպես հյուր: Նա տիկնիկի հետ միասին մոտենում է յուրաքանչյուր երեխայի, տիկնիկի ձեռքով բարևում նրանց, անվանում նրանցից յուրաքանչյուրին և հնարավորություն տալիս երեխաներին՝ ընտելանալու տիկնիկին:

Դաստիարակ՝ Այսօր մեզ հյուր է եկել «Պապն ու շաղգամը» հեքիաթի պապիկը: Նա եկել է ձեզ ցույց տալու իր աճեցրած գազարն ու բողկը: Պապիկը զամբյուղից հանում է գազարը և տալիս երեխաներին, այնուհետև հարցեր տալիս գազարի վերաբերյալ (ձևը, գույնը): Պատասխաններ ստանալուց հետո առաջարկում է երեխաներին կրկնելու (ինչպիսի՞ն է գազարը, ի՞նչ ձև ունի, ամու՞ր է): Նույնը կրկնում է բողկի վերաբերյալ, հետո սկսում են խաղը:

Երեխաները պետք է քայլեն դաստիարակի և պապիկի հետևից: Երբ լսեն «1, 2, 3, 4. վազք դեպի գազարը» հրահանգը, պետք է վազեն դեպի գազարը: Նույնը կրկնել բողկի դեպքում: Խաղից հետո դաստիարակը խրախուսում է երեխաներին և առաջարկում զբաղեցնել իրենց տեղերը: Պարապմունքի 3-րդ մասում երեխաները պետք է ըստ համի տարբերեն գազարը և բողկը: Դաստիարակը պապիկին նստեցնում է իր կողքին և ասում. «Ես հիմա կկտրատեմ գազարը և բողկը, իսկ դուք կփորձեք ուտել և անվանել դրանք»: Ուտելու պահին դաստիարակը երեխաների ուշադրությունը հրավիրում է գազարի և բողկի համի վրա (գազարը քաղցրահամ է և ամուր, բողկը սպիտակ է և համ չունի, երկուսն էլ կոշտ են և օգտակար):

Պարապմունքի վերջում դաստիարակը շնորհակալություն է հայտնում պապիկին՝ իրենց հյուրընկալելու համար և խնդրում, որ մեկ անգամ էլ այցելի իրենց:

Ծանոթություն: Նմանատիպ պարապմունք կարելի է անցկացնել ցանկացած մրգի կամ բանջարեղենի ծանոթացնելու նպատակով:

Պարապմունք 3 (միջին խումբ)
Անտառի շղթան

Պարպմունքի նպատակը՝ ձևավորել պատկերացումներ անտառի բնակիչների փոխկապվածության մասին, պատկերացում տալ այն մասին, որ անտառը բուսական և կենդանական աշխարհների համակեցության վայր է: Անտառի բնակիչների բույսերի ու կենդանիների գոյությունը փոխկապակցված է, և առանց մեկի նպաստավոր չէ մյուսի գոյությունը:

Զննական պարագաներ՝ խավատախտակ, բույսերի և կենդանիների պատկերներ, անտառի տեսարանով նկար:

Պարապմունքի ընթացքը: Դաստիարակը պատմում է անտառում բնակվող բույսերի և կենդանիների մասին, այնուհետև հարցեր ուղղում երեխաներին.

1. Դուք երբևիցե եղե՞լ եք անտառում: Նմա՞ն է անտառը
բարձրահարկ շենքի:
2. Այդ բարձրահարկ շենքի ո՞ր հարկում ո՞վ է բնակվում:
3. Տարվա ո՞ր եղանակին կարելի է անտառում հանդիպել բզեզների, թիթեռների:
4. Անտառի ո՞ր բնակիչներն են սնվում ընկույզով, սերմերով, կոներով:
5. Անտառի ո՞ր բնակիչը որտե՞ղ և ինչպե՞ս է ձմեռում անտառում:

Դաստիարակը երեխաներին առաջարկում է խավատախտակի վրա կառուցել անտառի բազմահարկ շենքը, վրան տեղադրել ծառերի, ծաղիկների, կենդանիների պատկերները՝ համապատասխան հատվածներում: Պարապմունքի վերջում արտասանվում է որևէ բանաստեղծություն կամ կատարվում թեմատիկ որևէ երգ:

Պարապմունք 4 (միջին խումբ)

Պարապմունքի նպատակը շարունակել երեխաների մեջ ձևավորել ,բանջարեղենե հասկացությունը, ամրապնդել գիտելիքները բանջարեղենի օգտակարության մասին, ճշտել բույսերի, կենդանի և անկենդան բնության փոխհարաբերությունները:

Զննական պարագաներ թարմ և թթու դրած վարունգ, եփած և հում բազուկ, գազար, կարտոֆիլ, թարմ և թթու դրած կաղամբ, սոխ, բանջարեղենի տարբեր տեսակներ ներկայացնող քարտեր:

Պարապմունքի ընթացքը՝ զրույց:

1. Ի՞նչ է դրված սեղանին (երեխաների պատասխանից հետո դաստիարակն առաջարկում է առանձնացնել բանջարեղենի տեսակները՝ թարմ, եփված և թթու դրված:

2. Թարմ վարունգն են ուտում, թե՞ թթու դրած: Երեխաների պատասխանից հետո դաստիարակը ցույց է տալիս թարմ վարունգը և ասում, որ այն ուտելիս խրթխրթում է և անալի է:

3. Ինչպիսի՞ համ ունի թարմ վարունգը:

Երեխաները դժվարանում են պատասխանել: Դաստիարակն առաջարկում է բաժակով ջուրը խմել, այնուհետև համեմատել և նմանեցնել թարմ վարունգի համին:

4. Ինչպե՞ս տարբերել թթու վարունգը՝ թարմից (դաստիարակը միաժամանակ ցուցադրում է թարմ և թթու վարունգներ):

Երեխաները ներկայացնում են թթու վարունգի բնութագիրը: Նույնատիպ զրույցը շարունակվում է գազարի, կաղամբի, բազուկի վերաբերյալ:

Դաստիարակը շարունակում է զրույցը բանջարեղենի աճի համար անհրաժեշտ գործոնների մասին:

1. Ի՞նչ է անհրաժեշտ բանջարեղենի աճի համար (օդ, արև, ջուր,հող, խնամք):
2. Գազարը, բազուկը, կաղամբը, կարտոֆիլը, սոխը միասին այլ կերպ ինչպե՞ս կարելի է անվանել (բանջարեղեն):
3. Որտե՞ղ է աճում բանջարեղենը (բանջարանոց):
4. Մարդն ինչպիսի՞ խնամք է իրականացնում, որ բանջարեղենը աճի (ջրել, հողը փխրեցնել):

Պարապմունքի վերջում առաջարկվում է խաղ: Դաստիարակն անվանում է որևէ բանջարեղեն: Երեխաները համապատասխանաբար ընտրում են քարտը և դնում իրենց առջև

Վերջում կարելի է թեմատիկ երգ երգել:

Պարապմունք 5 (ավագ խումբ)
Ո՞վ ունի ջրի պահանջ

Պարապմունքի նպատակը՝ երեխաների հետ զրուցել ջրի կարևորության մասին, նրանց մեջ ձևավորել որոշակի գիտելիքներ՝ ջրի անհրաժեշտության վերաբերյալ: Շեշտել, որ ջուրը խիստ անհրաժեշտ է և՛ բույսերի, և՛ կենդանիների, և՛ մարդկանց համար: Մարդիկ ջուրն օգտագործում են խմելու, մաքրության, լողանալու, ծաղիկներ խնամելու նպատակով:

Խմելու համար օգտագործում են մաքուր ջուր, որը վերցնում են ջրհորից, աղբյուրից, բնակարաններում՝ ջրատար խողովակներից: Ամենամաքուր ջուրը եռացրած ջուրն է: Օվկիանոսների և ծովերի ջրերը աղի են, իսկ լճերինն ու գետերինը՝ քաղցրահամ, ոչ պիտանի կենցաղում օգտագործելու համար: Խմելու ջուրն ստանում են գետերից: Ձրամբարներում որոշ վերամշակումից հետո ջրատար խողովակներով այն հասնում է մեզ:

Երեխաներին ծանոթացնել բնության մեջ կատարվող ջրի շրջանառությանը:

Ձևական պարագաներ՝ գլոբուս, գետ, ծով, լիճ պատկերող նկար:

Պարապմունքի ընթացքը: Դաստիարակը զրուցում է երեխաների հետ ջրի անհրաժեշտության մասին, ինչպիսի՞ն է ջուրը, ի՞նչ դեր ունի բույսերի և կենդանիների կյանքում, ո՞վ ինչպես է ստանում ջուր (բույսերին ջրում են, կենդանիներին ջուր են տափս), ի՞նչ ջուր է խմում մարդը, ո՞վ ինչպես է օգտագործում այն:

Դաստիարակը նկարների միջոցով ցույց է տալիս բնության մեջ գտնվող ջրի տարբեր տեսարաններ, պատմում տափաստանների մասին և ներկայացնում ջրի անհրաժեշտությունը՝ մարդկանց, բույսերի, կենդանիների կենսունակության առումով, սովորեցնում ջրի հետ խնայողաբար վարվելու ձևերը: Ներկայացնում է բնության մեջ ջրի շրջանառությունը և սխեմատիկ ձևով ցույց տալիս այն (օվկիանոսից, ծովերից, գետերից ջուրը գոլորշիանում է, երկնքում կուտակվում ամպերի ձևով, անձրևի տեսքով թափվում ցած և ներծծվում հողի մեջ ջրելով ծառերը, ծաղիկները, խոտը, երկրի ընդերքից դուրս է ժայթքում): Պարապմունքի վերջում առաջարկվում է հանելուկ:

Պարապմունք 6 (ավագ խումբ)
Մաքուր և կեղտոտ օդ

Պարապմունքի նպատակը՝ երեխաներին ներկայացնել բույսի օգտակարությունն ու կարևորությունը, բույսերի նշանակությունն ու դերը օդի մաքրության խնդրում:

Ձևական պարագաներ՝ 2 նկար՝

1. քաղաքի տեսարան (շենքեր, գործարաններ, փողոց, մեքենաներ),
2. անտառային գեղեցիկ տեսարան (ծառեր, ծաղիկներ, թփեր, թիթեռներ):

Պարապմունքի ընթացքը: Դաստիարակը երեխաներին հայտնում է ստացած ծանրոցի մասին և պատմում, որ ծանրոցն ուղարկել է մի նկարիչ: Նա ամռանը հանգստացել է մի մեծ քաղաքում, այնուհետև ճանապարհորդություն է կատարել դեպի անտառ: Նա Իր տպավորությունները վերարտադրել է այս նկարներում և ուղարկել մեզ: Ի՞նչ եք կարծում այս նկարներով հնարավո՞ր է որոշել, թե որտեղ է նկարիչը ավելի լավ հանգստացել՝ քաղաքու՞մ, թե՞ անտառում:

Դաստիարակ՝ Որտե՞ղ է օդն ավելի մաքուր:

Քաղաքում շատ ավտոմեքենաներ են երթևեկում: Դրանք բաց են թողնում գազեր: Աշխատում են շատ գործարաններ, որոնք նույնպես կեղտոտում են օդը:

Դաստիարակ՝ Իսկ ի՞նչ է անհրաժեշտ օդի մաքրության համար:

- Անհրաժեշտ է ոչ թե փակել այդ գործարանները, քանի որ դրանք շատ կարևոր են, այլ պետք է օգտագործել օդը մաքրող ֆիլտրեր:

Դաստիարակ՝ Ինչու՞ է անտառում օդն ավելի մաքուր:

- Այնտեղ չկան գործարաններ, մեքենաներ: Կան շատ ծառեր, որոնք արտաշնչում են թթվածին և մաքրում օդը կեղտոտ նյութերից:

Դաստիարակ՝ Ինչպե՞ս կարելի է քաղաքում նպաստել օդի մաքրությանը:

- Շատ ծառեր տնկել, կանաչ գոտիներ ստեղծել: Դաստիարակ՝ Երբ մարդը երկար ժամանակ դուրս չի գալիս մաքուր օդում զբոսնելու, ի՞նչ է տեղի ունենում նրա հետ:

- Նա իրեն թույլ է զգում, գլխացավ ու գլխապտույտ է ունենում և առույգ չի լինում:

Զբոսանքները մաքուր օդում ամրացնում են օրգանիզմը, բարձրացնում տրամադրությունը: Ցանկալի է շատ զբոսնել:

Պարապմունքի վերջում դաստիարակը երեխաներին առաջարկում է դուրս գալ բակ և ազատորեն խաղալ ինքնուրույն ստեղծագործական խաղեր:

Պարապմունք 7 (ավագ խումբ)
Ծառի կեղև

Պարապմունքի նպատակը՝ Երեխաների մեջ սեր արթնացնել և հոգատար վերաբերմունք դաստիարակել ծառերի նկատմամբ, ծանոթացնել ծառի կեղևին, ներկայացնել ծառի համար դրա անհրաժեշտությունն ու կարևորությունը, սովորեցնել ճանաչել ծառը՝ արտաքին տվյալներով, որոշել և ճշտել նրա տարիքը, անվանել այն մարդկանց մասնագիտությունները, ովքեր կոչված են անտառի խնդիրների ուսումնասիրությամբ և խնամքով զբաղվելու, հարստացնել երեխաների գիտելիքները՝ փայտի օգտագործման, օգտավետության վերաբերյալ:

Պարապմունքի նախապատրաստում: Կազմակերպել էքսկուրսիա՝ դեպի մոտակա այգի կամ անտառ: Դիտելով ծառի կեղևը՝ որոշել նրա տարիքը, երեխաների հետ զրուցել փայտի օգտագործման տարբեր ոլորտներին վերաբերող թեմաներով:

Ձեռնարկան պարագաներ՝ ծառի կեղևի կտոր, սպիտակ թուղթ, գունավոր ներկեր, մերկ ծառ պատկեր, թղթից պատկերված տերևներ, փայտյա առարկաներ:

Պարապմունքի ընթացքը: Դաստիարակը երեխաներին պատմում է, որ նա իր հանգստյան օրն անց է կացրել անտառում և հանդիպել անտառապահին: Վերջինս նամակ է ուղարկել երեխաներին և հանելուկ առաջադրել: Երեխաները գուշակում են ծառի վերաբերյալ հանելուկը Դաստիարակը ցույց է տալիս ծառ պատկերող նկարը և հարցնում.

- Ի՞նչ եք կարծում, ծառը շնչավո՞ր է:
- Ինչու՞ (այն շնչում է, սնվում է, բազմանում է):
- Ինչպե՞ս է շնչում ծառը:

Հնչում են պատասխաններ. «Տերևներով այն կլանում է կեղտոտ օդը և արտաշնչում թթվածին: Այն խիստ անհրաժեշտ է մարդու կենսունակության համար»:

Դաստիարակ՝ Անտառապահը ձեզ նամակից բացի մի նվեր է ուղարկել, ապա տեսնենք ինչ է այն (ցույց է տալիս ծառի կեղևը և հարցնում).

- Ի՞նչ է սա:
- Ինչի՞ համար է անհրաժեշտ ծառի կեղևը ծառին:
- Կեղևը պաշտպանում է ծառը արտաքին վնասներից:
- Իսկ ի՞նչ եք կարծում՝ ինչի՞ց կարող է պաշտպանել կեղևը ծառին:

Դաստիարակ՝ Վերցնենք ծառի ճյուղը, զգուշությամբ կեղևը բարձրացնենք և տեսնենք. թե ինչ կա կեղևի տակ, ծառի ճյուղի կեղևը բարակ է, իսկ բնի կեղևը լինում է հաստ և կոպիտ: Որքան ծառի կեղևը կոշտ է, այնքան ծառի տարիքը մեծ է:

Իսկ ի՞նչ եք կարծում՝ մարդն ի՞նչ կարիք ունի ծառի տարիքը որոշելու:

- Որպեսզի ծեր ծառերը կտրեն և օգտագործեն որպես ամուր փայտ՝ շինարարության, կահույքի, թղթի և արտադրության մեջ:
- Բացի ծեր ծառերից ո՞ր ծառերը կարելի է կտրել անտառում:
- Հիվանդ ծառերը:
- Իսկ ինչպե՞ս կարելի է որոշել ծառի հիվանդությունը:
- Եթե տերևները դեղնում են, չորանում, իսկ կեղևը ճեղքվում է, ուրեմն՝ ծառը հիվանդ է:
- Օ՞րն է ծառի հիվանդության պատճառը:
- Երբ վտանգավոր միջատները բնակություն են հաստատում ծառի վրա:
- Իսկ ի՞նչ եք կարծում, ո՞վ է բուժում ծառերը, ո՞վ է անտառի բժիշկը:

Փայտփորիկ թռչունը, որը կտցահարում և ոչնչացնում է վնասատու միջատներին:

- էլ ինչի՞ց կարող է հիվանդանալ ծառը:
- երբ մեկը կտրել է ծառի ճյուղը կամ վնասել կեղևը: Ով նման ձևով է վարվում, նա մեծ վնաս է հասցնում ծառին և բնությանը:

Պարապմունքի վերջում առաջարկվում է խաղ:

Դաստիարակն անվանում է մի քանի ծառատեսակներ, իսկ երեխաները ցուցադրում են համապատասխան նկարները:

Դաստիարակը ցույց է տալիս ուրվագծված ծառի նկարը և հարցնում՝ ինչ է պատահել այդ ծառին: Երեխաները որոշում են, որ նա հիվանդացել է, պարզում են պատճառը (չունի տերևներ, կեղև): Դաստիարակը երեխաների հետ ճշտում է, թե ինչ պետք է արվի, որ լավ աճի հիվանդ ծառը (ջրել, հողը փխրեցնել, ծտի բույն պատրաստել և ամրացնել ծառին):

Պարապմունքի վերջում դաստիարակն ամփոփում է ուսուցանված նյութը:

Պարապմունք 8 (ավագ խումբ)

ԾՈՎ

Ծրագրային բովանդակություն՝ ընդլայնել երեխաների պատկերացումները ծովի վերաբերյալ, տեղեկություններ հաղորդել ծովի նշանակության և կարևորության մասին:

Պարապմունքի նախապատրաստում - երեխաների հետ դիտել ծովի տեսարաններով նկարներ, ծովային կենդանիների նկարներ, ակվարիում, գլոբուս:

Ձեռնարկ պարագաներ՝ համապատասխան նկարներ, գլոբուս:

Պարապմունքի ընթացքը

Դաստիարակ՝ Երեխաներ, դուք սիրու՞մ եք ճանապարհորդել: Եկեք այսօր միասին ճանապարհորդություն կատարենք մեր նավով: Որտե՞ղ կարող ենք ճանապարհորդել (ծով, գետ, լիճ):

Դե, յուրաքանչյուրը մեր նավում թող զբաղեցնի իր տեղը: Ի՞նչ եք տեսնում իմ ձեռքին (գլոբուս): Եթե այն պտտեցնենք, ինչպիսի՞ն կլինի:

- Գույնզգույն:
- Իսկ ո՞վ կպատասխանի ինչու՞է այդպես:
- Որովհետև գլոբուսի վրա տարբեր գույներ կան:
- Գերիշխող գույնը կապույտն է (օվկիանոսներ, ծովեր, գետեր, լճեր):
- Իսկ կապույտ գույնն ամենուրեք նու՞յն երանգն ունի:
- Այն ունի տարբեր երանգներ՝ բացից մինչև մուգ: Մուգ գույնը խորհրդանշում է ծովի, օվկիանոսի խորությունը, իսկ

որքան բաց է, այնքան մակերեսային է ծովը:

- Ինչպե՞ս են առաջացել ծովերն ու օվկիանոսները: Գիտնականները ենթադրում են, որ երկրագնդի ցամաքը խիտ ամպերով է ծածկված եղել, և երբ հողն սկսել է սառչել, ամպերն իջել են անձրևի տեսքով և մեծ քանակությամբ. ւսրդյունքում առաջացել են ջրագոյացումներ: Դրանք անվանվել են ծովեր, օվկիանոսներ, լճեր: Ծովի ջուրը լինում է աղի, իսկ գույնը՝ կապտականաչավուն:
- Ինչո՞վ է օգտակար ծովը:
- Ծովը մեզ զովացնում է: Նրա ափին մարդիկ հանգստանում են: Նավով կարելի է ճանապարհորդել երկրից երկիր, բեռնատար նավերով՝ տեղափոխել բեռներ: Օվկիանոսում և ծովում նավով կարելի է լողալ շաբաթներ, նույնիսկ ամիսներ:
- Երեխաներ, հեռվում կղզի է երևում, եկեք մեր նավով մոտենանք կղզուն և իմանանք, թե ինչպես՞ է այս ջրի մեջ գոյացել այն:
- Ծովի տակ գործող հրաբուխների ժայթքումից:
- Երեխաներ՛, եկեք մի քիչ խաղանք կղզու վրա, սնվենք, ջուր խմենք և շարունակենք ճանապարհորդել:
- Իսկ կարելի՞ է արդյոք ծովի ջուրը խմել:
- Ոչ, որովհետև այն աղի է, մեծ քանակությամբ տարբեր հանքային աղեր է պարունակում: Դրանք ծովի մեջ են հայտնվել այն գետերի ջրերի միջոցով, որոնք լցվում են տվյալ ծովի մեջ: Ծովի ջրով կարելի է կոկորդի ողողումներ կատարել, քանի որ այն բուժիչ է և օգտակար:
- Ի՞նչ եք կարծում՝ ինչպիսի՞ն է ծովի հատակը՝ հա՞րթ է, թե՝ խորդուբորդ:
- Այն հարթչէ:
- Ովքե՞ր են ծովի բնակիչները:

(Ձուկ, կետ, դելֆին, խեցգետին, միաժամանակ ցուցադրվում է մի քանի նկար:)

- Ինչպե՞ս են առաջանում ծովի ալիքները:

- Քամու ազդեցությունից: Եթե քամին թույլ է, ալիքները ցածր են, քամու ուժգնության դեպքում ծովի ալիքների բարձրությունը մեծանում է: Գիտնականների ուսումնասիրությունից պարզվել է, որ ամենաաժեղ ալիքի բարձրությունը հասել է 34 մետրի:

Պարապմանքի վերջում դաստիարակն առաջարկում է խաղալ որևէ խաղ: Խաղից հետո ամփոփում պարապմունքը:

Պարապմունք 9 (ավագ խումբ)
Որտե՞ղ են ձմեռում գորտերը

Պարապմունքի նպատակը՝ ամրապնդել երեխաների գիտելիքները տարվա տարբեր եղանակներին գորտի կյանքի պայմանների վերաբերյալ, ցուրտ եղանակին նրա օրգանիզմի հարմարվողականության, գորտի մարմնի կառուցվածքի, շարժումների և բազմացման մասին:

Ձևական պարագաներ՝ խաղալիք գորտ, գորտի նկար:

Պարապմունքի ընթացքը: Ցուցադրելով խաղալիք գորտը դաստիարակը երեխաներին հայտնում է, որ այսօր իրենց հյուրն է գորտը: Նա իմացել է, որ մենք հետաքրքրվել ենք իրենով, ծանոթ ենք և լավ ենք վերաբերվում այդ փոքրիկ ու անօգնական կենդանուն: Այս գորտին գտա ձեր հանդերձարանում: Նա եկել է հարևան մանկապարտեզից: Այնտեղ բնակվում էր խաղալրքների պահարանում, այլ խաղալրքների հարևանությամբ: Եկեք հյուրընկալենք նրան, թող մասնակցի մեր պարապմունքներին: Իսկ դուք կպատմեք այն ամենը, ինչ գիտեք նրա մասին: Երեխաներ՛, սկզբից պատմեք, թե որտե՞ղ են բնակվում գորտերը: Դուք պետք է շատ զեղեցիկ, պարզ խոսեք, որ նա ձեզ հասկանա: Հաշվի առեք, որ նա խաղալիք է և երբևիցե ոչինչ չի տեսել ու չգիտի: Դաստիարակը երեխաներին առաջարկում է պատմել, թե ինչով են սնվում գորտերը, ինչպես են շարժվում, ինչպես բռնում միջատներին, ումից են նրանք վախենում: Դաստիարակը ասում է, որ որոշ մարդիկ նրանց համարում են տհաճ և վտանգավոր, սակայն դա այդպես չէ: Գորտերը անօգնական են և անվտանգ: Նրանք սնվում են մոծակներով, իսկ նրանց ուտում են այլ կենդանիներ: Գորտերին պետք է լավ վերաբերվել և չնեղացնել:

Այնուհետև դաստիարակը շարունակում է պատմել, թե ինչպես ձվիկներից դուրս են գալիս գլխիկավոր, փոքրիկ էակներ, որոնք հետագայում մեծանում են և վերածվում գորտերի:

Դաստրարակն ընթերցում է գորտի մասին մի փոքրիկ պատմվածք: Այնուհետև հարցերի միջոցով ամրապնդում է ուսուցանված նյութը:

Հաջորդ օրը կերպարվեստի պարապմունքին առաջարկվում է նկարել գորտ:

Պարապմունք - վիկտորինա (ավագ խումբ)
Ձմեռային անտառ

Նպատակը՝ ամրապնդել երեխաների գիտելիքները անտառի, նրա բազմազանության, բնակիչների առանձնահատկությունների և փոխհարաբերությունների մասին, զարգացնել երեխաների վերլուծական մտածողությունը, տրամաբանությունը, հիշողությունը, ձևավորել սեր դեպի հայրենի բնությունը:

Ընթացքը՝ Երեխաները խմբասենյակ կամ դահլիճ են մտնում Չայկովսկու «Տարվա եղանակները» երաժշտության հնչյունների ներքո: Նրանք բաժանվում են 2 թիմի՝ նապաստակներ և սկյուռիկներ:

Դաստիարակն արտասանում է փոքրիկ քառյակ՝ բնության թեմայով:

- Ձմեռային անտառը շատ գաղտնիքներ է պարունակում իր մեջ: Այսօր մենք պետք է

բացահայտենք որոշ գաղտնիքներ և պատասխանենք բոլոր այն հարցերին, որոնք մեզ առաջադրելու է ձմեռային անտառը:

2 թիմերը երգերով ողջունում են միմյանց (ցանկսդի է, որ հնչի թիմի անվանը համապատասխանող երգ):

1) Թիմերի ավագների մրցույթ

- Անտառի ո՞ր բնակիչն է ձմռանը քնած անցկացնում:

2) Թիմերի մարզում

Ճիշտ պատասխանի դեպքում տրվում է մեկական միավոր (1 կոն): Դաստիարակը նախ հարցն ուղղում է «Նապաստակ», այնուհետև ,«Սկյուռ» թիմին: Սխալ պատասխանի դեպքում շարունակում է պատասխանել հաջորդ թիմը:

Հարցեր՝ «Նապաստակ» թիմին.

1. Որտե՞ղ է գտնվում փայտփորիկ թռչունի բույնը:
2. Ինչու՞ են ասում՝ գայլին ոտքերն են կերակրում:
3. Ո՞ր կենդանին է ձմռանը փոխում մորթու գույնը:

Հարցեր՝ «Սկյուռ» թիմին

1. Թռչունների համար ի՞նչն է վտանգավոր՝ սո՞վը, թե՞ ցուրտը:
2. Ո՞ր թռչուններն են ձմռանը մնում անտառում:
3. Ինչո՞վ է նապաստակը ձմռանը սնվում:

3) *Դաստիարակը հարցն ուղղում է 2 թիմերին:* Պատասխան ստանում է 1 թիմից: Չպատասխանելու դեպքում պատասխանում է հաջորդ թիմը: Ճիշտ պատասխանի դեպքում թիմն ստանում է 1 միավոր՝ կոնի խորհրդանիշով:

1. Անտառն առանց ինչի՞ չի լինում, ի՞նչ, նշաններով կարելի է որոշել ծառատեսակը (ցուցադրվում է համապատասխան նկար):
2. Ձմռանը ու՞մ կարելի է տեսնել անտառում:
3. Դաստիարակը ցուցադրում է տարբեր կենդանիների ոտնահետքերի նկարներ: Երեխաները պետք է գուշակեն, թե ո՞ր ոտնահետքը որ կենդանուն է պատկանում:
4. Անվանենք անտառի բնակիչներից արջի, կուղբի, թռչունների բնակավայրերը, ո՞րը ո՞րտեղ է ապրում:
5. Մնջախաղի միջոցով յուրաքանչյուր թիմ պետք է ներկայացնի որևէ կենդանու, որպեսզի հակառակորդ թիմը գուշակի (արջ, նապաստակ):
6. Դաստիարակը ցուցադրում է տարբեր կենդանիների նկարներ: Թիմերը պետք է անվանեն դրանք:
7. Դաստիարակը ցուցադրում է ծառի նկար, որի վրա ապլիկացիայի ձևով փակցված են մի քանի թռչուններ: Նա առաջարկում է երեխաներին՝ ծառի վրայից հանել այն թռչունին, որը չի բնակվում անտառում (ծիծեռնակը):
8. Դաստիարակը երեխաներին առաջադրում է անտառի և նրա բնակիչների մասին մի քանի հանելուկ:
9. Ինչպե՞ս օգնել ձմռանը անտառի բնակիչներին:

Վերջում դաստիարակն ամփոփում է պարապմունք - վիկտորինան:

ԽԱՂԸ ՈՐՊԵՍ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ

էկոլոգիական կրթության խնդիրների իրականացման հաջորդ կարևորագույն միջոցը խաղն է, որը նպաստում է երեխաների ճանաչողական, իմացական ունակությունների ձևավորմանն ու ընկալման խորացմանը: Այն համարվում է գործուն միջոց՝ ազատ և անբռնազբոս մթնոլորտում ձեռք բերած գիտելիքները կյանքում կիրառելու համար: էկոլոգիական բնույթի խաղերը պետք է կազմակերպվեն երեխայի և դաստիարակի համատեղ գործունեությամբ, ներդաշնակորեն: Դաստիարակը պետք է հանդես գա խաղընկերոջ դերում: Խաղալով հողի, ջրի, ավազի, ձյան հետ՝ երեխան ծանոթանում է դրանց հատկություններին, ձևին, գույնին, միջավայրի փոխազդեցության պարագայում՝ դրանցում կատարվող փոփոխություններին (ձյունը տաքությունից հալվում է, ջուրը սառնամանրքից վերածվում է սառույցի): Կենդանիների, ծաղիկների, բույսերի, մրգերի, բանջարեղենի մասին լոտոները հնարավորություն են ընձեռում ոչ միայն երեխայի ճանաչողական գիտելիքների ընդլայնման առումով, այլև օժանդակում են կատարելու համեմատություններ՝ ըստ ձևի ու կառուցվածքի: Գոյություն ունեցող բազմապիսի խաղերի շարքում կարևոր տեղ ունեն բնության առարկաների և երևույթների հետ կապված խաղերը: Հավաքելով տարբեր գույնի ծաղիկներ, տերևներ, ճյուղեր՝ երեխաները սիրում են դրանք փնջել, ծաղկանոց, բանջարանոց պատրաստել, հյուսել պսակ, երկար ժամանակ զբաղվել դրանցով: Նման խաղերում անսպառ են երեխաների հնարամտությունները, ստեղծագործական կարողությունները: Խաղալով բնական նյութերով՝ երեխաները միևնույն նյութն օգտագործում են զանազան նպատակներով: Այսպես՝ տերևներով խաղալիս մի դեպքում գլխարկ են հյուսում, երկրորդ անգամ՝ անկողին պատրաստում տիկնիկի համար, մի այլ դեպքում՝ տերևներն օգտագործում կարկանդակներ թխելու համար: էականն այն է, որ միևնույն նյութի հետ երեխան շփվում է տարբեր առիթներով և բազմակողմանիորեն ծանոթանում դրա առանձնահատկություններին: Հատկանշական են ազատ էկոլոգիական բնույթի խաղերը, որոնց ընթացքում երեխան շրջակա միջավայրի մասին ձեռք բերած գիտելիքները վերարտադրում է յուրովի, և օգտագործում անհրաժեշտության դեպքում: Նման խաղերը երեխաների մեջ ձևավորում են շրջակա միջավայրի նկատմամբ խնայողական, հոգատար վերաբերմունք: Դրանք կարող են ունենալ տևական բնույթ:



Խմբասենյակի պատին փակցվում է սպիտակ մեծ թուղթ, կողքին դրվում են գունավոր մատիտներ, ֆլոմաստերներ: Թղթի կենտրոնական հատվածում նկարում կամ փակցնում են մարդու պատկեր: Երեխաներին առաջադրվում է նկարել կամ փակցնել մարդու կյանքի համար

կենսական նշանակություն ունեցող առարկաներ, երևույթներ, իրեր պատկերող նկարներ և դրանք սլաքով միացնել միմյանց, կամ թղթի կենտրոնում գտնվող մարդու նկարին Դա հնարավորություն կստեղծի երեխաներին գտնելու , ճանաչելու մարդու և նրա շրջակա միջավայրի միջև գոյություն ունեցող կապը, կյանքի գոյության համար կենսական նշանակություն ունեցող գործոններն ու երևույթները, հասկանալու գոյության պայմանավորվածության փոխկապակցվածությունը մարդու և միմյանց հետ: Յուրաքանչյուր երեխա ցանկացած պահի կարող է մոտենալ թղթին, կատարել առաջադրանքը:

Խաղի ընթացքը յուրօրինակ է և տևական: Այն կարող է տևել 1 շաբաթ: Վերջում դաստիարակն ամփոփում է մեկ անգամ ևս կենտրոնանալով նկարի վրա, ցուցադրելով այն կարևորագույն գործոնները, երևույթները, որոնք անհրաժեշտ են մարդու գոյության համար և կազմում են շրջակա միջավայրը: Այդ ամենը ձևավորում են հոգատարություն և ճիշտ վերաբերմունք:



- Սև - գետի խոր կեղտոտ հատված , քայլի բաց թողում
- Կարմիր - գետի կեղտոտ հատված, վերադարձ
- Գետի արագ հոսք - վերադառնալ, «Արաքս» գետ
- Կապույտ - մաքուր հատված - քայլ առաջ

Խաղի կանոնները: Խաղամ են երեքից չորս երեխաներ: Յուրաքանչյուրը պետք է ունենա խաղանիշ (խաղաքար) և զառ: Խաղն սկսվում է գետի վրա նշված սլաքով: Այնտեղից երեխաներն սկսում են ճանապարհորդությունը և հասնելու են մինչև ծով: Խաղի նպատակն է ծովին շուտ հասնելը: Յուրաքանչյուր խաղացող պետք է կարողանա հաղթահարել ջրային ճանապարհի արգելքները և գետի աղտոտված հատվածը: Կատարելով ջրային ճանապարհորդություն երեխաները ծանոթանում են այն երևույթներին, որոնք հանդիսանում են ջրի աղտոտվածության պատճառները:

Մանկապարտեզում ստեղծագործական խաղերից զատ կազմակերպվում են նաև դիդակտիկ, շարժական և այլ բնույթի խաղեր, որոնք երեխաներին էկոլոգիական խնդիրներին ծանոթացնելու, ինչպես նաև բույսերի, կենդանիների, բնության երևույթների մասին երեխաների պատկերացումները ճշտելու, ամրապնդելու, լրացնելու արդյունավետ և կարևոր միջոցներ են:

Կանգնիր ծառի մոտ
(կրտսեր խումբ)

Նպատակը՝ ճշտել և ամրապնդել ծառերը այլ տեսակի բույսերից զանազանելու կարողությունը, զարգացնել ուշադրությունը:

Դաստիարակը համախմբում է երեխաներին իր շուրջը և ներկայացնում խաղի պայմանը: Նրա երկու ծափերը կամ թմբուկի վրա հարվածը լսելով՝ երեխաները խառը պետք է վազեն հրապարակում: 2 ծափ լսելուն պես պետք է վազեն և կանգնեն ծառի տակ:

Խաղ՝ ծաղիկներով
(կրտսեր խումբ)

Նպատակը՝ ձևավորել ծաղիկների ճանաչողության ունակություններ, սովորեցնել համապատասխան նկարի միջոցով գտնել տվյալ ծաղիկը: Խաղն անցկացնելու համար պետք է ունենալ 2-3 թարմ ծաղկատեսակ, նաև նույն ծաղկատեսակներով նկարված քարտեր: Երեխաները նստում են շրջանսսձև: Սեղանի վրա դրվում է ծաղկեփունջը: Քարտերը դաստիարակի մոտ են: Նա երեխաներին ցույց է տալիս որևէ քարտ, կանչում երեխաներից մեկին և առաջարկում իրեն տալ նույնպիսի ծաղիկ: Երեխան ծաղկեփնջի մեջ պետք է գտնի համապատասխան ծաղիկը և տա դաստիարակին:

Ո՞վ ինչ ձայն է հանում
(կրտսեր խումբ)

Նպատակը՝ երեխաների մեջ ամրապնդել կենդանիներին ձայնի միջոցով զանազանելու կարողությունը: Խաղի համար անհրաժեշտ է ունենալ համապատասխան կենդանիների նկարներ կամ դրանք պատկերող նկարներ և խաղալիք ավտոմեքենա: Երեխաները նստում են կիսաշրջանաձև: Դաստիարակը հայտնում է, որ իրենց հյուր է եկել կատուն: Երեխաները կատվի նման մլավում են և ողջունում իրենց հյուրին: Կատուն նստում է, նրան է մոտենում շնիկը: Երեխաները սկսում են հաչել ույնպես, ինչպես շնիկը: Շարունակաբար գալիս են բոլոր կենդանիները և երեխաները նրանց նմանակելով՝ ողջունում են բոլորին: Խաղի վերջում, երբ նրանց է մոտենում ույտոմեքենան, բոլոր կենդանիները փախչում են:

Իմացիր՝ ի՞նչ կա պարկում
(միջին խումբ)

Նպատակը՝ ձևավորել ճանաչողական գիտելիքներ բանջարեղենի մասին:

Դաստիարակը պարկի մեջ լցնում է բանջարեղեն՝ լոլիկ, գազար, սոխ, պղպեղ: Երեխաները մոտենում են, պարկից հանում որևէ բանջարեղեն և անվանում այն:

Կարմիր, կանաչ , դեղին տերևներ
(միջին խումբ)

Նպատակը՝ երեխաների մեջ ամրապնդել դիտումներից ստացած տպավորություններն աշնան առանձնահատկությունների վերաբերյալ: Խաղը պետք է կազմակերպել բակում: Դաստիարակը երեխաներին համախմբելով իր շուրջը՝ ուշադրությունը հրավիրում է ծառերի կամ

թփերի աշնանային տերևների վրա և հիշեցնում դրանց գույնը: Այնուհետև երեխաները բաժանվում են 3 խմբի: Յուրաքանչյուր խմբի երեխաներին տրվում են միագույն տերևներ՝ կանաչ, կարմիր, դեղին: Երեխաներն գբոսնում են: Այդ ընթացքում մեկ ծափի դեպքում դասի դաստիարակն է վազում կանաչ տերևներ ունեցող երեխաների խումբը, երկու ծափի դեպքում՝ դեղինը, երրորդի դեպքում՝ կարմիր տերևներ ունեցողները: Խաղի ավարտին բոլոր երեխաները համախմբվում են դաստիարակի շուրջը, և միասին որևէ աշնանային երգ կատարում և հավաքում աշնանային տերևներ:

Քամին և տերևները

(միջին խումբ)

Նպատակը՝ ամրապնդել գբոսանքների, էքսկուրսիաների ժամանակ ստացած տպավորություններն աշնանային երևույթներից՝ քամու, տերևաթափի մասին: Դաստիարակը համախմբելով երեխաներին իր շուրջը՝ բացատրում է խաղի պայմանները «Քամին փչեց, և տերևները պտտվեցին» հրահանգի ժամանակ երեխաները պտտվում են և ասում՝ ու՜ ու՜ «Տերևները թափվեցին գետնին» հրահանգի ժամանակ երեխաները կանգ են առնում և կքանստում: «Քամին տերևները տարավ» հրահանգի դեպքում երեխաները կանգնում են և վազվզում: «Հավաքեմ տերևները և դրանցից պսակ հյուսեմ» հրահանգի դեպքում երեխաները շրջան են բռնում և աշնանը նվիրված կամ թեմատիկ որևէ այլ երգ կատարում:

Իմացիր՝ ի՞նչ ծաղիկ է

(ավագ խումբ)

Դաստիարակը երեխաներին տալիս է մեկական ծաղիկ և ներկայացնում ծաղկին բնորոշ հատկանիշներ կամ առաջարկում որևէ հանելուկ: Երեխաները պետք է գուշակեն և որոշեն, թե որ ծաղկին է վերաբերում հանելուկը կամ ներկայացված հատկանիշները, ապա ցույց տան դրանք:

Իմացիր՝ ի՞նչ բույսի տերև է

(ավագ խումբ)

Նպատակը՝ ճշտել երեխաների իմացությունը բույսի ճանաչողության առումով: Դաստիակը երեխաներին բաժանում է բանջարանոցային տարբեր տերևներ կամ դրանց նկարները: Երեխաները պետք է գուշակեն, թե որ բույսին է պատկանում տվյալ տերևը, և ցույց տան կամ տվյալ բույսը, կամ դրա նկարը: Նմանատիպ խաղեր կարելի է անցկացնել մրգերով, բանջարեղենով, ծաղիկների տերևներով:

Կկուն և ուրիշ թռչուններ

(ավագ խումբ)

Նպատակը՝ այս խաղի միջոցով երեխաները տեղեկանում են, որ կկուն իր համար բույն չի հյուսում: Խաղացող բոլոր երեխաները հանդես են գալիս որպես թռչուններ և ունենում են իրենց բները: Վերջիններս կարող են պատկերվել կա՛մ օղակներով, կա՛մ աթոռակներով: Դաստիարակի «քըշ» խոսքի վրա բոլոր թռչունները դուրս են գալիս բներից և սկսում թռչկոտել, թափահարել թևերը, իրենց շարժումներով նմանվել թռչուններին: Թռչկոտում է նաև կկուն: Դաստիարակի «տուն» բառի վրա բոլոր թռչունները, ինչպես նաև կկուն, շտապում են մտնել իրենց բները: Ով չի հասցնում բույնը գրավել, կոչվում է «անտուն կկու», և խաղը շարունակվում է:

Օդում, ջրում, ցամաքում
(ավագ խումբ)

Երեխաները կանգնում են շրջանածև: Դաստիարակը տալիս է որևէ կենդանու (թռչունի) անուն: Երեխաները պետք է ասեն, թե այդ 3 միջավայրերից որի մեջ է ապրում տվյալ կենդանին: Ճիշտ պատասխանից հետո երեխան ներկայացնում է տվյալ կենդանու ապրելակերպի մասին որոշ տեղեկություններ, պատմում դրանց օգտակարության մասին:

Բանջարանոցում, այգում, դաշտում
(ավագ խումբ)

Նպատակն է՝ խորացնել տվյալ կենդանու կամ բույսի ապրելու կամ աճելու միջավայրի վերաբերյալ գիտելիքները և ամրապնդել «բանջարանոց», «այգի», «դաշտ» հասկացությունները:

Դաստիարակն անվանում է երեխաներին ծանոթ որևէ բույս: Երեխան պետք է նշի, թե որտեղ է աճում դա: Կարելի է խաղալ հակառակ ձևով: Դաստիարակն ասում է բանջարանոց, այգի, դաշտ: Երեխան պետք է պատասխանի, թե նշված տեղում ինչ է աճում:

Գտիր ծառը
(ավագ խումբ)

Նպատակը՝ ամրապնդել ծանոթ ծառատեսակների վերաբերյալ երեխաների ճանաչողությունը՝ արտաքին բնորոշ հատկանիշների նկարագրման միջոցով:

Դաստիարակը նկարագրում է ծառի արտաքին հատկանիշները՝ բնի, ճյուղերի մեծությունը, տերևների ձևը, գույնը, պտուղը: Երեխաները պետք է գուշակեն և անվանեն ծառատեսակը: Խաղը կարելի է անցկացնել բակում կամ նկարներով՝ խմբասենյակում:

Հատկանշական և ուսանելի են ավազով ու ջրով խաղերը: Այդ նպատակով անհրաժեշտ է խմբասենյակում ունենալ ավազով, ջրով խաղալու առանձնացված խաղանկյուն: Այն կարելի է ստեղծել լվացարանների հարևանությամբ, հատուկ սեղանների վրա տեղավորված ջրով և ավազով լցված մեծ թասերի միջոցով: Ամռան ամիսներին ադ խաղանկյունը կարելի է տեղափոխել բակ: Ավազի և ջրի սեղանը պետք է լինի միջին հասակի երեխայի գոտկատեղի բարձրությանը համապատասխան: Ջուրը պետք է փոխվի երկու-երեք օրը մեկ, որպեսզի կանխվի մանրէների աճը: Ավազի և ջրի սեղանների մոտ անհրաժեշտ է դնել տարբեր առարկաներ, նյութեր, որոնցով խաղալիս երեխաները կարողանան կատարել որոշ հետազոտություններ և նոր հայտնություններ՝ ծառի տերևներ, սառույցի կտորներ, ծառի կեղև, թղթի նավակ, ծողեր, քարեր, խցաններ, տիկնիկներ ծագարներ, սպունգ, օճառ, մաղ և այլն: Այս նյութերը կարելի է պահպանել ավազի և ջրի սեղանի տակ գտնվող հատուկ արկղերում:

Այս խաղանկյուններում խաղալիս երեխաները նույնքան քանակությամբ ավազ և ջուր տարբեր տարողության անոթների մեջ լցնելով՝ կարող են կատարել համեմատություն, թե ո՞ր անոթն է ավելի շատ նյութ պարունակում:

Կատարել համեմատություն՝ թաց և չոր ավազի քաշի միջև:

Ջրի մեջ սուզելով տարբեր առարկաներ՝ տեսակավորել և պատճառաբանել առարկաների՝ ջրի մեջ սուզվելու հանգամանքը:

Չոր ավազի մեջ ավելացնելով ջուր կամ ջրի մեջ գույներ խառնելով՝ նկատել ջրի փոփոխությունը:

Ջրի մեջ կատարել տարբեր նյութերի լուծում (աղ, շաքար, ալյուր, ծեթ, քար) և տեսնել լուծվող ու չլուծվող նյութերի տարբերությունը:

Օճառաջրից մեծ պղպջակներ պատրաստելով՝ հայտնաբերել դրանցում հավաքված օդի պայթման պատճառը:

Կսուզվի՞, թե՞ կլողա

(ավագ խումբ)

Նպատակը՝ ստուգել երեխաների իմացությունը առարկաների լողալու կամ սուզվելու հատկության վերաբերյալ:

Երեխաներին հանձնարարվում է հավաքել բազմազան առարկաներ՝ քարեր, կոներ, տաշեղներ, տերևներ: Առաջարկվում է հավաքած առարկաները դասավորել 2 խմբով՝ սուզվող և չսուզվող: Երեխան առարկաները առանձին-առանձին գցում է ջրի մեջ և ստուգում իր կատարածի ճշտությունը:

« Ով որտեղ է ապրում»

Խաղի նպատակը - Երեխաներին պատկերացում տալ կենդանական աշխարհի տարբեր ներկայացուցիչների օրգանիզմի և գոյատևման համար համապատասխան միջավայրի կարևորության և կենսական նշանակություն ունեցող անհրաժեշտ գործոնների վերաբերյալ:

Անհրաժեշտ պարագաներ - Ստվարաթղթի վրա նկարված, կամ կտրատված նկարներով փաքցված տարբեր միջավայրներ՝ ծով, անտառ, երկինք՝ ամպերով, անապատ, սառուցյալ օվիանոսը տեսարաններով և կենդանական աշխարհի տարբեր ներկայացուցիչներ պատկերող նկարներ:

Առաջին տարբերակ՝

Խաղի ընթացքը - Առաջարկել երեխաներին նստել սեղանների շուրջ : Սեղանների վրա նախապես դասավորել տարբեր միջավայրներ պատկերող նկարները և հանձնարարել անվանել նկարների վրա պատկերված կենդանուն ճշգրիտ՝ ըստ համապատասխան բնակավայրի:

Ավագ խմբերում կարելի է բարդացնել խաղի պահանջը և երեխաներին առաջարկել անվանել և նկարագրել կենդանուն, ինչպես նաև այն միջավայրը, որում բնակվում է տվյալ կենդանին:Պարզաբանել նկարը:

Երկրորդ տարբերակ՝

Սեղաններին դնել տարբեր միջավայրներ պատկերող նկարներ և փոքրիկ արկղի մեջ լցված տարբեր միջավայրներում բնակվող բազմատեսակ կենդանիներ պատկերող նկարներ: Առաջարկել ուշադիր լսել դաստիարակի կողմից ընտրված որևէ միջավայրի նկարագրությունը և հանձնարարել արկղի միջից գտնել և տեղադրել կենդանիների նկարները ըստ բնակության վայրի:

Խաղի ավարտից հետո հաշվել երեխաների տեղադրած նկարների քանակը, պարզել այն, ի՞նչ սովորեցին նրանք:

«Ինչը որտեղ է աճում» խաղը կարելի է երեխաների հետ կազմակերպելնույն պահանջներով և ընթացքով այնպես, ինչպես « Ով որտեղ է բնակվում» խաղը՝ միայն պետք է ներկայացվի համապատասխան միջավայր՝ տարբեր բանջարեղեններ, պտղատու ծառեր, պարտեզ, ծաղիկներ, անտառ, դաշտ,դաշտային ծաղիկներ կամ ցորենի հասկ պատկերող նկարներ և այլն:

« Ճանաչի՛ր և անվանի՛ր կենդանուն»

Խաղի նպատակը –Ամրապնդել երեխաների ճանաչողական ունակությունները և գիտելիքները տարբեր կենդանիների մասին, ուրվագծով ճանաչել և անվանել կենդանիներին:

Անհրաժեշտ պարագաներ՝ տվերային թատրոնի համար համապատասխան շիրմա և թղթից կտրատված տարբեր կենդանիների պատկերների ուրվագծեր, կամ թղթից տարբեր կենդանիների ուրվագիծ՝ կտրված և ստվարաթղթի վրա փակցված քարտեր:

Առաջին տարբերակ՝

Խաղի ընթացքը - Երեխաները նստում են սեղանների շուրջը, դաստիարակը ստվերային թատրոնի շիրմայի միջոցով երեխաներին ցուցադրում է տարբեր կենդանիների պատկերները, իսկ երեխաները ասում են այդ կենդանիների անունները և պատմում դրանց մասին / կարելի է ներկայացնել տվյալ կենդանու մարմնի մասերը/, պատմել նրանց օգտակարության, կյանքի համար անհրաժեշտ միջավայրի՝ սննդի, օդի, ջրի և այլնի մասին, նայած թե դաստիարակը ինչ խնդիր է դնում խաղի կազամակերպման ժամանակ:

Երկրորդ տարբերակ՝

Երեխաները նստում են սեղանների շուրջ: Դաստիարակը բաժանում է կենդանիների ուրվագծերով պատկերված քարտերը՝ երեխաներին առաջարկում անվանել իր քարտի վրա պատկերված կենդանուն և պատմել նրա մասին:

« Արև և անձրև »

Խաղի նպատակը - Երեխաներին ծանոթացնել բնության երևույթներին՝ անձրև, քամի, կենտրոնացնել երեխաների ուշադրությունը և զարգացնել շարժունակությունը:

Անհրաժեշտ պարագաներ ՝ կապուտ, կարմիր, դեղին գույնի կավիճներ, արևի, անձրևի և քամու սիմվոլիկ պատկերներով գլխարկներ:

Խաղի ընթացքը - Դաստիարակը երեք երեխաների առանձնացնում է և բաշխում արևի, քամու, անձրևի դերերը: Երեխաները կազմում են շրջան և քայլելով արտասանում քառյակը:

Արև արև եկ եկ
Ձիգի քարին վեր եկ
Մութ մութ ամպեր հեռացեք
Արևին ճամփա բացեք:

Արտասանելուց հետո ցրված քայլում են դահլիճով:Դաստիարակի -անձրև,- հրահանգից հետո երեխաները պետք է հավաքվեն կարմիր գույնի կավիճով գծած շրջանի մեջ, իսկ արևի դեպքում դեղին շրջանի, իսկ քամու դեպքում կապույտ շրջանի մեջ:

Սխալվող երեխաները խաղից դուրս են գալիս:Վերջին երեք երեխաները հաղթող են ճանաչվում:

«Բռնիր թիթեռին»

Խաղի նպատակը - Ամրապնդել երեխաների գիտելիքները թիթեռների մասին: Երեխաների հետ ճշտել նրանց կառուցվածքի, գունային երանգների, օգտակարության՝ որպես թիթեռների պաշտպանվելու կարևոր բնական հարմարանքներ:

Անհրաժեշտ պարագաներ՝ Փայտի ձող, ծայրին կապած 25-30 սմ թել և ստվարաթղթից կտրված, տարբեր գույներով և ձևավորումով՝ ներկած թիթեռնիկներ,որոնք հնարավոր լինի կապել թելի ծայրին:

Խաղի ընթացքը - Երեխաները կանգնում են շրջանաձև: Դաստիարակը մոտենում է երեխաներին, փայտը որի ծայրին կախված է թիթեռը, պահում է երեխաներից մեկի գլխավերևում /ոչ շատ բարձր/ և առաջարկվում է՝ ով մոտ է գտնվում թիթեռին, բռնի: Այն երեխան՝ ով բռնում է թիթեռը, ցույց է տալիս և անվանում է տվյալ թիթեռի մարմնի մասերը, ներկայացնում է գույները և պատմում նրանց կյանքի մասին: Դաստիարակը հերթականությամբ փոփոխում է թիթեռներին.

Նույն խաղը կարելի է կազմակերպել մեղուների , բզեզների, գատիկների և այլնի համար:

« Թռչունները բներում»

Խաղի նպատակը - Ամրապնդել երեխաների պատկերացումները թռչունների մասին, զարգացնել երեխաների ուշադրությունն ու շարժունակությունը:

Անհրաժեշտ պարագաներ՝ օղակներ, որոնք հանդիսանալու են նրանց բները:

Խաղի ընթացքը – Յուրաքանչյուր երեխա ներկայացնում է մեկ թռչուն : Կարելի է նրանց բաժանել խմբերի և թռչունների յուրաքանչյուր խումբ կունենա մեկ օղակ - բուն, կամ առանձին -առանձին յուրաքանչյուր երեխա -թռչուն կունենա մեկ բուն: Երեխաները տեղավորվում են իրենց «բներում», ձեռքերը բարձրացնում են և բռնում ուսերը: Դաստիարակի հրահանգից հետո, երբ նա ասում է. « երկնքում արևն է փայլում, թռչունները դուրս են եկել բներից»: Երեխաները, որոնք ներկայացնում են թռչուններ՝ դուրս են գալիս իրենց բներից և թևերը բացելով, թափահարելով ցրվում են վազվզում դահլիճով մեկ, այնուհետև կքանստում են և մատով հարվածում հատակին՝ տպավորություն ստեղծելով, իբր կտցահարում են ցորենի հատիկները:

Երբ դաստիարակը ասում է,- «անձրև է գալիս», թռչունները արագ մտնում են բները: Ով չի հասցնում կամ սխալ բույն է մտնում՝ դուրս է գալիս խաղից:

Գտիր ծագուկին՝

Դաստիարակը խավատախտակի աջ հատվածում փակցնում է տարբեր կենդանիների նկարներ՝ կատու, կով, ճագար, առյուծ, արջ, ձի,այծ և այլն, առաջարկում է երեխաներին հերթականությամբ մոտենալ գրատախտկին և արկղի միջից գտնել տվյալ կենդանիների ծագուկների նկարները՝ համապատասխանաբար տեղադրել յուրաքանչյուրն իր մոր նկարի հարևանությամբ, միաժամանակ անվանել և պատմել նրանց մասին:

Թվարկիր ծաղիկների անուններ

Երեխաները նստում են շրջանաձև դասավորված աթոռակների վրա: Նրանցից մեկը մնում է կանգնած շրջանից դուրս: Որևէ փափուկ խաղալիք է տրվում նստած երեխաներին և առաջարկվում է հերթականությամբ փոխանցել միմյանց՝ աջից ձախ: Շրջանից դուրս կանգնած երեխան կամ դաստիարակը առաջարկում է խաղալիքը բռնած երեխային անվանել հինգ ծաղկի

անուն: Մինչև խաղալիքը մի լրիվ պտույտ կկատարի շրջանով մեկ և կրկին կհասնի առաջին երեխային, ումից որ սկսվել է խաղալիքի փոխանցումը, շրջանի կենտրոնում կանգնած խաղացողը պետք է անվանի հինգ ծաղկի անուն / կարելի է հաջորդ անգամ փոխել առաջադրանքը, օրինակ անվանել մորթի ունեցող հինգ կենդանու անուն, կամ հինգ ընտանի կենդանու, թռչունների, մրգերի, բանջարեղենի և այլ անուններ/:

Շրջանի ներսում կանգնած երեխան՝ մինչև թվարկում է առաջադրված առաջադրանքի հինգ անվանումը, փափուկ խաղալիքը փոխանցվում է շրջանով: Եթե մինչև խաղալիքի մեկ լրիվ պտույտը խաղակից երեխան չի հաջցնում թվարկել տրված առաջադրանքի հինգ անվանումները, ապա նա դուրս է մնում խաղից: Շրջան է մտնում նստածներից մեկը: Աթոռակների թիվը նվազում է, շրջանը փոքրանում, տրված առաջադրանքի կատարումը դժվարանում:

ԱՇԽԱՏԱՆՔԸ ՈՐՊԵՍ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ

Մանկավարժական գործընթացում խաղը սերտորեն միահյուսված է աշխատանքային գործունեության հետ: Բնության մեջ և բնության հետ երեխայի կատարած աշխատանքը նրան առաջադրում է նպատակ և տալիս արդյունքին հասնելու հնարավորություն: Շրջակա միջավայրից ստացած տեղեկատվությունը ճանաչողության խթանիչ է դառնում այն դեպքում, երբ մտածելու գործընթացին օգնում են ձեռքերը, և երեխան աշխատանքում ձգտում է գտնել իրեն հետաքրքրող հարցերի պատասխանները: Խնամելով բույսը, կենդանուն՝ երեխան կատարում է որոշակի աշխատանք, որի ընթացքում ձևավորվում են որոշակի գիտելիքներ, աշխատանքային հմտություններ, բնության նկատմամբ բարյացակամության և հոգատարության գեղեցիկ զգացմունքներ: Նման աշխատանքները նախադպրոցական հիմնարկներում կարելի է կազմակերպել մանկապարտեզի հողամասում (բանջարանոց, պարտեզ) և խմբասենյակում (բնության և կենդանի անկյուններ):

Մանկապարտեզի բակը պետք է լինի կանաչապատ և հարմարավետ՝ բույսերի տնկման և խնամքի աշխատանքներ իրականացնելու համար: Յուրաքանչյուր խումբ, սկսած փոքրերի 2-րդ խմբից, պետք է ունենա իր առանձնացված հողաբաժինը, որում երեխաները աճեցնելու են ծաղիկներ, բանջարեղեն: Բանջարեղենի տնկման համար հատկացված հողաբաժնում պատրաստվում է 1-3 մարգ: Փոքրերի և միջին խմբի երեխաների հետ հիմնականում կազմակերպվում են դիտումներ և տրվում առանձին հանձնարարություններ՝ դաստիարակի հետ միասին խնամելու տնկած բույսը: Ավագ խմբերի երեխաները աշխատում են առանձին ենթախմբերով և ինքնուրույնաբար: Դաստիարակի հետ կատարում են բույսի տնկման և խնամքի որոշակի աշխատանքներ: Երեխան, աշխատելով հողաբաժնում, տեսնում է իր աշխատանքի արդյունքը, գնահատում այն, կարևորում դրա կենսական նշանակությունը: Աշխատանքային գործիքները պետք է լինեն ոչ մեծ, հարմարավետ: Խմբասենյակում բնության հետ ամենօրյա շփումները բնության անկյունում իրականացվող աշխատանքներն են: Ավագ և նախադպրոցական խմբերում բույսերի ու կենդանիների խնամքը կատարում են օրվա բնության անկյան հերթապահները: Երեխաները սովորում են ուշադիր զննել բույսը, ջրել և ջրցանել հողը, միաժամանակ նկատել բույսի աճի փոփոխությունը: Բնության անկյան համար անհրաժեշտ է ընտրել շուտ աճող ծաղիկներ, որպեսզի երեխաները նկատեն բույսի աճը, տեսնեն ծաղկումը և կատարվող փոփոխությունը: Փոքրերի խմբում բնության անկյան համար ընտրում են մեծ և հաստ տերևներով ծաղկատեսակներ, իսկ ավագ խմբերում՝ այնպիսի առանձնահատկություններով ծաղկատեսակներ, որ հնարավոր լինի նմանեցնել, ընդհանրացնել և առանձնացնել միմյանցից: Խմբասենյակում բնության և կենդանի անկյունը պետք է ստեղծել առավել լուսավոր հատվածում

և այնպես, որ հարմար լինի երեխաների ամենօրյա դիտումների և խնամքի համար: Բույսերի տեղաբաշխման ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել լույսի, ստվերի, խոնավության գործոնները: Բնության անկյունը ձևավորվում է բնական նյութերով, կոճղերով և այլն: Բնության անկյունում ակվարիումների, թռչնավանդակների, տերարիումների առկայությունը երեխաներին առաջադրում է կենդանիների, նրանց սննդի, ջրի, տեղի, խնամքի մասին հոգալու խնդիրներ: Կենդանիների մասին հոգ տանելն ու նրանց նկատմամբ հարգալից վերաբերմունքը դառնում են երեխայի ամենօրյա աշխատանքը և պատճառում մեծ բավականություն: Կենդանիների մասին ձևավորվում են իմացական որոշակի գիտելիքներ, պատասխանատվության զգացում և բարյացակամություն:

Խորհուրդ է տրվում կրտսեր և միջին խմբերի բնության անկյունում աճեցնել.

1. ֆիկուս
2. համերաշխ յոթնյակ
3. կլիվիա
4. սենյակային խաղող
5. կլիվիա
6. բեգոնիա

Ավագ խմբերի բնության անկյուններում աճեցնել նախորդ խմբերում աճեցրած ծաղկատեսակներին ավելացնել են հետևյալ տեսակները

1. քարաբեկ
2. տրադեսկանցիա
3. ալոե
4. կակտուս
5. խորդենի
6. մանուշակ
7. պոիմուլդա (գարնանածաղիկ)
8. պատատուկ (պլուչ)
9. շքանարգիզ
10. քլորոֆիտում
11. ֆուքսիա
12. հինածաղիկ
13. պտեր
14. կոլեուս

Օձաբույս
Համերաշխյոթնյակ (Aspidistra, аспидистра)

Օձաբույսը կամ համերաշխ յոթնյակը պատկանում է շուշանազգիների ընտանիքին: Հայրենիքը Հարավային ճապոնիայի և Չինաստանի մերձարևադարձային անտառներն են: Կոճղարմատի վրա աճում են երկար կոթուններով մուգ կանաչ գույնի, կոշտ, վահանաձև տերևները: Օձաբույսը ծաղկում է սովորաբար ձմռան ամիսներին: Ծաղիկները դուրս են գալիս կոճղարմատի վերևի հատվածում: Սենյակային, ծաղկաբույսերից ամենադիմացկունն է: Նա իր գոյությունը կարող է պահպանել ինչպես լուսավոր, այնպես էլ ստվերոտ վայրերում: Այն պետք է աճեցնել մեծ ամաններում: Հարկավոր է ամռանը ջրել հաճախակի և առատ, աշնանը՝ ուշ-ուշ, ձմռանը՝ հազվադեպ: Շաբաթական 1-2 անգամ անհրաժեշտ է դրսից ջրով լվանալ տերևները: Ձմռանը նախընտրելի է 6-8 ջերմությունը: 15–ից բարձրի դեպքում ամեն առավոտ անհրաժեշտ է տերևները ցողել սառը ջրով:

Ֆիկուս (Ficus, Фикус)

Պատկանում է թթազգիների ընտանիքին: Հայրենիքը Արևելյան Հնդկաստանն է: Ֆիկուսը հայրենիքում աճում է որպես հսկա մի ծառ, որի բարձրությունը հասնում է 30 մետրի: Տերևաթիթեղները ունեն 1մ երկարություն և 50-60 սմ լայնություն: Դրանք ճյուղերի վրա դասավորված են հերթադիր: Ֆիկուսի երկարակեցությունը հազարամյակների է հասնում: Այն պահանջկոտ չէ ինչպես լույսի, այնպես էլ ջերմության նկատմամբ: Պետք է պահպանել արևի ճառագայթների բացասական ազդեցությունից (այրումից): Խիստ դյուրազգաց է միջանցիկ քամու հանդեպ: Աճման բուռն շրջանում (գարուն) անհրաժեշտ է առատ ջրել և ցողել սենյակային ջերմություն ունեցող ջրով, աշնանը՝ աստիճանաբար նվազեցնել ջրելը, իսկ ձմռանը՝ ջրել հազվադեպ: Ֆիկուսը բազմացվում է տերևների ընձյուղների կտրոններով, որոնք դրվում են ջրի մեջ,արմատակալելուց հետո՝ տնկվում:

Բեգոնիա (Begonia, Бегония)

Պատկանում է բեգոնիաների ընտանիքին: Հայրենիքը Արևադարձային Ամերիկան է, Արևելյան Հնդկաստանը, Աֆրիկան, Չինաստանը: Բեգոնիաների տեսակների թիվը հասնում է շուրջ 500-ի: Բեգոնիաներն իրենց առատ ու փարթամ տերևների բազմազանության, բազմերանգության, առատ ծաղկման ու այս շրջանի տևականության շնորհիվ սենյակային ամենատարածված ծաղկատեսակներից են: Բեգոնիաների տերևները քիչ ծռված են, կտրտված եզրերով: Դրանց տեսակները միմյանցից տարբերվում են ծաղիկների և տերևների գույներով ու երանգներով: Գարնանը և ամռանը , ջրում են առատ, իսկ ցուրտ եղանակին՝ պակասեցնում: ծաղկաբույսը ներդաշնակ աճեցնելու նպատակով շաբաթվա ընթացքում 1-2 անգամ ծաղկաթաղանթների դիրքը փոխում են լույսի հանդեպ:

Ծաղկման շրջանը պայմանավորված է կտրոնների արմատակալեցման ժամանակաշրջանով: Բազմացվում է կտրոնների արմատախրման եղանակով:

Արագլախոտ կամ երեմ
(Pelagonium, Пелагониум**)**

Պատկանում է խորդենազգիների ընտանիքին: Հայրենիքը Հարավային Աֆրիկան է, ուր աճում է թփուտների ձևով և խիտ մացառներ կազմում: Գոյություն ունի շուրջ 200 տեսակ արագլախոտ: Ունի ուղղաձև ցողուն: Տերևները կոշտ են, փոթավորված: Խոշոր ծաղիկները, որոնք ունեն սպիտակ, վարդագույն, կարմիր երանգավորումներ, կազմում են հովանոցաձև ծաղկեփունջ: Ծաղկում են առատ: Արագլախոտը լուսասեր է, ծաղկման տևողությունը՝ երկար: Խոնավության պահանջը աճման և հանգստի շրջանում տարբեր է: Վաղ գարնանից անհրաժեշտ է ավելացնել խոնավությունը, իսկ ձմռանը՝ հոգ տանել, որ ուղղակի պահպանվի հողի խոնավությունը: Բազմանում է կտրոններով:

Բաղեղ (Hedera helix, Плющ)

Բաղեղը սողացող և կառչող մշտադալար թուփ է՝ օժտված գոյության 500-ամյա կենսունակությամբ: Պատկանում է արալիաների ընտանրքին: Հայրենիքը Հարավային և Միջին Եվրոպան է, Հյուսիսային Աֆրիկան, Ղրիմն ու Անդրկովկասը: Աճում է գերազանցապես խոնավ և ստվերոտ վայրերում: Բաղեղի ցողունն իր վրա կրում է օդային կառչող և սնվող արմատներ, որոնք գոյանում են տերևների հակառակ կողմերում: Կառչող արմատները մտնում են հանդիպակաց ճեղքերը, ստեղծում հենարան, ապա սողացող ընթացքով բարձրանում վեր: Բաղեղի վառ կանաչ տարբեր խտության տերևները բլթակավորվում են 5-7 մասի՝ հիմքում ստեղծելով որոշակի անկյունաձևեր: Ծաղիկները մանր են, դեղնականաչավուն, հավաքված հովանոց ծաղկափթթության մեջ: Բաղեղն ունի հարմարվողականության հատկություն: Իր արտակարգ ստվերադիմացկունության, արագ աճի, տերևների խճանկարային դասավորվածության և գեղեցիկ թավշականաչ փռվածքի շնորհիվ ամենատարածված սենյակային բույսն է: Բազմանում է ինչպես սերմերով, այնպես էլ վեգետատիվ եղանակով:

Տրադեսկանցիա
(Tradescantia, Традесканция**)**

Տրադեսկանցիան խոտային ծաղկաբույս է, պատկանում է քոմելլինազգիների ընտանիքին: Հայրենիքը Հարավային Ամերիկայի արևադարձային անտառների ճահճոտ վայրերն են: Այն փռվող, տարածվող բույս է: Նրա ցողունի վրա, յուրաքանչյուր տերևածոցի հակառակ կողմի թմբիկից աճում են հավելյալ կողմի արմատներ, որոնք

ներթափանցելով հողի մեջ՝ ապահովում են բույսի հողային սննդառությունը: Տրադեսկանցիայի տերևաթիթեղները հերթադիր դասավորված են կլոր ցողունի վրա: Բազմանում է 2-3 տերևներ ունեցող կտրոններով, ավազախառն հողում, ջրով լի սրվակում, հողով լցված ծաղկաթաղարի մեջ: Հավելյալ արմատները գոյանում են մեկ շաբաթվա ընթացքում: Գարնանը և ամռանը պետք է հաճախակի ջրել, աշնանից ջրելը նվազեցնել, իսկ ձմռանը՝ ուղղակի պահպանել հողի խոնավությունը: Ամռանը պետք է պահել ստվերում, ձմռանը՝ լույսի տակ, պահպանելով ցրտահարումից, որովհետև շատ զգայուն է ցրտի նկատմամբ:

Ծնեբեկ (Asparagus, Спаржа)

Ծնեբեկը պատկանում է շուշանազգիների ընտանիքին: Հայրենիքը Աֆրիկայի լճերի և գետերի ափերն են, ուր բազմամյա խոտաթփերի բարձրությունը հասնում է շուրջ 2 մետրի: Ծնեբեկի մի քանի տեսակներ աճում են Անդրկովկասում, նաև Հայաստանում: Ծնեբեկը կիսափաթաթվող, փետրաձև, նուրբ աղվամազային ճյուղիկներով բույս է: Բազմացվում է սերմերով և կոճղարմատը կիսվելու միջոցով: Գարնանը կոճղարմատը կիսում են, հողը սուր դանակով փորում և առանձնացնում այնպես, որ յուրաքանչյուր բաժնեկտորի վրա մնա 2-3 ճյուղ: Կտրվածքը ծածկում են փայտածխի փոշիով և տնկում առանձին ծաղկամանի մեջ:

Ծնեբեկն ամռանը պետք է պահպանել արևի ուղիղ ճառագայթներից: Ձմռանը իրեն լավ է զգում լուսավոր, 10-12° ջերմություն ունեցող սենյակում: Ավելորդ ջերմությունից և չորությունից նրա նուրբ ճյուղերը թափվում են: Դրա համար էլ 15-ից բարձր ջերմաստիճանում ամեն օր առավոտյան և երեկոյան ջրով պետք է ցողել: Դա նրան առողջացնում է և պահպանում վնասատուներից: Ունի մանր, սպիտակ, բուրավետ ծաղիկներ:

Շքանարգիզ (Amaylis, Амарислис)

Հայրենիքը Հարավային Ամերիկան և Հարավային Աֆրիկան է: Շքանարգիզն ունի սրածայր, վառ կանաչ գույնի զուգահեռաջիղ տերևներ, երկար ծաղկասլաք, որի ծայրին բացվում են 2-4 խոշոր ծաղիկներ: Շքանարգիզների ծաղիկները լինում են կարմիր, վարդագույն՝ ամենաբազմազան երանգներով, և հազվադեպ՝ սպիտակ: Շքանարգիզն ի տարբերություն այլ ծաղիկների ապրում է բացարձակ «հանգստի» շրջան: Ամռան վերջում, երբ տերևները սկսում են թառամել և թափվել, ավարտվում է նրա աճման շրջանը: Սոխուկը հանգստանում է: Այս շրջանում ծաղկամանը դրվում է 8-10° ջերմություն ունեցող սենյակում, նախընտրելի է՝ մթության մեջ: Հանգստի առաջին շրջանում հողը պետք է պահպանել քիչ խոնավության մեջ: Հանգստի երկրորդ շրջանում հողը պետք է չոր պահել, որպեսզի սոխուկը շուտ արթնանա: Ծաղկեպսակի երևալուց հետո, երբ դրա բարձրությունը դառնում է 5 սմ, անհրաժեշտ է առատ ջրել, այլապես չի ծաղկի: Պահանջվող ջերմության ապահովման պարագայում շքանարգիզը արագ աճում է և ծաղկում: Այն բազմանում է սերմերով և սոխուկներով:

Կակտուս (Cactus, Кактус)

Կակտուսների ընտանիքն ընդգրկում է շուրջ 3000 տեսակ Հայրենիքը Հյուսիսային և Հարավային Ամերիկայի մայրցամաքներն են Կակտուսների գերակշռող մասը աճում է կիսաանապատային, անջրդի ավազուտներում, սարահարթերի վրա գոյացող հողային և կրային քարակ նստվածքներում, քարաժայռերի ծերպերում, ուր մթնոլորտային տեղումները սակավ են: Կակտուսներն ունեն ամեն գույնի և երանգի (բացի կապույտից) ծաղիկներ: Բազմանում են սերմերով և ցողունային կտրոններով Կակտուսները ջրում են սենյակային կամ գոլ ջրով: Պետք է ջրել այնպես, որպեսզի ջրի շիթերը չդիպչեն կակտուսի հատկապես ցողունի ցածր մասին, որի վրա հնարավոր է աննկատ ճեղքվածքներ և վնասվածքներ առաջանան: Ներծծված ջուրը կարող է փտեցնել բույսը: Ամռանը նրա աճման բուռն շրջանում, ջրում են հաճախ, հատկապես երեկոյան ժամերին, իսկ ուշնանը և ձմռանը՝ սակավ: Գարնանից կակտուսները պետք է պաշտպանել արևի ուղիղ ճառագայթներից. Կակտուսի վրա հաճախակի հայտնվում են վնասվածքներ: Դրանցից զերծ պահելու նպատակով անհրաժեշտ է ամիսը 1 անգամ մաքրել:

Քարաբեկ (Камнеломка)

Հայրենիքը Ասիան է: Ունի կարճ ցողուն, որի վրա աճում է կլորավուն, մուգ կանաչ գույնի, երիզները կարմրավուն, մազածածկ տերևներ: Ցողունից աճում են երկար բեղիկներ հիշեցնող ելուստներ: Ծաղկում է գարնանը, ունի մանր ծաղիկներ: Լուսասեր է: Ամռան ամիսներին անհրաժեշտ է ջրել չափավոր, ձմռանը՝ սահմանափակ: Բազմանում է ելուստների վրա առաջացած նոր բույսի գոյացությամբ, որն ընկնելով հողի մեջ՝ ձևավորվում է նոր բույս:

Ալոե (Алоэ)

Հայրենիքը Հարավային Ամերիկան է: Ունի կարճ և հաստ ցողուն, որի վրա աճում են մսալի, հյութեղ, հաստ, մուգ կանաչ գույնի սրածայր, վեր ծգվող տերևներ: Ալոեն անհրաժեշտ է պահպանել արևի ուժեղ ճառագայթների բացասական ազդեցությունից, որը կարող է այրվածք առաջացնել բույսի վրա: Սենյակային պայմաններում ալոեն ծաղկում է հազվադեպ: Բազմացումը նպատակահարմար է կատարել գարնանը: Կտրած տերևները 5-6 օրերի ընթացքում ջրազրկվում են ավազով լցված ամանում , այնուհետև տնկվում հողի մեջ:

Գարնանածաղիկ (Примула)

Հայրենիքը մերձարևադարձային երկրների անտառներն են: Ունի կարճ ցողուն, որի վրա փնջաձև աճում են մազածածկ, բաց կանաչ գույնի, փափուկ, լայն, կլորավուն տերևներ: Ծաղկում է փնջաձև, հաճախակի և առատ: Ծաղիկները խոշոր են և բազմաքանակ: Ցրտադիմացկուն է՝ ծաղկում է նույնիսկ ձմռան ամիսներին: Բույսի ծաղկման շրջանում անհրաժեշտ է առատ ջրել: Բազմանում է վերատնկման ճանապարհով, թփերի բաժանումով:

Սենյակային խաղող (Витус)

Հայրենիքը մերձարևադարձային անտառներն են: Մագլցող բույս է: Ունի մի քանի մետրի հասնող փայտային ցողուն, որից աճում են զսպանակաձև ելուստներ: Դրանց միջոցով բույսը կպչում է որևէ հենարանի, ամրանում, աճում և տարածվում է: Կանաչավուն տերևները խոշոր են, ձվաձև, սրված ծայրով, կտրտված երիզներով: Ունեն հարթ մակերես, աճում են փայտյա ցողունից իջնող երկար և բարակ ցողունների ծայրերին՝ 3-5 տերևների խմբվածություններով: Ցրտադիմացկուն է, ցանկացած պայմաններին հարմարվող:

Ֆուքսիա (Фуксия)

Հայրենիքը Հարավային Աֆրիկան է: Այն մշտադալար բույս է: Ձմռանը սենյակային պայմաններում խոնավության և ջերմության պակասի դեպքում տերևաթափվում է: Ծաղիկները սովորաբար ձագարաձև են: Ունի 4 եռանկյունաձև, սրաձև պսակաթերթեր, որոնց միջից կախվում են 8 առէջներ: Բազմանում է կտրոններով: Ձրի մեջ կտրոնները արմատակալվում են 2 շաբաթվա ընթացքում: Այնուհետև դրվում են հողի մեջ: Ֆուքսիան անհրաժեշտ է պահել սենյակի կիսաստվերային մասում և ապահովել առատ սնունդով ու խոնավությամբ:

Պտեր (Папортник нефролепис)

Հայրենիքը Հյուսիսային Ամերիկան է: Ունի երկար, բարակ, կորացած ճյուղեր, որոնց վրա հերթադիր դասավորված են փոքր, ձվաձև, բաց կանաչ գույնի տերևներ: Խավարասեր է: Բույսի աճման համար անհրաժեշտ է պահպանել հողի խոնավություն և չափավոր լուսավորվածություն: Բազմանում է թփիկների բաժանման եղանակով:

Կոլեուս (Колеус)

Հայրենիքը Ասիայի արևադարձային անտառներն են Ունի ուղղաձիգ, գլանաձև, նուրբ, բաց կանաչ գույնի ցողուն, որի վրա աճում են առանձնակի գեղեցկություն ունեցող տերևներ՝ լայն, կտրտված, սրածայր, վարդագույն, ծայրերը կանաչ երիզներով: Լուսասեր բույս է, սիրում է խոնավություն: Բավարար լուսավորության պայմաններում տերևների գույները վառ են: Արևի ուժեղ ճառագայթներից տերևները գունաթափվում են: Օաղիկները մանր են, մանուշակագույն:

Քլորոֆիտում (Хлорофитум)

Հայրենիքը Հարավային Աֆրիկան է: Ունի բաց կանաչ, երկար, սրածայր տերևներ, որոնց եզրերին կամ կենտրոնական հատվածում կան սպիտակ գոլակներ: Բույսի տերևների փնջային հատվածից աճում է երկար ելուստ, որի ծայրին զամբյուղաձև ձևավորվում են նոր տերևներ: Քլորոֆիտումի աճման համար բարենպաստ են տաք և խոնավ պայմանները: Ամռանը անհրաժեշտ է առատորեն ջրել:

Հինածաղիկ (Бальзамин)

Հայրենիքը Արևելյան Հնդկաստանն է: Բազմամյա բույս է: Հինածաղիկի ուռուցիկ հանգույցներով ցողունը թափանցիկ է: Տերևները նշտարաձև են, սղոցված եզրերով: Տերևաթիթեղի ջղերը նույնպես կիսաթափանցիկ են: Ծաղկաբողնոջները գոյանում են ճյուղերի գագաթնային մասում և ստեղծում բնական փունջ: Հինածաղիկը լուսասեր բույս է: Աճում է արագ, պահանջում պարարտ հող: Բազմացվում է սերմերով և կտրոններով: Նրա սերմերը խոշոր են և ծլում են շուրջ երկու շաբաթվա ընթացքում:

Կլիվիա (Кливия)



Հայրենիքն է մերձարևադարձային անտառները: Գոտկանման, գեղեցիկ ձգված տերևներով և խոշոր ծաղիկներով բույս է: Ծաղկում է փետրվար, մարտ, ապրիլ ամիսներին, 3 տարեկան հասակում: Ծաղկման շրջանում պետք է տեղավորել սենյակի առավել լուսավոր մաս (բայց ոչ արևի տակ) և ջրել առատորեն: Ծաղիկները լինում են 2-4 հատ, վառ նարնջագույն, ձևով նման են շուշանին: Խավարասեր բույս է: Բազմանում է սերմերով և արմատային ծիլերի տնկման եղանակով:

ԲՆՈՒԹՅԱՆ ՕՐԱՑՈՒՅՑ

Նախադպրոցական տարիքի երեխաներին շրջակա բնության առավել վառ և հաճախ հանդիպող երևույթներին, տարվա՝ առկա և հաջորդող եղանակներին և մարդկանց կյանքում տեղի ունեցող համապատասխան փոփոխություններին ծանոթացումը իրականացվում է բնության օրացույցի միջոցով: Բնության օրացույցի վրա ամենօրյա նշումներն ու աշխատանքը հնարավորություն են ընդձեռում՝ ծանոթանալու տարվա եղանակներին, ամիսներին, շաբաթվա օրերին և եղանակի սեզոնային փոփոխություններին:

Կրտսեր 2-րդ խումբ:

Տարվա չորս եղանակների համար անհրաժեշտ է ունենալ յուրաքանչյուր եղանակին բնորոշ բնության 4 տարբեր տեսարաններով նկարներ: Կենտրոնում տեղադրված սլաքի միջոցով երեխաները դաստիարակի օգնությամբ պետք է ցույց տան օրվա եղանակին համապատասխանող նկարը: Օրինակ՝ աշնանը (սեպտեմբեր, հոկտեմբեր, նոյեմբեր) պետք է ցուցադրել.



1. Արևոտ, պայծառ օր պատկերող բնության գեղեցիկ տեսարան
2. Անձրևոտ, մռայլ եղանակ պատկերող նկար
3. Գույնզգույն երանգներ ստացած անտառի տեսարան
4. Տերևաթափի տեսարան

Միջին խումբ

Օրացույցի ձախ անկյունում փակցվում է տարվա համապատասխան եղանակին բնորոշ նկար: Սլաքի միջոցով ցույց է տրվում օրվա եղանակը խորհրդանշող պայմանական նշանը:



արև - ☺
անձրև - ///
քամի
ձյուն - ❄
ամպամած – ●
կիսաամպամած – ☯

Ավագ խումբ / տարբերակ 1/

Օրացույցի ձախ հատվածում փակցվում է տարվա հանապատումման եղանակը բնորոշող տեսարանի նկար: Առաջին գրպանիկի մեջ տեղադրվում է օրվա եղանակը պատկերող պայմանական նշանով քարտը, որը նկարում են բյնության անկյան օրվա հերթապահները Երկրորդ գրպանիկի մեջ տեղադրվում է երեխաների նկարչական աշխատանքներից ընտրված որևէ նկար, որում արտահայտվել են գբոսանքից ստացած տպավորություններ կապված օրվա եղանակի կամ բնության որևէ երեևույթի հետ:



արև - ☺
անձրև - ///
քամի
ձյուն - ❄
ամպամած – ●
կիսաամպամած – ◕

Ավագ խումբ / տարբերակ 2/

Օրացույցի ձախ անկյունում փակցվում է տարվա եղանակը բնորոշող տեսարանի որևէ նկար: Օրացույցի վրա աշխատում են օրվա բնության անկյան հերթապահները: Յուրաքանչյուր ամսվա համար նախապես գծված օրուսցույցը վրա պայմանական նշանների օգնությամբ նշումներ են կատարվում օրվա եղանակի վերաբերյալ: Ամսվա վերջում դաստիարակն ամփոփիչ զրույց է անցկացնում երեխաների հետ և օրացույցի հակառակ երեսին նշումներ կատարում տվյալ ամսվա եղանակի մասին: Նման ամփոփիչ զրույցներ անցկացվում են յուրաքանչյուր տարվա եղանակի վերջին ամսվա ավարտին: Դրանք հնարավորություն են տալիս կատարելու տարվա եղանակների համեմատություններ և նկատելու եղանակի փոփոխությունները: Լրացված օրացույցները պահպանվում են սեպտեմբերից սեպտեմբեր՝ ողջ տարվա համար:



Շաբաթվա օրերը

Անսպա շաբաթներ	I	II	III	IV	V
I					
II					
III					
IV					

արև - ☺
անձրև - ///
քամի
ձյուն - ❄
ամպամած – ●
կիսաամպամած – ◕
պարզ- ○

ԶԳԱՅԱԿԱՆ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐԻ ԴԵՐԸ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԽՆԴՐՈՒՄ

Երեխաներին անհրաժեշտ է սովորեցնել, որ բնությունը մարդու ոչ միայն ֆիզիկական և նյութական, այլև հոգևոր կյանքի աղբյուրն է: Բնությունը ճանաչելուց և սիրելուց զատ պետք է նաև զգալ: Դրանով երեխաների մեջ ձևավորվում է կենդանի ամեն ինչի նկատմամբ հոգատար վերաբերմունք: Արվեստն ու գրականությունը սկզբնավորվում են ոչ միայն մարդկանց, այլև բնության շնորհիվ: Ձևերի գեղեցկության, գույների և հնչյունների ներդաշնակության սկզբնաղբյուրը բնությունն է: Բնության գեղեցկությամբ զմայլվելով՝ երեխան նրա նկատմամբ դառնում է հոգատար և սպառողից վերափոխվում պահպանողի: Արդյունքում ձևավորվում է բնության հետ միասնականության անմիջական զգացում:

Զգալով բնության գեղեցկությունը՝ երեխաներն անտարբեր չեն մնում գեղեցիկի ճակատագրի նկատմամբ: Նրանք ցավում են թևը վիրավորված թռչունի, պոկված և ընկած ծաղկի, տրորված խոտի, ծառի վնասված ճյուղի, շրջակա միջավայրի աղտոտվածության համար:

Բնությունն զգալու հնարավորություն ստեղծվում է երաժշտության ունկնդրությամբ և գեղարվեստական գրականության ընթերցմամբ: Վարդի, մանուշակի և այլ ծաղիկների մասին երգերի կատարումը երեխաների մեջ առաջացնում է հուզական վիճակ, քնքշանք և նուրբ վերաբերմունք՝ տվյալ ծաղկի կամ կենդանական աշխարհի ներկայացուցչի նկատմամբ: Չայկովսկու կամ Վիվալդու .Տարվա եղանակներն ունկնդրելիս երեխաները մտովի ընկնում են հեքիաթային անտառ՝ երաժշտության հնչյունները նմանեցնելով իշամեղուների բզզոցին, առվակի քչքչոցին, թռչունների ծլվլոցին: Նրանք անմիջականորեն հաղորդակցվում են դրանց:

Բնության հետ շփվելու և բնությունը զգալու լավագույն միջոցներ են հեքիաթները, բնաշխարհը գովերգող բանաստեղծությունները, որոնց շնորհիվ երեխան աշխարհը, բնությունը ճանաչում է ոչ միայն մտքով, այլև սրտով: Նա ոչ միայն ճանաչում, այլև արձագանքում է շրջապատի իրադարձություններին և երևույթներին, արտահայտում իր վերաբերմունքը: Հայրենի բնաշխարհը գովերգող ոտանավորները նպաստում են գեղագիտական զգացմունքների ձևավորմանը: Հանելուկները մշակում են ճանաչողական ունակությունները: Աշնան մասին բանաստեղծություն արտասանելիս կամ ունկնդրելիս երեխաների մեջ ակամայից արթնանում են աշնանային բնությունը զգալու տրամադրություններ (տես՝ հավելված):

ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱՀԻՐ ԾՐԱԳՐԻ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԲԱԺՆԻ ԹԵՄԱՆԵՐ ԵՎ ՆՅՈՒԹԵՐ

Բնության և ժամանակակից քաղաքակրթության փոխհարաբերությունները բարդ են: Ապրելով բնության գրկում մարդը հենց սկզբից տոգորվում և համակվում է բնության նկատմամբ մի որ զգացմունքով Բնությունն է ստեղծում մարդու կյանքի և գոյության համար բոլոր պայմանները Բնությունը նաև մարդու հոգևոր աշխարհի կերտողն է Բնությունը զարգանում է իր օրենքներով Մարդը պետք է ենթարկվի այդ օրենքներին, այդ դեպքում բնությունը կապահովի մարդու հանդեպ իր էկոլոգիական ֆունկցիաները օրգանիզմի և շրջակա բնական միջավայրի ներդաշնակությունը:

Ապագայի մարդը կատարյալ պետք է լինի բոլոր առումներով՝ գեղեցիկ, գիտուն, խելացի, բարի: Իսկ այդ նպատակին հասնելու համար անհրաժեշտ է լուծել երեք կարևոր խնդիրներ նյութական բարիքներով ապահովվածություն, առողջություն, ֆիզիկական և հոգևոր զարգացում

Մարդկային հասարակության զարգացման այս բաղադրիչները հանդիսանում են հասարակության երջանկության ծառի խոր արմատները, որոնք աճում են հողի մեջ՝ բնության մեջ ապահովելով նրա կյանքի կենարար հյութը Հասարակության յուրաքանչյուր անդամի զարգացումը սերտորեն կապված է մարդու էկոլոգիական մտածողության հետ, ինչը նաև հանդիսանում է մարդու կենսաձև Դրանով են պայմանավորվում բնության հետ մարդու փոխհարաբերությունների սկզբունքները

Էկոլոգիական մտածողությունը որոշում է մարդու կյանքի, աշխատանքի գիտելիքների, կենցաղի հանգստի, բնության մեջ ճիշտ վարքագծի դրսևորման, մարդկային փոխհարաբերությունների ձևավորման ոճը Ուստի էկոլոգիական կրթությունն ու դաստիարակությունը անհրաժեշտ հիմք են հանդիսանում էկոլոգիական մտածելակերպի ձևավորման համար որը անհրաժեշտ է սկսել վաղ տարիքից

Նախադպրոցական կրթության և դաստիարակության ծրագրի էկոլոգիա բաժինը կոչված է իրականացնելու էկոլոգիական կրթության և դաստիարակության խնդիրները: Այն նպատակ ունի ձևավորել նախադպրոցական տարիքի երեխայի էկոլոգիական գիտակցությունը, մարդասիրական վերաբերմունքը շրջակա միջավայրի նկատմամբ բնության հետ հաղորդակցվելու կարողություններն ու կուլտուրան

Նախադպրոցական տարիքի երեխաների էկոլոգիական կրթության գործընթացի իրականացման ընթացքում անհրաժեշտ է առաջնորդվել «Ճանաչիր, սիրիր, պահպանիր» կարգախոսով, որի արդյունքում հնարավորություն կնձեռվի նախադպրոցականին հաղորդել գիտելիքներ հոն և իր շրջակա միջավայրի մասին, սեր արթնացնելու այն ամենի նկատմամբ, ինչ շրջապատում է երեխային, լինի դա կենդանի թե անկենդան բնության տարր, կձևավորի բնությունը պահպանելու ճիշտ վերաբերմունք և վարքագիծ

Ծրագրի հետևողականորեն իրականացնելու պարագայում նախադպրոցականը կկարողանա իր սեփական «աշխարհը» կերտելով իր պատկերացումների, զգացողությունների, մտքերի և նախասիրությունների շրջանակը Երեխայի մեջ քայլ առ քայլ կձևավորվի այն գիտակցությունը, որ ինքն աշխարհում մենակ չէ, որ շրջակա աշխարհում ամեն ինչ սերտորեն աճեցվում է միմյանց հետ, որ բնության մեջ յուրաքանչյուր տարրի գոյություն պայմանավորված է մյուսի գոյությամբ և փոխկապակցված են

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐ

1. Ո՞վ եմ ես
2. Իմ ընտանիքը
3. Իմ բակը
4. Իմ մանկապարտեզը
5. Երկիր մոլորակ,
6. Հայաստան երկիր,
7. Իմ քաղաքը, գյուղը

Ո՞ՐՆ Է ՔՈ ՀԱՍՑԵՆ

8.Երկիր – մոլորակը
9.Հայաստան աշխարհը
10.Քաղաք,գյուղը, բնակավայրը
11.Փողոցը՝ որտե՞ղ է գտնվում քո տունը, բնակարանը

ԲՆՈՒԹՅՈՒՆ

12. Բնություն / կենդանի , անկենդան/
13. բնության երեևույթներ
14. աշուն
15. արև
16. օդ
17. ջուր
18. հող
19.բուսական աշխարհ՝ խոտեր, ծառեր, թփեր
20.ծաղիկներ՝ դաշտային, սենյակային, պարտեզային
21. բանջարեղեն
22. մրգեր
23. հատապտուղ

ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ

24. Կենդանական աշխարհ՝ ընտանի, վայրի կենդանիներ
25. թռչուններ
26. ձկներ
27. կարմիր գիրք

ՎԱՐՔԱԳԻԾ և ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

28 Գարուն
29.Պահպանիր և պաշտպանիր բնությունը՝ վարքագծի ճիշտ դրսևորում բնության մեջ և կենդանական աշխարհի ներկայացուցիչների նկատմամբ

30. Առողջ ապրելակերպ
31. Փոխհարաբերությունների ձևավորում միմյանց և մեծահասակների հետ
32. անառ
33. հսկ

ԲՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԱՐԴԸ

Մարդկանց ողջ կյանքը կապված է բնության հետ. Մարդիկ ամեն վարկյան օդ են շնչում, ծարավելիս ջուր են խմում, սնվում են բնության բարիքներով. Շենքեր են կառուցում և հագուստներ պատրաստում՝ բնությունից վերցրած նյութերով: Բնությունը մարդկությանը ապահովում է ամեն ինչով, որի համար էլ պետք է հոգատար լինել բնության նկատմամբ և պահպանել այն: Բնությունը հարուստ է անտառներով, օգտակար հանածոներով, բազմազան բույսերով և կենդանիներով, սակայն դրանք անսպառ չեն: Ուրեմն պետք է խնայողաբար օգտվել այդ բարիքներից: Բնության պահպանումը յուրաքանչյուրի պարտքն է:

Նախապատրաստել մի քանի նկարներ և խաղանիշեր կանաչ և կարմիր գույների / փիսիկ, ծաղիկ, ինքնաթիռ, սունկ, ծառ, տուն/:
Առաջարկել երեխաներին կանաչ գույնի խաղանիշը դնել պատկերված այն նկարների վրա , որոնք ստեղծված են բնության կողմից, իսկ կարմիր խաղանիշերը՝ այն նկարների վրա , որոնց պատկերները ստեղծված է մարդկանց կողմից:

ԿԵՆԴԱՆԻ ԵՎ ԱՆԿԵՆԴԱՆ ԲՆՈՒԹՅՈՒՆ

Նախապատրաստել կենդանի և անկենդան բնություն պատկերող մի քանի նկարներ և խաղանիշեր՝ կանաչ և դեղին գույների / ծառ, արև, քար, աղվես, ծաղիկ, տղա, սառցե քուլա, թիթեռ/ :

Երեխաներին առաջարկել կանաչ գույնի խաղանիշերով առանձնացնել կենդանի բնություն պատկերող նկարները, իսկ դեղինով՝ անկենդանը: Պարզաբանել, ո՞րն է անկենդան բնությունը, որը կենդանի և ինչու է դա այդպես: /

Արևը, օդը, աստղերը, քարը, ջուրը անկենդան բնության տարրեր են դրանք չեն շնչում:

Մարդիկ, կենդանիները, բույսերը, սնկերը դրանք կենդանի բնության տարր են: Կենդանի բնության տարրերը շնչում են, սնվում են, աճում են, բազմանում են և մահանում են:

Կենդանի և անկենդան բնության տարրերը սերտորեն փոխկապակցված են միմյանց հետ: Կենդանի բնությունը չի կարող գոյություն ունենալ առանց անկենդան բնության:

ՕԴ, ԱՐԵՎ , ՋՈՒՐ

Բույսերի և կենդանիների կյանքի համար անհրաժեշտ գործոններն են արևը , օդը, ջուրը, հողը

նկարներ
արև, հող, ջուր, օդ, ամպեր

նկարներ
արջ, ծառ, զատիկ, ծաղիկ, ծառ, թիթեռ, թռչուն, մեկ այլ ծաղիկ

Երեխաներին առաջարկվում է սլաքով միացնել արևի, ջրի, հողի, օդի նկարները կողքի սյունակում պատկերված այն առարկաների պատկերներին, առանց որի դրանք չեն կարող գոյատևել: Վերջում միասին կատարել համապատասխան եզրահանգումներ, ներկայացնելով կենդանի և անկենդան բնության փոխկապակցվածությունը:

ՎԱՐՔԱԳԻԾ

Վերաբերմունքի ճիշտ դրսևորում շրջակա միջավայրի նկատմամբ:

Երեխաների հետ նախնական զրույցի ընթացքում պարզաբանել մարդու վերաբերմունքի դրսևորման ձևերը՝ բնության նկատմամբ բարության, չարության, անտարբերության, հոգատարության, բնությունը պահպանելու, բնության նկատմամբ անփութության իմաստն ու էությունը: Այնուհետև ճշտել՝ ու՞մ նկատմամբ կարելի է դրսևորել վերաբերմունք. ինքն իր, մարդկանց, բնության, մարդու կողմից ստեղծված արժեքների նկատմամբ: Հստակեցնել վերաբերմունքի լավ և վատ դրսևորման հատկանիշները և բերել վերաբերմունքի տարբեր դրսևորումներ ներկայացնող և պատկերող օրինակներ ու նկարներ:

Բնության գրկում էքսկուրսիաների ժամանակ երեխաների վարքագծի տարբեր իրավիճակներ պատկերող նկարների վրա առաջարկել դնել կարմիր և կանաչ գույնի խաղանիշեր: Հանձնարարել կանաչ գույնի խաղանիշերը տեղադրել այն նկարների վրա, որտեղ պատկերված իրավիճակները ըստ իրենց համարվում են ճիշտ արարք, իսկ կարմիրովը՝ անթույլատրելին:

ԲՆՈՒԹՅԱՆ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐ

Բնության երևույթներ: Բնության մեջ տեղի ունեցող փոփոխությունները կոչվում են բնության երևույթներ: Դա կարող է լինել ձյունը, անձրևը, սառցի հալոցքը, արևածագը, արևի մայրամուտը, բույսերի ծաղկելը, ծառերի տերևների գունափոխվելը, բույսերի աճը, թռչունների չուն և այլն: Տարվա տարբեր եղանակներ պատկերող տեսարանների նկարների միջոցով պարզել բնության մեջ տեղի ունեցող երևույթները և դրանց պատճառահետևանքային կապերը: Հնարավորություն տալ երեխաներին կատարելու ինքնուրույն եզրահանգումներ: Այն հիմնավորել գործնական աշխատանքով՝ ջուրը սառեցնել և ստանալ սառույց, որոշել դրա հատկությունները, այնուհետև հալեցնել և վերածել նորից ջրի, թեյնիկի եռացած գոլորշու վրա պահել ապակու շերտ և երեխաների ուշադրությունը հրավիրել ապակու վրա գոլորշու սառելուց առաջացած ջրի կաթիլների և դրանց կաթոցքի վրա, դրանք համեմատել անձրևի առաջացման երևույթի հետ:

ՕԴ

Մեր շրջակայքում ամեն տեղ օդ կա: Երեխաների հետ թվարկել և փորձերի միջոցով գտնել, թե որտեղ կա օդ՝ փչել օդապարիկ, ամանով լի ջրի մեջ ընկղմել սպունգ և դիտել ջրից դուրս եկող պղպջակները, բացատրել երեխաներին, որ դրանք օդի ջրից դուրս գալու հետևանք են: Բացատրել երեխաներին, որ թև օդը տեսանելի չէ, բայց կարելի է զգալ նրա գոյությունը նշված և այլ միջոցներով:

Առաջարկել երեխաներին ինքնուրույն կատարել փորձեր՝ օդի գոյությունը զգալու վերաբերյալ: Օծանելիքի միջոցով օդի բույրը փոխել և առաջարկել շնչառությամբ զգալ այն: Այդպես կարելի է առաջարկել զգալ գազի հոտը, հակասանիտարական պայմաններից առաջացող գարշահոտությունները և բացատրել, որ այդ հոտերը ահազանգ են բնության աղտոտման և էկոլոգիական պաշտպանիչ միջոցառումներ ձեռնարկելու վերաբերյալ:

Բացատրել, որ օդի շարժումից առաջանում է քամի՝ հովհարով շարժել օդը և կտրատված թղթե մանր կտորների շարժումների մեկնաբանությունները թողնել երեխաներին: Գաղափար տալ օդի կործանիչ ուժի՝ փոթորիկների և ուժեղ քամիներից պաշտպանվելու եղանակների մասին, ինչպես նաև, քամու ուժը որպես էկոլոգիապես մաքուր էներգիայի աղբյուրի մասին:

Երեխաներին առաջարկել դիտելու նկար, որում պատկերված լինի սենյակային ծաղիկների մի անկյուն , թռչունի վանդակ, ակվարիում և առաջարկել երեխաներին ներկայացնելու օդի կարևորագույն դերը նկարում պատկերված բուսական և կենդանական աշխարհի ներկայացուցիչների համար:

Առաջարկել դիտել գործարանային տեսարան պատկերող մի նկար և զուգահեռ օդը աղտոտող գործարանային տեսարան պատկերող մեկ այլ նկար և առաջարկել երեխաներին՝ երկու նկարները համեմատելով, կռահել ինչը կարող է օդի աղտոտվածության պատճառ հանդիսանալ, ինչին կարող է վնասել այդ աղտոտված օդը:

Երկիր մոլորակի օդի շերտը թափանցելով արևի ճառագայթները առաջացնում է բաց կապույտ գույն, ջինջ երկինք, մայրամուտի ժամերին այն կարող է ստանալ այրվող կրակի գույն, որի գեղեցկությունը զմայլում և հիացնում է մարդկանց:

ՕԴԻ ՄԱՔՐՈՒԹՅՈՒՆԸ

Առանց օդի մարդիկ, կենդանիները և բույսերը չեն կարող ապրել: Բոլորին անհրաժեշտ է մաքուր օդ: Այսօր գործարանները, ավտոմեքենաները իրենց ծխով աղտոտում են օդը: Որպեսզի օդի մաքրությունը պահպանվի, անհրաժեշտ է յուրաքանչյուր գործարանում տեղադրել փոշի, մուր, վնասակար գազեր կլանող սարքավորումներ: Օդը մաքրում են նաև բույսերը: Դրա համար էլ տնկում են անտառներ, ստեղծում են կանաչ գոտիներ, քաղաքներում՝ պուրակներ:

Այգիները, նույնպես, մաքրում են օդը՝ կլանելով օդի մեջ եղած փոշին և թունավոր գազերը: Բայց դա արդեն այգու պտուղները դարձնում է թունավոր՝ մարդկանց և կենդանիների համար: Ուրեմն այգիները, նույնպես, կարիք ունեն մաքուր օդի:

Բացատրել երեխաներին, որ ճանապարհների եզրերին ցանկալի չէ պտղատու ծառեր տնկել, քանի որ նրանց պտուղները ավտոմեքենաների արտանետած գազերից և փոշուց դառնում են էկոլոգիապես աղտոտված: Օդի մաքրությունը պետք է ապահովել բնական անտառների և դեկորատիվ բույսերի միջոցով:

Երեխաներին բացատրել, որ սենյակային բույսերը նույնպես շնչում են թթվածին:Ցերեկային ժամերին, արևի լույսի տակ՝ կատարելով ֆոտոսինթեզ արտազատում

են թթվածին, որն օդի այն բաղադրիչն է, որ շնչառության միջոցով ստանում է նաև մարդը.

Գիշերային ժամերին բույսերը միայն շնչում են թթվածին /սպառում են թթվածին/ Այդ պատճառով էլ հատկապես երեխաների ննջարաններում սենյակային բույսեր աճեցնել այսինքն աճող սենյակային բույսեր տեղադրել չի կարելի, քանի որ երեխաներին շատ թթվածին է հարկավոր, իսկ բույսերը կսպառեն այն և երեխաները կենթարկվեն թթվածնային քաղցի վնասակար ազդեցությանը, որը կխանգարի, հատկապես, երեխաների ուղեղի և նյարդային համակարգի զարգացմանը:

Բավարար քանակությամբ թթվածին չստանալու, մաքուր օդում քիչ լինելու դեպքում, նույնպես, երեխաները ենթարկվում են այդ վտանգին:

ՋՈՒՐ

Բնության մեջ գոյություն ունեցող ջուր պատկերող նկարների միջոցով առաջարկել երեխաներին թվարկել այն վայրերը, որտեղ գոյություն ունի ջուր: Առաջարկել բացատրել ջրի նշանակությունը բուսական և կենդանական աշխարհի ներկայացուցիչների համար: Բացատրել ինչու՞ չի կարելի աղտոտել ջուրը և ի՞նչ հետևանք կարող է ունենալ աղտոտված ջուրն օգտագործելը և որ ջուրը պետք է խնայողաբար օգտագործել, չմոռանալ ժամանակին փակել ջրի ծորակը:

Մի քանի փորձերի միջոցով ներկայացնել ջրի հատկությունները / ջուրը գունավորել գուաշով, ջրի համը փոխել աղով և շաքարավազով, ջրի գոլորշիացում, ջուրը սառեցնել և վերածել սառույցի:

Գաղափար տալ համաշխարհային օվկիանոսի, ծովերի, քաղցրահամ լճերի և գետերի, որպես խմելու ջրի կարևոր պաշարների և դրանք մաքուր պահելու անհրաժեշտության մասին:

Պատմել Սևանա լճի, Հրազդան և Արաքս գետերի էկոլոգիական մեծ նշանակության, այն պահպանելու և մաքուր պահելու պետական ծրագրերի մասին: Գաղափար տալ համաշխարհային օվկիանոսի էներգետիկ և տրանսպորտային նշանակության մասին: Պատմել հսկայական տանկերների և դրանցից բխող ահռելի էկոլոգիական վտանգի մասին:

Բացատրել, որ մարդկության առաջ ծառացած են մի կողմից ջրային պաշարների ճիշտ օգտագործման, օվկիանոսները, ծովերը և այլ ջրամբարները, որպես մարդկությանը անհրաժեշտ, էկոլոգիապես մաքուր սննդի պաշարների նշանակությունը և դրանց աղտոտման վտանգավորությունը ապագա սերունդների համար:Գաղափար տալ օվկիանոսային փոթորիկների, ցունամիների մասին և ներշնչել այն միտքը, որ երեխաները պետք է լավ սովորեն, որ երբ մածանան, կարողանան գտնել բնության տարերքը մարդուն ծառայեցնելու գաղտնիքները:

Գաղափար տալ ջրի բնական շրջապտույտի և երկրագնդի գլոբալ տաքացման վտանգի, երկրագնդի բևեռների սառույցների, լեռնային սառցադաշտերի, հավերժական սառածության գոտու՝ մարդու գոյության համար կարևոր նշանակության մասին: Պատմել Մասիս լեռան հավերժական սառածության գոտու և սառցադաշտերի մասին: Երեխաներին հնարավորության դեպքում խորհուրդ տալ տեսնել և դիտարկել Մասիսի սառցադաշտերի փոփոխությունները ամառվա ընթացքում:

ՋՐԻ ՄԱՔՐՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ

Առանց ջրի ոչ մի կենդանի և բույս ապրել չեն կարող, իսկ մարդուն ջուրն անհրաժեշտ է խմելու, լվացվելու, այգիներ և դաշտեր ոռոգելու, գործարաններ աշխատացնելու համար: Մարդուն, կենդանիներին և բույսերին մաքուր ջուր է պետք: Եթե գետերի, լճերի ջրերը աղբից, գործարանների թափոններից աղտոտվում են, ապա դառնում են վնասակար և վտանգավոր: Աղտոտված ջուրը չի կարելի խմել, չի կարելի դրանով ջրել բույսերը, իսկ աղտոտված գետերի և լճերի ջրերում ձկները սատկում են: Ուրեմն անհրաժեշտ է մաքուր ջրերը, զբոսանքների ժամանակ ավելորդ իրեր չգցել գետի, կամ լճի մեջ, մաքուր պահել նաև դրանց շրջապատը և ափերը: Գործարաններում պետք է հատուկ տարբերի միջոցով մաքրվի աղտոտված ջուրը:

Խոսել ջրի մաքրման համաշխարհային խնդիրների մասին: Պատմել այն մասին, որ շատ երկրներում խմում են գետերի ոչ մաքուր կամ արտեզյան ջրեր, որոնք նույնպես կարող են վնասակար լինել առողջության համար:

Պատմել Հայաստանի ջրազուրկ և սակավաջուր շրջանների և բնակավայրերի դժվարությունների մասին:

ՀՈՂ

Հողը երկրի մակերեվույթի այն փխրուն շերտն է, որում աճում են ծառերը, թփերը և խոտաբույսերը: Հողի մեջ ապրում են բազմաթիվ միջատներ, թրթուրներ, անձրև, որդեր, որոնք նպաստում են հողի որակի բարելավմանը: Հողը կերակրում է մարդուն: Հողի վրա են աճում ծառերը, որոնք մարդկանց տալիս են տարբեր տեսակի մրգեր, բանջարեղեն, խոտաբույսեր, որոնք մարդիկ օգտագործում են սննդի մեջ և այլն: Հողի մեջ լավ է ներծծվում ջուրը, թափանցում թթվածինը, արևի ջերմությունը, որը կարևոր գործոն է սերմերի ծլման արմատների զարգացման համար: Բանի որ բույսերի աճի համար անհրաժեշտ է օդ, ջուր և ջերմություն:

Պատմել հողի առաջացման մասին, հողում ապրող միկրոօրգանիզմների, դրանց վնասակար և օգտակար հատկությունների մասին:

Բացատրել, որ թեև հողը բնության մայրն է, սակայն հողից վերցված պտուղները պետք է լավ մաքրել: Հատկապես, երբ դրանք պահածոյացվում են տնային պայմաններում, անբավարար շերմամշակմամբ:

Խոսել պահածոներից ընտանիքների թունավորման դեպքերի մասին և խորհուրդ տալ կտրուկ հրաժարվել կասկածելի գույնի ու համի պահածոներից:

Երեխաներին հորդորել այդ խորհուրդը, տալ նաև ուրիշներին, այդ թվում իրենց ծնողներին:

ԲՈՒՍԱԿԱՆ ԱՇԽԱՀՐ

Երկիր մոլորակը, որի վրա ապրում են մարդիկ ծածկված է զարմանահրաշ բույսերով: Դրանք աճում են պուրակներում, զբոսայգիներում, անտառներում, մարգագետիններում, լեռներում, դաշտերում, բանջարանոցներում: Հարուստ ու բազմազան է բուսական աշխարհը, որի շնորհիվ ապահովվում է մարդկանց գոյությունը Երկրի վրա: Բույսերը բնության զարդն են: Նրանք ոչ միայն օգտակար են որպես մարդու սննդի աղբյուր, այլև գեղեցկացնում են միջավայրը, որում ապրում են մարդիկ:

Գաղափար տալ ցորենի, բրնձի, որպես մարդկության սննդի ամենակարևոր բաղադրիչի մասին: Պատմել դեղաբույսերի հրաշագործ նշանակությունների, դրանք

ճանաչելու, բնության մեջ պահպանելու, հավաքելու և դեղատներ հանձնելու կարևորության մասին: Խորհուրդ տալ երեխաներին զբաղվել այդ գործով, բնության մեջ պահպանել ծաղիկները, անիմաստ և անտեղի չպոկել, չհավաքել դաշտային ծաղիկները: Ծանոթություն տալ համաշխարհային և Հայաստանի կարմիր գրքերում գրանցված բուսատեսակների մասին, բացատրել, թե ի՞նչ է կարմիր գիրքը:

ԽԱՂՈՂ

Աշնանը հայոց այգիներում շողշողում, անուշ ժպտում են խաղողի ոխկույզները:

Խաղողը Հայոց աշխարհում մշակվում է անհիշելի ժամանակներից: Խաղողի վազը իր մագլցուն ոստերով հասնում է մինչև 30 մ-ի: Գոյություն ունեն խաղողի բազմաթիվ տեսակներ, որոնց ոսկեշող,կարմիր, վարդագույն, արևահամ հատիկները կարծես իրենց մեջ են ամբարել արևի ողջ ջերմությունն ու լույսը: Խաղողը իր մեջ պարունակում է վիտամիններ, շաքար, արժեքավոր շատ նյութեր: Խաղողից են ստանում արևահամ գինին և կոնյակը, նաև հյութեր, մուրաբա, օշարակ, չամիչ, դոշաբ:

Երեխաների միջոցով թվարկել տարբեր բույսերի ընդհանրությունները / կանաչ գույն, ունեն արմատ, տերևներ, ծաղիկներ, առանց ջրի կչորոնան,գեղեցիկ են և այլն: Խավատախտակի վրա տեղադրել խոտերի , թփերի և ծառերի նկարներ համեմատել դրանք բարձրահարկ շենքի հետ, բացահայտել դրանց տարբերությունները՝ խոտի ցողունը բարակ է և ճկուն, թփերի ցողունները ավելի բարակ են, իսկ ծառերի բունը հաստ փայտային է, ճյուղերը՝ երկար:

Ծառերը տարբերվում են թփերից նրանով, որ ծառի բունը մեկն է, հողից դուրս է գալիս մեկ բուն,ապա ճյուղավորվում են, իսկ թփերի ճյուղերը /բները/ դուրս են գալիս անմիջապես հողից:

ԲՆՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՇՆԱՆԸ

Դիտարկել աշնանային եղանակը, բնության օրացույցում կատարել նշումներ եղանակի վերաբերյալ, համեմատել ամռան և աշնան ամիսների եղանակների նշումները, թվարկել տարբերությունները, կատարել հետևություն:

Աշնանը խոտերի , թփերի , ծառերի տերևների գույները փոխվում են , նրանք հագնում են գեղեցիկ, գույնզգույն հագուստներ, այգիներում, դաշտերում հասունանում է բերքը , սկսվում է բերքահավաքի աշխատանքները: Հողի մշակները աշնանը կատարում են աշնանացան: Թռչունները չվում են տաք երկրներ: Միջատների համար ստեղծվում է անբարենպաստ պայմաններ՝ քչանում՝ այնուհետև իսպառ վերանում է միջատների սննդի աղբյուրը, որն էլ պատճառ է հանդիսանում, որ նրանք հողի խորքում իրենց բներում խոր քուն մտնեն:

Երբ նորից գարուն է գալիս, օրերը տաքանում են, նրանք կրկին զարթնում են և բնության մեջ շարունակվում է կյանքը:

Ամռան ամիսներին արևը ուժեղ է տաքացնում և շոգ է, օրերը երկար:

Աշնանը արեգակը թույլ է տաքացնում,որի պատճառով եղանակը ցրտում է, օրերը կարճանում են, հաճախ երկնքում կուտակված գորշ ամպերից տեղում է անձրևը, որը տարբերվում է ամառային անձրևից՝ այն ավելի մանր կաթիլներով է և տևական: Խոր աշնանը զգացվում է ձմռան շունչը, սովորաբար աշնան վերջին տեղացող անձրևը երբեմն վեր է ածվում թաց ձյան:

ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ

Խավատախտակի վրա փակցնել ձուկ, միջատ, թռչուն, կենդանի պատկերող նկարներ, երեխաներին առաջարկել յուրաքանչյուրի կողքին ամրացնել այդ պատկերի նմանակի փոքրը և անվանել դրանց խումբը:

Կենդանական աշխարհի ներկայացուցիչները բաժանվում են հետևյալ խմբերի՝ ձկներ, միջատներ, թռչուններ, կաթնասուններ:

Կաթնասուն կենդանիները ապրում են և՝ ծովում, և՝ ցամաքում:Ծովային կաթնասուններ են դելֆինները, կետերը: Որոշ կետեր կշռում են մոտ 150տոննա և ունենում են մոտ 40մետր երկարություն:

Կաթնասունները ծնվում են մորից: Սկզբնական շրջանում ձագերը սնվում են մոր կաթով: Դրա համար էլ կոչվում են կաթնասուններ:

Թռչունները, միջատները, գորտերը, սողունների մեծ մասը, ինչպես և ձկները ձվածին են: Ձկները բնակվում են ջրում, նրանց մարմինը պատված է թեփուկներով:Թռչունների մարմինը փետուրներով է պատված, նրանք թռչում են օդում:

Կենդանիների առանձին խումբ են կազմում երկկենցաղները, որոնցից են գորտերը:

ԹՌՉՈՒՆՆԵՐ

Թռչունները երկնքի զավակներն են. օդային օվկիանոսներ նվաճողները: Նրանք կարող են թռչել սարերից ու ամպերից էլ վեր, կտրել, անցնել անապատն ու ծովը: Նրանց փետուրները փայլում են երևակայելի և աներևակայելի գույներով: Թռչունների երգերը կլոր տարի լսվում է երկրագնդի տարբեր ծայրերում : Մարդիկ սիրով են լսում նրանց երգերն ու դայլայլները: Ամեն տարի նրանք իրենց թևերի վրա գարուն են բերում: Թռչունները անտառների, դաշտերի, այգիների,պարտեզների պաշտպաններն են՝ մաքրում են վնասատու արմատակերներից և տերևակերներից, պտղակերներից ու կրծողներից: Եթե թռչունները փետուրներ չունենային չէին կարող թռչել; Փետուրները նրանց հագուստներն են, նրանց մարմինը պաշտպանում են արտաքին վնասվածքներից: Թռչուններն ունեն կտուց, որը նրանց համար ոչ միայն քիթ է, այլև բերան :

ԲՆՈՒԹՅԱՆ ԱՆՏԵՍԱՆԵԼԻ ԹԵԼԵՐԸ

Տիգրանի մայրիկը մի պատմություն պատմեց իր փոքրիկ Տիգրանիկին այն մասին, թե ինչպես մի անգամ անտառապահ Վահանը , որը գտնում էր, որ անտառում բացի ծառերից ոչինչ չպետք է աճի, որոշեց մաքրել անտառը տարբեր խոտերից և թփերից՝ կտրատեց դրանք: Անցավ մեկ տարի, երկրորդ, երրորդ ... անտառապահը նկատեց, որ անտառի ծառերի տերևները թափվել են, մնացել են չորացած ճյուղերը, ծառերը չորացել են: Որն էր դրա պատճառը, ինչ էր պատահել, իսկ պատահել էր հետևյալը՝ թփերի ոչնչացման պատճառով այն թռչունները, որոնք բույն էին դրել և բնակվում էին այդ թփերի մեջ իրենց հյուսած բներում, թռել, հեռացել էին այդ վայրերից: Վնասակար միջատները, որոնցով սնվում էին այդ թռչունները, խիստ շատացել էին: Դրանցից շատերը սնվելով ծառի արմատներով, մյուսներն էլ՝ տերևներով դարձել էին ծառերի չորացման պատճառ:Անտառապահը շատ էր փոշմանել, որ կտրատել էր անտառի թփերն ու մյուս բույսերը: Չէ՞ որ բնության մեջ կենդանի և անկենդան բնության տարրերը, բույսերն ու կենդանիները , մարդը և բնությունը միմյանց հետ կապված են անտեսանելի թելերով և մեկի գոյությունը պայմանավորված է մյուսով , պետք է պահպանել բնությունը, կենդանական աշխարհի բոլոր ներկայացուցիչներին:

ՍԵՆՅԱԿԱՅԻՆ ԾԱՂԻԿՆԵՐ

Առաջարկել երեխաներին վերհիշել և անվանել խմբասենյակի բնության անկյան սենյակային ծաղիկների անվանումները, այնուհետև գրատախտակին փակցված մի շարք սենյակային ծաղիկների նկարներից գտնել և առանձնացնել այն ծաղիկների նկարները, որոնց խնամում են իրենք խմբասենյակի բնության անկյունում: Առաջարկել ցույց տալ և անվանել թե ինչ մասերից է կազմված ծաղիկը , որոնք են ծաղկի աճման անհրաժեշտ գործոնները :

Թվարկել սենյակային այն ծաղիկների անվանումները, որոնք գտնվում են խմբասենյակի բնության անկյունում: Վերհիշել բույսերի խնամքի համար անհրաժեշտ պայմանները՝

1. Սենյակային ծաղիկները պետք է դրվեն սենյակի առավել լուսավոր մասում
2. Ծաղկամանի հողը պետք է միշտ խոնավ լինի
3. Ծաղիկները չպետք է ջրվեն սառը ջրով, ջրի ջերմաստիճանը պետք է լինի սենյակային
4. Ամռանը ծաղիկները պետք է ջրել ամեն օր, իսկ ձմռան ամիսներին օրումեջ
5. Ծաղկամանի հողը պետք է փխրեցնել, քիչ անց՝ ջրել
6. Պարբերաբար անհրաժեշտ է լաթի փափուկ կտորով մաքրել տերևների վրայի փոշին:

Ծաղիկների խնամքը պահանջում է նաև այլ գիտելիքներ, որոնք կարելի է սովորել մեծերից:

ՈՎ ԵՄ ԵՍ

Բաժանել առաջադրանքը և առաջարկել երեխաներից յուրաքանչյուրին նկարի վրա պատկերված դեմքերից առանձնացնել այն նկարը, որը ինքը նմանացնում է իրեն:

Մարդու մարմնի մասեր պատկերող նկարի վրա առաջարկել ցույց տալ և անվանել մարմնի մասերը՝ գլուխ, վիզ, ոտքեր, ձեռքեր, իրան: Իրանի վրա ցույց տալ փորը, մեջքը, կուրծքը: Առաջարկել նկարի վրա ցույց տրված մարմնի մասերը, այնուհետև ցույց տալ իր մարմնի վրա:

Ծանոթացում մարմնի ներքին կառուցվածքին:

Բոլոր մարդիկ ունենում են գլուխ, մարմին, ուտքեր, ձեռքեր, աչքեր և այլն: Յուրաքնչյուրի մարմինը ենթարկվում է իրեն՝ եթե ցանկություն է լինում քայլում է , նստում է, վազում է, կանգնում է և այլն: Առաջին հայացքից կարծես թե ամեն ինչ շատ պարզ է , սակայն իրականում այդպես չէ, որովհետև այդ ընթացքում մարդու նեքին օրգանները բարդ աշխատանք են կատարում: Մարդու կողմից կատարված ցանկացած գործողություն կամ յուրաքնչյուր շարժում կատարվում է մարդու ուղեղի կողմից տրված «հրահանգով»: Թոքերը, որոնց միջոցով մարդը շնչում է ծատ նման է երկու վարդագույն շուրթերի: Սիրտը մարդու կարևորագույն օրգանն է: Այն նման է մկանոտ պարկի և իր չափերով համապատասխանում է բռունցքի չափին: Այն անընդմեջ կծկվում և բացվում է, արյուն է մատակարարում ողջ օրգանիզմին: Եթե սիրտը դադարի կծկումներ կատարելուց, ապա մարդը կդադարի շնչելուց: Ստամոքսի միջոցով մարդու օրգանիզմը մատակարարվում է սննդով,որը և ապահովում է օրգանիզմի կենսունակությունը և աճը: Ճիշտ և հավասարաչափ սնունդը ապահովում է օրգանիզմի բնականոն աճը և առողջությունը:

ԻՄ ԸՆՏԱՆԻՔԸ

Մարդը չի կարող ապրել միայնակ: Յուրաքանչյուր մարդու համար ամենամտերիմ մարդիկ հանդիսանում են իր ընտանիքի անդամները, որոնց հետ նա գտնվում է ամենօրյա շփման մեջ Ներկայացնել ընտանիքի առօրյա պատկերող նկար, առաջարկել պատմել նկարի բովանդակությունը, ներկայացնել ընտանիքի անդամների փոխհարաբերությունները, համեմատության մեջ դնել ընտանիքի առօրյայի տարբեր պահեր պատկերող նկարներ և առաջարկել խաղանիշեր դնել այն նկարների վրա, որոնցում պատկերված գործողությունները կատարվում են նաև իր ընտանիքում:

ԻՄ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԸ

Երեխաներին ցույց տալ մանկապարտեզի առօրյա պատկերող նկար և առաջարկել գտնել իրենց մանկապարտեզի հետ նմանություն ունեցող պատկերները և ներկայացնել այն: Պատմել, թե ինչո՞վ են զբաղվում երեխաները իրենց մանկապարտեզում, ի՞նչ ունեն խմբասենյակներում, ովքե՞ր են իրենց դաստիարակները և այլն:

ԱՆՏԱՌ

Անտառում աճում են շատ ծառեր, թփեր, խոտեր: Անտառի տված օգուտը մեծ է: Նա ոչ միայն շինանյութ ու վառելանյութ է տալիս, այլև մաքրում է օդը, թուլացնում է քամու ուժը, պակասեցնում է փոշին: Ծառերի և թփերի արմատները ամրացնում են հողը, չեն թողնում որ անձրևները լվանան տանեն բուսահողը: Անտառը ապաստան է թռչունների և կենդանիների համար: Անտառում հավաքում են զանազան պտուղներ և սնկեր: Պեք է պահպանել անտառը, չկոտրել ծառերի ճյուղերը, չվնասել ծառերի կեղևները, չկտրել անտառի ծառերը, չկեղտոտել անտառը:

ՀԱՑ

Հացը մեզ համար շատ կարևոր սննդամթերք է: Այն հանդիսանում է սննդամթերքի անբաժանելի մաս: Հացը ստացվում է մարդու ծանր և քրտնաջան աշխատանքի արդյունքում: Հացը ստանում են ցորենից, գարուց, եգիպտացորենից: Ցորենը հիմնական հացաբույս է: Ցորենի ցողունը գլանաձև է, պտուղը /հատիկները-հասկը/ տարբեր ձևերի / ձվաձև,կլոր և այլն/ և գույների / սպիտակ, կրմրավուն/ հատիկ է: Ցորենի արտը հերկում են, վարում, ցանում, ցանքը խնամում, բերքը հավաքում, կալսում, ստացած ցորենից հատիկները առանձնացնում են,աղում և վեր են ածում ալյուրի, իսկ ալյուրից էլ գործարաններում թխում են հացը: Պետք է հոգատար լինել և խնայողաբար օգտագործել հացը:

ԵՐԿԻՐ ՄՈԼՈՐԱԿ

Երկիրը արեգակնային համակարգի մոլորակներից է: Երկիր մոլորակը պտտվում է արեգակի շուրջը: Այն ժամանակահատվածը, որի ընթացքում Երկիրն Արեգակի շուրջը կատարում է մեկ լրիվ պտույտ , անվանում են տարի: Տարին ունի 365 կամ 366 օր:

Երկիրը պտտվում է նաև իր առանցքի շուրջ: Երկրի մեկ լրիվ պտույտն իր առանցքի

շուրջ կոչվում է օր. Օրը մարդիկ բաժանել են 24 մասի, որի մեկ մասը մեկ ժամն է. Մեկ ժամը բաժանված է 60 րոպեների, մեկ րոպեն՝60 վարկյանների.

Արեգակի շուրջը մեկ լրիվ պտույտ կատարելիս Երկիրը տարբեր չափերով է լուսավորվում նրա ճառագայթներից. Այդ պատճառով է, որ Երկրի վրա տարբեր եղանակները փոխարինում են միմյանց. գարնանը հաջորդում է ամառը, ապա աշունն ու ձմեռը: Երկիրն ունի մեկ բնական արբանյակ՝ Լուսինը, որը պտտվում է Երկիր մոլորակի շուրջ:

Երկիր մոլորակը շրջապատված է օդով, ծածկված է օվկիանոսներով, լճերով, գետերով, ծովերով: Երկիր մոլորակի վրա ապրում են հազարավոր ազգեր և ժողովուրդներ՝ ավելի քան 10 միլիարդ մարդ: Ժողովուրդները ստեղծել են պետություններ, որոշակի աշխարհագրական տահմաններում. Ժողովուրդը ինքն է ընտրում իր պետության ղեկավար մարմինները Աշխարհի մեծ պետություններն են Չինաստանը, Հնդկաստանը, Ֆրանսիան,ԱՄՆ-ն, Մեծ Բրիտանիան, Ռուսաստանը, որոնցում ապրում են երկրագնդի բնակչության կեսից ավելին:

Ավելի քան երկու հազար տարի առաջ Հայաստանը ստեղծեց մի մեծ ու հզոր պետություն, որի սահմանները ձգվում էին Կասպից ծովից մինչև Միջերկրական ծով: Մոտ հազար տարի առաջ Միջերկրական ծովի ափին հայերը ստեղծեցին Կիլիկյան հզոր պետությունը: Պատմական Հայաստանի մեծ մասը՝Արարատ լեռը, Անի մայրաքաղաքը զավթել են թուրքերը:

Հայաստանի նոր անկախ պետությունը հաստատվեց 1991թ. սեպտեմբերի 21-ին,որը մեծ տոն է բոլոր հայերի համար:

Հայաստանի Հանրապետությունը ողջ երկրագնդի համայն հայության մայր հայրենիքն է:Հայաստանը գտնվում է Հայկական լեռնաշխարհի հյուսիսային մասում: Հայաստանի բուն բնակիչները հայերն են՝որոնք վաղնջական ժամանակներից բնակվում են Հայկական լեռնաշխարհում: Հայաստանի Հանրապետությանը բնորոշ է հայկական բնության անկրկնելի գեղեցկությունը, հավերժական ձյունով պատված լեռնագագաթները, փարթամ անտառները, ալպյան խոտավետ մարգագետինները, բարեբեր դաշտերն ու հովիտները, որոնց միջով հոսում են բազմաթիվ գետեր ու գետակներ: Իրենց գեղեցկությամբ առանձնանում են Սևանա լիճը, Արագած և Արարատ լեռը, Խոսրովի անտառը և այլն:

Հայաստան բառը առանձնապես թանկ է յուրաքանչյուր հայի համար, որովհետև այն բոլոր հայերի անսահման սիրելի, հիասքանչ երկիրն է և յուրաքանչյուր հայ կյանքով և գործով իր նպաստը պետք է բերի հայրենիքի առաջընթացին, պատրաստ լինի աշխատելու ի բարօրություն հայրենիքի և պահպանի ու պաշտպանի այն այնպես, ինչպես հարկ կլինի պաշտպանելու իր սեփական տունը:

Հայաստանի Հանրապետության մայրաքաղաքը Երևանն է: Այն գտնվում է Արարատյան դաշտում և տարածվում է Հրազդան գետի երկու ափերին:

Երևանն ունի հին պատմություն: Այն հիմնադրել է Ուրարտական Արգիշտի թագավորը:

ՍԵՎԱՆԱ ԼԻՃ

Բնությունը մարդկանց նվիրել է շատ ու շատ հրաշալիքներ: Այդ գեղեցիկ հրաշալիքներից է Սևանա լիճը: Այն շատ գեղեցիկ է, երկնքի պես կապուտակ է, շրջապատված է լեռներով, որտեղից հոսող բազում ջրերը կարկաչելով լցվում են լճի մեջ: Սևանա լիճը հատկապես գեղեցիկ է լուսաբացին, երբ արևածագին արեգակը իր շեկ ճառագայթներն է գցում ջրի մեջ և աստիճանաբար բացում լճի կապուտակ գույնը: Սևանա լիճը հայտնի է իր իշխան և սիգ ձկնատեսակներով: Սևանի ափերին միշտ զով է լինում: Սևանը Հայաստանի ամենասիրված

հանգստյան գոտիներից է: Ամռան ամիսներին կիրակի և տոն օրերին Սևանում շատ հանգստացողներ են լինում: Ոմանք լողում են, պառկում ավազների վրա սևանալու մի մասն էլ նավակ է նստում, կամ ջրային հեծանիվ: Հետաքրքիր և ուրախ է անցնում օրը Սևանա լճում

Սևանը նաև վտանգավոր է: Անհրաժեշտ է Սևան գնալիս ուսումնասիրել անվտանգության կանոնները: Թեև Սևանում աշխատում է փրկարարական ծառայություն, սակայն տեղի են ունենում նաև ողբերգական դեպքեր:

Մենք՝յուրաքանչյուրս պետք է հոգ տանենք մեր գեղեցկուհու համար, պահպանենք և մաքուր պահենք Սևանի ջուր և շրջակա միջավայրը:

Սևանը ոգեշնչել է մեր արվեստագետներին: Բանաստեղծ և նկարիչ Գևորգ Բաշինջաղյանը նկարել է Սևանը և Սևանին է նվիրել մի գողտրիկ բանաստեղծություն, որն սկսվում է հետևյալ տողերով.

- Սևանի կապույտ ջրեր,կարծես թե նազում եք դուք,
Կարծես թե արծաթագույն կարկաչով վազում եք դուք....

ԸՆԿՈՒԶԵՆԻ

Հզոր, ճյուղատարած ընկուզենին ապրում է 300-400 տարի: Աշնանը հասունանում են խոշոր, կլոր, կանաչ պատյանով պտուղները՝ ընկույզների միջուկը անչափ համեղ, սննդարար և օգտակար է:Ընկույզի միջուկը անփոխարինելի սննմթերք է, իսկ խակ ընկույզից եփած մուրաբան անզուգական համ ունի: Ընկուզենու տերևները ոչնչացնում են միջատներին, բայց առաջացնում են գլխացավ և թուլություն: Խորհուրդ չի տրվում քնել ընկուզենու ծառի տակ: Ընկուզենու փայտը շատ ամուր է և արժեքավոր:

ԹԹԵՆԻ

Ամռանը , երբ հասունանում է թութը, հայկական բակերում հաճախ կարելի է տեսնել թթենու ծառի տակ մեծ սպիտակ սավան բռնած մարդկանց, որոնք սպասում են ծառից առատ թափվող թթենու պտուղներին: Մարդիկ բարձրանում են ծառի վրա և երկար փայտերով թոթափում են ծառի ճյուղերը, որպեսզի հասուն թութը թափվի:Թթենու պտուղը՝ սպիտակ կամ սև նուրբ է, քաղցր և հյութալի: Այն շատ համեղ լինելուց բացի շատ օգտակար է և արժեքավոր շատ նյութեր է պարունակում: Թութից պատրաստում են մուրաբա,օշարակ, հյութ, չիր, օղի և իր բուժիչ հատկությամբ հայտնի դոշաբ:

Թթենու տերևը հատուկ միջատի՝ թթենու շերամի միակ կերն է: Շերամի որդը սնվելով թթենու տերևով, արտադրում է գեղեցիկ ու նուրբ թելեր, որից գործարաններում ստանում են շքեղ և թանկարժեք կտոր՝ մետաքս: Թթենու շերամի որդը բերվել է Չինաստանից:

Շատ հետաքրքիր է այդ պատմությունը: Չինական պետությունը մահվան սպառնալիքով արգելել էր շերամի որդը երկրից դուրս բերել, որպեսզի շերամի մետաքսը միայն իրենք արտադրեն:

Մի Եվրոպացի վաճառական՝ կյանքը վտանգի ենթարկելով, գավազանի գլխիկի մեջ փոսիկ փորեց,նրա մեջ տեղադրեց շերամի որդեր և այդպես դուրս բերեց Չինաստանից:

Հին Հայաստանում տարածված է եղել թթենու շերամի մշակությունը:Հայաստանը նույնպես արտահանել է շքեղ մետաքս: Չինաստանից՝ Ասիայի հարավով, Հունաստանից Եգիպտոս և Եվրոպա է ձգվել մի մեծ առևտրական ճանապարհ՝ Մետաքսի ճանապարհը, որն անցել է Հայաստանով:

ԾԻՐԱՆԵՆԻ

Գարնանային այգու առաջին զարդը ծիրանենու ծաղիկներն են: 12-15 մ. բարձրությամբ ծառերը պճնվում են սպիտակ ծաղիկներով, իսկ ամռանը տերևների միջից կարծես աչքով է անում հյութալի, քաղցր, ոսկեդեղնավուն, ախորժաբեր պտուղները: Հայաստանի հրաշալի պտուղը՝ ծիրանը հայտնի է ամբողջ աշխարհում:

Թարմ ծիրանը սքանչելի համ ունի: Անգուգական համ ունեն նաև ծիրանից պատրաստված չիրը, մուրաբան, ջեմը, հյութը, կոմպոտը, օշարակը: Ծիրանը պարունակում է շատ օգտակար սննդանյութեր, ունի բազմաթիվ բուժիչ հատկություններ:

Ծիրանը գիտական բառարաններում կոչվում է հայկական պտուղ: Ծիրանի գույնը Հին Հայաստանում համարվում էր արքայական: Ծիրանի էր կոչվում արքայական թիկնոցը, որ կարված էր լինում ծիրանագույն շքեղ մետաքսից:

ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ

Դասավանդումը դաստիարակի փորձի և գործնական աշխատանքի ընթացքում կուտակած իմաստության զուգակցման արվեստն է: Յուրաքանչյուր դաստիարակից պահանջվում է լավագույն մեթոդների օգնությամբ նախադպրոցահասակ երեխաներին զինել բնության մասին պարզ և մատչելի գիտելիքներով:

Նախադպրոցական հաստատությունում աշխատող յուրաքանչյուր դաստիարակ պարտավոր է կիրառել ինչպես դասավանդման ավանդական, այնպես էլ ժամանակակից մեթոդներ: Եթե ուսուցչակենտրոն մեթոդներով անցկացվող պարապմունքների ընթացքում դաստիարակը աշխատում է հիմնականում խմբի բոլոր երեխաների հետ, կամ էլ ուսուցանվող նյութի, կամ թեմայի բովանդակությունը յուրացնելու նպատակով իրականացնում է անհատական աշխատանք, ապա համագործակցային ուսուցման մեթոդի կիառումը հնարավորություն է ընձեռում դաստիարակներին երեխաների հետ իրականացնելու խմբային աշխատանք, որի ընթացքում երեխաները աշխատում են փոխադարձ կախվածության պայմաններում, սովորում են գնահատել միմյանց, որևէ ընդհանուր առաջադրանք կատարում են միասին, ներկայացնում ընդհանուր կատարած առաջադրանքը: Այս մեթոդի նպատակը երեխաներին հասմազործակցության և համատեղ աշխատանքի հմտություններով զինելն է: Համագործակցային ուսումնառության մեթոդի կիառումը օգտակար կարող է լինել թե թե բարձր առաջադիմություն, թե ցածր առաջադիմություն ունեցող երեխաների համար: Համագործակցային մեթոդի կիրառման հինական քայլերն են՝

1. Ուսուցանվող նյութի նպատակի հստակ սահմանում
2. Շարժառիթի, դրդապատճառի ստեղծում
3. Ուսուցանվող նյութի , թեմայի վերաբերյալ տեղեկատվության մատուցում
4. Համագործակցային խմբերի ստեղծում, երեխաներին թիմերի բաժանում
5. Թիմային աշխատանքի վերջնական արդյունքի ներկայացում

Համագործակցային ուսուցման օրինակելի պարապմունք

1. Խմբի երեխաներին բաժանել 5 հոգանոց խմբերի: Յուրաքանչյուր խմբի սեղանների վրա նախապես դասավորել մի դեպքում ծառի, մյուս դեպքում ծաղիկի, նկարների խճանկարներ և

առաջարկել խմբերին մասերից հավաքել պատկերները: Աշխատանքի ավարտից հետո յուրաքանչյուր խմբի որևէ անդամ պետք է ներկայացնի իրենց հավաքած պատկերը առանձին-առանձին անվանելով մասերը և դրանց կրևորությունը տվյալ բույսի համար. Համեմատելով բոլոր խմբերի աշխատանքները ողջ խմբի հետ կատարել ընդհանուր եզրակացություն ներկայացնելով բոլոր բույսերի ընդհանրությունները և առնձնահատկությունները, աճման համար անհրաժեշտ պայմանների կարևորությունը և դրանց օգտակարությունը և դրանց նկատմամբ վերաբերմունքի ճիշտ դրսևորումները:/

Նույն պարապմունքը կարելի է կազմակերպել ամենատարբեր թեմաներով թռչուններ, կենդանիներ, ծկներ, մրգեր, բանջարեղեն և այլն/

2. Երեխաների մեջքի հատվածում փակցվում, կամ թելի օգնությամբ կախվում է տարբեր բանջարեղենների , մրգերի, կամ հատապտուղների նկարներ: Դաստիարակի հրահանգից հետո երեխաները փնտրում են իրենց զույգերին և զբաղեցնում իրենց համար նախատեսված տեղերը՝ մի դեպքում այն սեղանների շուրջ ուր դրված է այգու այսինքն մրգերի ծառերի, մյուս դեպքում բանջարանոցի , երրոդ դեպքում անտառի թփեր պատկերող նկարներ: Այնուհետև խմբում քննարկումներ կատարելուց հետո յուրաքանչյուր խմբի մի ներկայացուցիչ ներկայացնում է այն վայրը ուտեղ աճում են իրնց վրա ներկայացված նկարրի բույսը , ինչ պայմաններ և խնամք է անհրաժեշտ տվյալ բույսի աճման համար, պատմում են թե ինչպիսի վարքագիծ պետք է դրսևորել տբյալ վայրում: Տվյալ խմբի ցանկացած անդամ կարող է լրացնել և շարունակել իր թիմակցի մտքերը:

Նույնատիպ պարապմունք կարելի է անցկացնել կենդանական աշխարհի տարբեր ներկայացուցիչների՝ ծկներ, ընտանի և վայրի կենդանիներ, թռչուններ նկարներով:

ԾՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔ

Նախադպրոցական հաստատություններում երեխաների հետ իրականացվող էկոլոգիական դաստիարակության կարևորագույն բաղադրիչներից մեկը ծնողների հետ տարվող աշխատանքն է: Այն խնդիր ունի ծնողներին ներկայացնել նախադպրոցահասակ տարիքի երեխայի էկոլոգիական կրթության և էկոդաստիարակության անհրաժեշտությունն ու կարևորությունը: Ծնողների հետ իրականացվող աշխատանքը կօգնի, որ նրանք յուրացնեն երեխաների էկոլոգիական մտածելակերպի, վարքագծի ձևավորման ուղղությամբ իրականացվող աշխատանքների արդյունավետ ձևերն ու մեթոդները:

Ծնողների հետ տարվող աշխատանքները նախադպրոցական հաստատություններում իրականացվում են ծնողական ժողովների, ծնողների հետ տարվող զրույցների, նրանց համար կազմակերպվող բնապահպանական թեմաներով համաժողովների, կլոր սեղանների, բանավեճերի, խորհրդատվությունների միջոցով: Ծնողների հետ տարվող աշխատանքը պայմանականորեն կարելի է բաժանել ծնող- մանկավարժ և ծնող – մանկավարժ - երեխա ուղղությունների: Ընդ որում աշխատանքի պլանավորման ընթացքում խիստ անհրաժեշտ է հաշվի առնել ծնողների զարգացածության աստիճանը, նրանց հետաքրքրությունների շրջանակը: Մինչ որևէ աշխատանք պլանավորելը և սկսելը կարևոր է նախապես մշակված հարցաշարերով ուսումնասիրել ծնողների վերաբերմունքը և տեղեկացվածության աստիճանը բնապահպանական խնդիրներին: Նախատեսված աշխատանքները կարելի է իրականացնել

համայնքներում համընդհանուր ձևով, ծնողների առանձին խմբերի հետ, ինչպես նաև անհատական աշխատանքի ձևերի կիառմամբ:

Խորհուրդները, որ մանկավարժների կողմից պետք է տրվեն ծնողներին, նպատակաուղղված են երեխայի բնապահպանական դաստիարակության, բնապահպանական մտածելակերպի և վարքագծի ձևավորմն հարցերին, օրինակ՝ ինչպես արվեստի, կերպարվեստի, երաժշտության, գրականության, թատրոնի ,քանդակագործության միջոցով երեխաներին ծանոթացնել բնության երեևույթներին, երեխաների մեջ սեր արթնացնել բնության, հայրենիքի, իրեն շրջապատող մարդկանց նկատմամբ, ինչ գրականություն, գրքեր կարդալ, բանաստեղծություններ և երգեր սովորեցնել, զբոսանքների և քաղաքից դուրս ընտանեկան էքսկուրսիաների ընթացքում բացատրել բնության գրկում վարքագծի անհրաժեշտ, առավել կարևոր նորմերը: եթե տանը խնամվում են սենյակային բույսեր, կամ ունեն ընտանի կենդանիներ՝ ինչպես կազմակերպել դրանց խնամքը: Եթե երեխաները անտարբեր են, անփույթ վերաբերմունք ունեն բույսերի կամ կենդանիների նկատմամբ՝ինչպես փոխել նրանց վերաբերմունքը: Ինչ խաղեր կազմակերպել երեխաների հետ, որոնք կնպաստեն բնապահպանական ճանաչողական ունակությունների ձևավորմանը:

Էկոլոգիական դաստիարակության խնդիրների իրականացման գործընթացում հատկապես արդյունավետ է ծնողների հետ կազմակերպվող կլոր սեղանները, որի ընթացքում ծնողների կողմից բարձրացված հարցերի սպառիչ պատասխանները նախադպրոցական հաստատությունում աշխատող մանկավարժները տալիս են իրենց օգտակար խորհուրդների միջոցով:

Ծնողների հետ կարելի է զրուցել հետևյալ թեմաների շուրջ. «Թող ծաղկեն ծաղիկմնորը», «Կանաչ դեղատուն», «Հրդեհ», «Անտառի բնակիչները», «Խնայենք ջուրը», «Մաքուր պահենք շրջակա միջավայրը», «Անտառի բարիքները», «Անտառի բնակիչները» և այլն, կամ կլոր սեղանների կազմակերպման համար ընտրել «Մարդու և բնության փոխհարաբերությունները», «Հասարակության դերը շրջակա միջավայրի պահպանության և մաքրության խնդրում» «Բնության ազդեծությունը հասարակության զարգացման վրա», «Ծնողի մասնակցությունը երեխայի էկոլոգիական դաստիարակության գործընթացին», « Ինչպես ներգրավել երեխային սենյակային բույսերի և ծաղիկների խնամման աշխատանքներին» և այլն:

Բնության մեջ կատարվող աշխատանքներին երեխաների ներգրավվածության վերաբերյալ ծնողների իրազեկությունը հնարավորություն կնձեռի նրանց իրենց երեխաներին ընդգրկելու այնպիսի աշխատանքներում, ինչպիսիք են ծաղկի սերմեր ցանելը,ծաղիկներ և ընտանի կենդանիներ խնամելը: Կատարելով իր տարիքին և ուժերին համապատասխան բազմապիսի աշխատանք երեխան ձեռք է բերում այնպիսի հատկություններ, ինչպիսիք են ջանասիրություն, բնությանը օգնելու պատասխանատվությունը, սերը դեպի բնությունը և այլն:

Ծնողների հետ տարվող աշխատանքի իրականացման համար անհրաժեշտ է հաշվի առնել նաև ծնողների նախասիրությունները:

ԵՐԵԽԱՆԵՐԻ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻՆ ՈՒՂՂՎԱԾ

ՕՐԻՆԱԿԵԼԻ ՀԱՐՑԱՇԱՐ ԾՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1. Ն/Դ հաստ. համար, խումբը, ծնողի անուն, ազգանունը _____

2. Ինչ է ուսումնասիրում բնապահպանությունը և ինչ է ուսումնասիրում _____

3. Հետաքրքրում է Ձեզ բնապահպանական խնդիրներ _____

4. Ձեր վերաբերմունքը բնությանը, կենդանիներին, թռչուններին _____

5.Համաձայն եք համագործակցելու Ն/Դ հաստատության հետ , նշեք մի քանի ձևեր _____

6. Երեխաների ընթերցանության համար նախընտրած գրականության մեջ տեղ գտել են արդյոք գրքեր բնության վերաբերյալ _____

7. Ն/Դ հաստատության կողմից իրականացվող էկոլոգիական դաստիարակության ուղղությամբ տարվող աշխատանքների Ձեր գնահատականը _____

8. Ձեր առաջարկություններն ու ցանկությունները _____

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ - ԳԾԱՆԿԱՐՆԵՐ

Կենդանուն իր պոզերի կամ եղջյուրների հետ
միատին գունավորի՛ր նույն գույնով



Մարմնի մասերը սլաքով միացրու
համապատասխան կենդանուն



Գունավորիր ծաղիկները



Կտրիր և լրացրու պատկերներն այնպես,
որ կենդանին ամբողջանա













Սլաքով ցույց տուր տվյալ կենդանու
համապատասխան ուտելիքը





Միացրու մայրիկին իր ձագուկի հետ











ԻՆՉ ՍԻՐՈՒՆ է

Հ. Հայրապետյան

Ի՜նչ սիրուն է անուշ գարնան
Խենթ ու խելառ էն քամին,
Որ սուլում է կտրի վրա,
Թխկթխկացնում ապակին:
Ի՜նչ անուշ է սիրուն գարնան էն անձրևը խելագար,
Կտկտում է կտրի վրա,
Մերթ կամացուկ, մերթ վարար:

ՎԵՐՋԻՆ ՓԱԹԻԼՆԵՐԸ

Հ. Հայրապետյան

Չարաճճի ու կռվարար
Փաթիլները պաղ ձյունի
Ուրախ խաղում, զարկում իրար,
Հրիրում են մին-մինի:
Ապա հոգնած իջնում գետին,
Գրկվում են իրար հետ
Ու ջուր դառած երգով ուժգին՝
Առաջ վազում դեպի գետ:

ԵՍ ԽՆՁՈՐ ԵՄ

Լ. Պողոսյան

Ես խնձոր եմ՝
Նուրբ կեղևով,
Կարմրաթուշ եմ,
Շատ անուշ եմ:

Մայր ծառից եմ
Սնունդ առել,
Արևից եմ
Ես քաղցրացել:
Դե մոտեցե՛ք,
էլ մի սպասեք,
Դե՝ մոտեցեք,
Համտես արեք:

ՄԱՆՈՒՇԱԿ

Գ. Դոդոխյան

Կապույտ գլխով,
Կանաչ ոտով,
Ես ծաղիկ եմ՝
Անուշ հոտով:
Թեև տունկս փոքրիկ է, ցած
Արոտներում միշտ թաք կուսցած,
Բայց իմ փունջը՝ իբրև մի զարդ,
Տեսնում է միշտ ամեն մի մարդ:
Ես եմ սիրում գարնան գուշակ,
Իմ անունն է՝ մանուշակ:

ՁՆԾԱՂԻԿ

Ա. Հայրապետյան

Ամբողջ ձմեռ
Վերմակ առել,
Քուն էր մտել մի ծաղիկ,
Ձյունի ծոցում Նա չէր մրսում,
Քունն էր հանգիստ, անուշիկ:
Երբ արևը Իր բարևը
Տվեց սառած աշխարհին,
«Ելեք, ելեք, Սիրուն բալեք», -
Ձայն տվեց նա բոլորին:
Ձյունը ճեղքեց, Ելավ, կանգնեց
Բոլորից շուտ մի ծաղիկ,
Սարդիկ տեսան, Ուրախացան,
Անվանեցին՝ ձնծաղիկ:

ԾԱՌԱՏՈՒՆԿ

Հ. Հայրապետյան

Փոս ենք փորում,
Ծառ ենք տնկում
Ուրախ Երգով ու կանչով,
Որ մեծանա Ու ճյուղեր տա,
Ծածկի սիրուն կանաչով:
Ու երբ ամռան Արևը գա
Իր շողերով շողողուն,
Ծառը սիրով Հանգիստ կտա
Մեզ իր անուշ ստվերում:

ՁՅՈՒՆԻԿ

Հ. Աղաբաբ

Սառը ձյունի սառը գրկում
Մի ծաղիկ է ծլում, ծաղկում,
Թևերը՝ քնքուշ, թևերն՝ սպիտակ,
Աչիկները՝ բաց կապուտակ,
Ձյուն ու ծաղիկ...
Ա՛յ քեզ զարմանք,
Ձյուն ու ծաղիկ Ունեն մի կյանք:
Դա ձմեռվա Մի ծաղիկ է,
Ձյունից ծնված ~~Մի ծաղ~~իկ է:

ԱՐԻ, ԱՐԻ, ԶՈՎ ԱՆՁՐև

Մ. Կորյուն

Դաշտերն անձրև են ուզում,
Ծառերն անձրև են ուզում,
Արի, արի զով անձրև,
Մեր բերքն արա ծով, անձրև,
Առատ անձրև գա դաշտին,
Որ նա վերջ տա երաշտին,
Դե շուտ արի զով անձրև,
Մեր բերքն արա ծով, անձրև:

ՏԱՏԻԿՆ ՈՒ ԹՈՌՆԻԿԸ

Պ. Խաչատրյան

- Տատի, ի՞նչու մեր բակում
Ծիտիկները չեն երգում:
- Չոր է բակը, իմ Լալա, Այստեղ ծիտ կծլվլա՞:

Այ, թե հողը դու փորես,
Գցես սիրուն մի պարտեզ,
Այն ժամանակ, ի՛նչ ասեմ...
Ես էլ համերգ կլսեմ:

ԲՈՂԲՈՋԸ

Է. Ավագյան

Դուք չկարծեք, թե դողդոջն եմ,
~~Հ.Պողոսյան~~ Ի՞նչ անենք, թե մերկ բողբոջն եմ,
Ես ծնվել եմ ծառի ճյուղին, իմ արևոտ սենյակում,
Ձմռան ցրտին, մառախուղին:
Սպասել եմ, որ արև գա,
Տաքուկ-տաքուկ ինձ համբյուր տա,
Որ ես գույն -գույն շորեր հագնեմ, իմ ցնցուղով ջրեցի,
Ծառի ճյուղին ուրախ կանգնեմ: Խնամեցի, սիրեցի

Որ ես լցվեմ, աճեմ սիրուն,
Առանց տերև էլ ի՞նչ գարուն,
էլ ի՞նչ գարուն, երկինք պայծառ,
Երբ քնած են ծաղիկ ու ծառ:

ԾԻԾԵՌՆԱԿ

Գ. Գաբիելյան

Ունեմ սուր աչք,
Ամուր թևեր
Ու թռչում եմ
Թե՛ վար, թե՛ վեր,
Շուրջը լցնում
Ծափ ու հևքով
Ու ձեզ ծանոթ
Անուշ երգով
Թե թռչում եմ
Ամպերից վեր,
Ուրեմն՝ օրը
Ձինջ է, արև...
Իսկ թե մոտ եմ
Թռչում հողին,
Ուրեմն՝ անձրև
Պիտի մաղի:
Ձեր ընկերը՝
Անձրև օրվա
Լրաբերը...

ԻՄ ԾԻԾԵՌՆԱԿ

Հ. Պողոսյան

Իմ արևոտ սենյակում,
Պատուհանիս լայն գոգում,
Ծաղկամանում սիրունիկ
Ես աճեցրի մի ծաղիկ:
Իմ ցնցուղով ջրեցի,
Խնամեցի, սիրեցի
Ալ ծաղիկը խորդենու:
Կու՞զեք գաղտնիքս ասեմ.
Ես ածղիկս աճեցրի,
Խնամեցի տատիկիս:

ԹԻԹԵՌՆԻԿ

Լ. Պողոսյան

Ի՞նչու ես միշտ,
Ա՛յ թիթեռնիկ,
Մենակ թռչում
Ծաղկից ծաղիկ:

Ե՛կ թռչկոտենք
Մենք իրար հետ
Ծաղիկների
Մեջ բուրավետ:

Սիրուն թիթեռ,
Մի վախենա,
Արի՛ մոտիկ,
Քեզ ձեռք չեմ ռա:

Չէ՞ որ ես էլ,
Իմ թիթեռնիկ,
Շատ եմ սիրում
Ծիլ ու ծաղիկ...

ԳԱՐՈՒՆ

Գ. Մովսիսյան

Նորից եկան թռչունները,
Նորից առվակը երգեց,
Ձնծաղիկն իր թերթերը
Դեպի արև մեկնեց:
Կանաչ հագավ
խնձորենին, ճերմակ հագավ բալենին,
Կանաչեցին արոտները՝
Մոտիկ սարի լանջերրն:
Մանուկները վազվզում են, էլ չեն ուզում գնալ տուն,
Ծիծաղում են ու երգում են՝
Եկա՛վ գարուն, ջան գարուն:

ՏԵՐԵԱԹԱՓ

Հովհ. Թումանյան

- Ա՛յ փոքրիկներ, ա՛յ սիրուններ,-
Ասավ քամին ուերևներին,
Աշուն եկավ, մոտ է ձմեռ,
Գույներ հագեք խայտաբղետ,
Ի՞նչ եք դողում, ծառի ծերին :
Ոսկի, դեղին վառ ծիրանի
Գույներ հագեք խայտաբղետ

Ու ճյուղերից ծեր մայրենի
Եկեք ինձ հետ, փախեք ինձ հետ...
Եկեք տանեմ հեշտ ու անթև,
Անհետ ճամփով, անհայտ տեղեր,
Չեք իմանա այնուհետև...
էլ ինչ է դող, ինչ է ծմեռ...
Տերևները հենց լսեցին,
Նախշուն-նախշուն գույներ հագան,
Սվսվալով տխուր երգեր՝
Քամու թևին թռան, փախան :

ԱՇՈՒՆ

Հովհ. Թումանյան

Դեղնած դաշտերին
Իջել է աշուն,
Անտառը կրկին
Ներկել է նախշուն :
Պաղ-պաղ մեգի հետ
Փչում է քամին,
Քշում է տանում
Տերևը դեղին:
Տխուր հանդերից
Մարդու անասուն,
Քաշվում են կամաց
Իրենց տունն ու բուն:

ԱՇՆԱՆ ԵՐԳԸ

Հ. Հայրապետյան

Տերևները քամու հետ
Պար են բռնել առաջ՝ հետ,
Խշխշում են ու երգում
Նոր զարդարված պուրակում :
- Գալդ բարր, այ աշուն,
Ի՜նչ սիրուն ես, ի՜նչ նախշուն:
Գետակը գիժ ու պղտոր
Շտապում է դեպի ծոր,
Քչքչալով ծորակում
Փրփրում է, երգում.
Գալդ բարի, ջան աշուն,
Ի՜նչ սիրուն ես, ի՜նչ նախշուն
Կռունկները կռկռան
Թևին տվին ու թռան,
Դեպի հարավ ծգվեցին,
Կռկռացին, երգեցին :

ԳԱՐՆԱՆ ԵՐԳ

Հ. Հայրապետյան

Սարյակն եկավ՝ թևին գարուն,
Բարև տվեց արևին :
Արեգակը ցոլաց, ժպտաց,
Պատասխանեց բարևին :

Ու զարթնեցրն ձմռան քնից
Խոտ ու ծաղիկ, թուփ ու ծառ,
Ելան, նախշուն շորեր հագան,
Զարդարեցին դաշտ, անտառ :
Լուրը գնաց, հասավ հարավ,
Թե՝ զարթնել են խոտ, ծաղիկ,
Թևին տվին, թռան, եկան
Թռչունները երգեցիկ :

Հավք ու ծաղիկ, առվակ ու գետ,
Զեփյուռի հետ միասին,
Խումբ կազմեցին ու երգեցին
Գովքը կարմիր մայիսի :

ԱՇՈՒՆ

Հ. Հայրապետյան

Դաշտ ու այգի դեղին հագան,
Ծառ ու ծաղիկ մերկացան,
Թռչունները երամերամ
Մեր աշխարհից հեռացան :

Օրը մռայլ, ցուրտ ու տխուր,
Բարակ անձրև է մաղում,
Սեգն է պատել դաշտ ու բոլոր,
էլ մարդ չկա դաշտերում :
Ձար ագռավը ծառի վրից
Ձմռան երգն է կռկռում,
Մարդ, անասուն տուն ու բնից
Ծերուկ հյուրին սպասում :

ԼՈՒՍԻՆ-ԼՈՒԱԻՆ

Հ. Շիրազ

Կլոր լուսին,
Սարի ուսին,
Լույսի կրակ,
Շողն երեսին :
Ամպի բարակ
Քողն երեսին :

Մթնով դուրս գա,
Լույսովտուն գա,
Աչիկներին
Անուշ քուն գա :
Լուսին-լուսին,
Կլոր լուսին,
Աստղ ու լուսին,
Միշտ միասին :

ԱՄՊԻԿԻ ԵՐԳԸ

Գ. Գաբրիելյան

- Թեթև ամպիկ,
Սև-սև ամպիկ,
Աղբյուր չունես
Դու վրադ,
Որտեղի՞ց ես
Պարգևում մեզ
Այդքան ջրերը Առատ :
- Մի քիչ զովից,
Մի քիչ ծովից
Թևիկներով
Իմ անտես՝
Հավաքում եմ
Կաթիլ-կաթիլ,
Առու-առու
Տալիս ձեզ :

ՁԱՏԻԿԸ

Գ. Եղիկյան

Ես զատիկ եմ,
Խատուտիկ եմ,
Մեր պարտեզում
Մի հատիկ եմ :
Հյուր եմ գալիս
Գարնան օրով,
Ինքս կլոր
Կարմիր շորով :
Մեջքիս ունեմ
Սև-սև պուտեր,
Ունեմ մանրիկ
Սիրուն տոտեր :
Թռչկոտում եմ
Ծաղկեծաղիկ,
Ծծում նեկտար,
Խմում շաղիկ :

Բայց արևը
Հենց որ մտնի,
Իմ հին բույնը
Ես չեմ գտնի :
Որ թփում էլ
Տանի քունս,
Հենց այն տեղ է
Լինում բույնս:

ԳԵՏԱԿ

Լ. Պողոսյան

Կա՛ց, սիրասուն իմ գետակ,
Լսիր, ինչ եմ քեզ ասում,
Քո ջրին է սառնորակ
Իմ բալենին սպասում:
Դու իմ բարի դու իմ ժիր,
Իմ խնդրանքը մի մերժիր,
Արագ ահսնենք մեր պարտեզ,
Բալենին սպասում է մեզ:
-Ես չեմ մերժում խնդրանքդ,-
Խոսեց գետակը վճիտ:
-Գնա դույլ բեր, ջուր տամ քեզ,
Ջուր տար, ջրիր բալենիդ:
Թող իմ ջուրը շիթ առ շիթ:
Դառնա ծիծաղ ու բարիք...

ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ

Մ. Կորյուն

***

Ձեռքեր չունի,
Ներկեր չունի,
Դաշտն է ներկում
Հազար գոցնի: (Աշուն)

***

Ի՞նչն ընկնի ժայռից՝
Ամբողջ կմնա,
Մի բաժակ ջրից
Նա կմահանա: (Թուղթ)

***

Ինքը փոքրիկ,
Կարմիր կուժ,
Դուսը՝ կոկիկ,
Ներսը՝ փուշ: (Մասուր)

***

Ոտքը՝ հողում,
Գլուխը՝ դրսում,
Հազար շոր ունի՝
Դարձյալ մրսում է: (Կաղամբ)

***

Կա մի հսկա կենդանի,
Եվ խելացի, և բարի,
Յոթ տարին մեկ անգամ
Ձագ է տափս աշխահին: (Փիղ)

ՄԻ բարձի վրա
Անթիվ ասեղներ
Բայց ոչ մի ասեղ
Չես կարող թելել: (Ոզնի)

***

Սև է՝ սաթի նման,
Սպիտակ է՝ կաթի նման,
Պոչը՝ մկրատի նման: (Ծիծեռնակ)

***

Ձմռանը տաքացնում է,
Գարնանը՝ ուրախացնում,
Ամռանը հովացնում է,
Աշնանը՝ լիացնում: (Անտառ)

***

Այն ի՞նչն է, ի՞նչը,
Դեղին պուտուկ,
Մեջը լիքը
Կարմիր ուլունք: (Նուռ)

***

Թև ունի, թռչուն չի,
Միջատ է, մրջյուն չի: (Մեղու)

***

Հազին մուշտակ դեղին-մեղին,
Թշնամին է հավի ցեղին: (Աղվես)

***

Այն ո՞վ է իր գեղեցկությամբ հիացած՝
Նայում անվերջ պաղ ջրերին՝ կռացած: (Ուռենի)

***

Այն ի՞նչն է, որ կմնա լուռ,
Թեկուզ հազար կտոր անես.
Բայց դու ինքդ հոնգուր-հոնգուր
Նրա վրա լաց կլինես: (Մոխ)

***

Գսալիս է փաթիլ-փաթիլ՝
Ուրախ, պարելով,
Գնամ է կաթիլ-կաթիլ՝
Արցունք թափելով: (Ձյուն)

* * *

Այն ո՞վ է, որ
Ունի ասեղ անհամար,
Բայց ոչ մի շոր
Դեռ չի կարել իր համար: (Ոզնի)

***

Հազար եղջյուր ունի գլխին
Ու մի ոտքը՝ հողում,
Ծնվում, ապրում ու մեռնում է
Միևնույն տեղում: (Ծառ)

* * *

Մի նյութ գիտեմ զարմանալի,
Մեկ կարծր է, մեկ՝ ջրալի.
Մեկ էլ տեսար՛ սուսիկ-փուսիկ
Թևեր առավ, թռավ երկինք: (Ձուր)

***

Ես մի կամուրջ գիտեմ՝ շքեղ, գույնզգույն,
Ծայրերը՝ հողին, իսկ կամարը՝ երկնքում,
Նրան մարդիկ միայն հեռվից են տեսել,
Ոչ վրայով, ոչ էլ տակով են անցել: (Ծիածան)

* * *

Այն ի՞նչն է, ի՞նչը,
Ունի սիրուն մի գլխարկ՝
Ինքն էլ կանգնած նրա տակ: (Սունկ)

* * *

Ի՞նչ պտուղ է՝ մեջը լի
Ալ հատիկներ հյութալի: (Նուռ)

* * *

Մի բարակ ոտք ունեցավ,
Ոտքի ծայրին՝ գլխի տեղ
Մի փունջ ոսկե գնդասեղ: (Հասկ)

ԳԻՇԵՐՆ ԱՆՏԱՌՈՒՄ

Սիմակ

Չորս սայլորդ էինք, վերադառնում էինք քաղաքից: Հունվար ամիսն էր: Անցնում էինք անտառի միջով: Մթնեց, պետք է գիշերեինք: Գրիգոր քեռին, որ բոլորից մեծն էր և մեր գլխավորը, մի հարմար բացատ ընտրեց:

Եզներն արձակեցինք, ծառի ճյուղերից մի մեծ մսուր շինեցինք և եզներին խոտ ու դարման տվեցինք: Երկու հոգով սկսեցինք չոր ճյոիղեր կտրատել ու փայտ հավաքել, իսկ մյուս երկուսը սայլերի ձյանը մաքրեցին: Երկու տեղ կրակ վառեցինք, մեկը եզների այս կողմը, մյուսը՝ այն կողմը, որ եզները չմրսեն:

Գրիգոր քեռին հանեց պաշարը, լավ կերանք, մոտիկ աղբյուրից էլ կուշտ ջուր խմեցինք, կրակին փայտ ավելացրինք և մեր յափնջիներում փաթաթված՝ կրակին մոտիկ պառկեցինք:

Շատ ժամանակ էր անցել, թե քիչ՝ չգիտեմ, մեկ էլ Մելքոն ապերը գոռաց.

- Վեր կացեք, այ տնաքանդներ, գայլերը եկան, ի՞նչ անենք:

Հեռվից լսվում էր գայլերի ոռնոցը: Մեկը որ սկսում էր, մյուսները շարունակում էին: Նրանց աչքերը մթնում պսպղում էին: Եզները թողել էին իրենց խոտը և, մեջքներն իրար արած, գլխները կախած, անհանգիստ աչքերով նայում էին շուրջը և փնչացնում:

-Կրակը, կրակը մեծացրեք, թեժացրեք, - ձայն տվեց Գրիգոր քեռին արթնանալով: Նա իսկայն հասկացավ, թե ինչ է կատարվում:

Երկու կրակի վրա էլ փայտ լցրինք. կայծերը երկինք բարձրացան: Գայլերը մոտեցել, շրջապատել էին մեզ: Կրակի բոցով շատ լավ տեսնամ էինք նրանց բաց բերանները և փայլուն աչքերը: Սարսափելով լսում էինք նրանց ատամների չխչխկոցը:

- Վայ, Գրիգոր ջան, կորած ենք, ի՞նչ անենք, - ասում էր վախկոտ Մելքոն ապերը:

- Մի վախենաք, ոչինչ չի լինի, մսի հոտ են առել անիրավները... Այ, մի հրացան լիներ հա..., - ասում էրքեռին հանգիստ:

Թե ինչքան ժամանակ տևեց այս սարսափը, չեմ կարող ասել...Գայլերի օղակը հետզհետե նեղանամ էր... Ու այնքան էլ շա՜տ էին... Ես երեսուն ասեմ, դուք քառասուն իմացեք:

Երբ գայլերը այնքան մոտեցել էին, որ կարելի էր փայտը նետել, հասցնել նրանց, քեռին հրամայեց, որ վառվող ածխակոթերը նետենք գայլերի վրա:

«Դե, շատ» որ ասաց, բոլորս վառվող փայտերը նետեցինք գայլերի վրա:

Նրանց մեջ իսկույն իրարանցամ ընկավ ու հետ-հետ գնացին: Այդ միջոցին քեռին վերցրեց մի ահագին ածխակոթ և ուղղակի հարձակվեց ամենամոտ գայլի վրա: Սա սոսկալի ոռնոցով սկսեց փախչել, մյոաները հետևեցին նրան: Հինգ ռեպեից գայլերի ոռնոցը շատ հեռվից էր գալիս:

- էլ չեն գա, անհանգիստ մի լինեք, - ասաց քեռին, -տեսեք՝ եզներն ինչպես ուղղվեցին, հանգստացան ու սկսեցին խոտ ուտել...

Իսկապես, սպասեցինք տասը, տասնհինգ ռոպե, և գայլերը չվերադարձան:

Իսկ Գրիգոր քեռին փաթաթվել էր իր յափնջու մեջ և արդեն քնել:

ՄԱՆՈՒՇԱԿԸ

Գ. Մովսիսյան

- Վա՜յ, մայրի՜կ, որքան շա՜տ ես հավաքել ... , - զարմացած ձայն տվեց Աշոտը՝ տեսնելով նոր ձեռքին մանաշակների մի ամբողջ փունջ,իսկ ես դեռ ոչ մի հատ չեմ գտել...

- Դա քարերի արանքում փնտրիր. մանուշակը միշտ թաքնվում է...

- Ես հոգնեցի, մայրի՜կ,վերջապես ասաց նա՝ նստելով խոտերի վրա,այդ մանուշակը շատ

չար ծաղիկ է, հա՛ թաքնվում է, ինչո՞ւ մյուս ծաղիկները չեն թաքնվում:

- Մանուշակը թաքնվում է, որովհետև նա սովորական ծաղիկ չէ: Որպեսզի դու չնեղանաս նրանից, ես քեզ կպատմեմ մանուշակի հեքիաթը:

Մայրն էլ նստեց Աշոտի կողքին:

- Վաղուց, շատ վաղուց ապրում էր մի թագավոր: Այդ թագավորն ուներ մի փոքրիկ աղջիկ սիրուն-սիրան, կապույտ-կապույտ աչիկներով: Նրան շատ էր սազում կապույտ գգեստը: Ոչ ոք նրան չէր տեսել ուրիշ գգեստով: Այդ աղջկա անունը Մանուշակ էր: Մանուշակին անչափ փնտրում էր թագավորը և նրա համար տնկել տվեց մի սիրուն այգի, որը կարծես փոքրիկ անտառ լիներ:

Թագավորի պալատում ապրում էր պալատական մի չար կին: Նա բոլորովին չէր սիրում երեխաներին, Մանուշակին նույնիսկ ատում էր, որովհետև շատ սիրուն էր Մանուշակը, և հետագայում պետք է դառնար թագուհի:

Օրերից մի օր թագավորը մահանում է, և Մանուշակը մնում է որբ:

Բոլորը շատ սիրում էին նրան և անվանում՝ փոքրիկ թագուհի: Իսկ չար պալատականը մտածում էր. Ինչ թե, Մանուշակը լինի թագուհի՞ն:

Եվ նա որոշում է սպանել Մանուշակին: Մի օր, երբ ոչ ոք չկար այգում, նա գաղտնագողի իջնում է պարտեզ... Մանուշակը ծաղիկ էր քաղում և խաղում թիթեռների հետ: Հանկարծ նա տեսնում է ծառերի հետևում թաքնված կնոջը: Մանուշակը վախենում է. չարությունից այնպես այլանդակվել էր պալատականի դեմքը...

- Փախի՛ր, փախի՛ր, սիրո՛ւն Մանուշակ, - շշնջում են ծաղիկներն ու խոտերը:

Մանուշակը փախչում է: Ոտքերը շուտով հոգնում են, և նստելով քարերին՝ լաց է լինում:

- Ծառ դարձիր, սիրո՛ւն Մանուշակ,շշնջում են ծառերը:

- Ինձ կկտրի,լաց լինելով պատասխանում է Մանուշակը:

- Ջուր դարձիր,վշշում է փոքրիկ գետակը:

- Ինձ կխմի,արցունքների միջից խոսում է Մանուշակը:

- Ծաղիկ դարձիր, փոքրի՛կ Մանուշակ, թաքնվիր քարերի արանքում, տխրությունով շշնջում են ծաղիկները:

Մանուշակը, տեսնելով վազող կնոջը՝ պպզում է քարի հետևում ու ...

Երբ պալատականը կատաղած ու քրտնած մոտենում է, մնում է ապշած. Մանուշակը չկար...

- Ծառե՛ր, ո՞ւր է Մանուշակը, հարցնում է նա:

Ծառերը լուռ օրորում են գլխները:

- Առվակ, ո՞ւր է Մանուշակը...

Իսկ առվակը հոսում է քչքչալով, իբրև չի լսում նրա հարցը...

- Ծաղիկներ, ո՞ւր է Մանուշակը,զայրացած հարցնում է պալատականը: Ծաղիկները գլխիկները շրջում են դեպի արևը. չեն էլ ուզում տեսնել չար ու տգեղ կնոջը: Պալատական կինը բարկությունից ոտքը խփում է գետնին, և սիրտը պայթում է... Մարդիկ սկսում են փնտրել Մանուշակին՝ իրենց փոքրիկ թագուհուն: Հանկարծ Մանուշակի դայակը, կռանալով քարերի վրա, ձայն է տալիս.

- Ահա՛ Մանուշակը,և քարերի միջից դուրս է բերում քնքուշ, կապույտ մի ծաղիկ, որի թերթի վրա դողում էր արտասուքի կաթիլը:

- Այժմ իմացա՞ր, թե ինչու է մանուշակը թաքնվում,իր պատմությունն ավարտեց մայրիկը: Աշոտը տխուր նայում էր մանուշակների փնջին.

- Մայրի»կ, մեղք են, իզուր պոկեցինք, տե՛ս, արտասուքը դեռ վրան է...

ԵՂԱՆԱԿ ՔՈՒՅՐԵՐԸ

Ս. Մարշակ

Վաղուց, շատ վաղուց եղանակների թագավորության մեջ ապրում էին չորս քույր՝ Նազիկը, Արևիկը, Վարսիկը և Չյանիկը: Այնքան գեղեցիկ էին չորսն էլ, այնքան թռվռան, որ մայրը՝ Տարին, ոչինչ չէր կարողանում մերժել նրանց, և ապրում էին քույրերը ուրախ ու բախտավոր: Նրանք դպրոց էին գնում, տանը օգնում մայիկին, դասերից հետո խաղում բակում՝ իրենց ընկերների հետ. Եվ ահա նրանք մեծացան, հասուն աղջիկներ դարձան: Մայրը սիրում էր չորսին էլ: Օր ու գիշեր մտածում էր, թե ինչպես անի, որ իր զավակներին աշխատել սովորեցնի: Չ՞է որ ինքը ծերանում էր, իսկ նրանք՝ չափահաս դառնում: Հո չէ՞ր կարող միշտ ինքը նրանց պահել: Եվ նա որոշեց զանազան պարտականություններ հանձնարարել իր զավակներին:

Մեծին՝ Նազիկին, տվեց մարդկանց ուրախացնելու, երջանկացնել գործը:

- Ուր, որ գնաս, ժպիտ և ուրախություն ցանիր շուրջդ, ջերմ շունչ տուր մարդկանց,պատվիրեց նա աղջկան:

Եվ ահա Նազիկը, որը մեծ, կանաչ աչքեր ուներ և բարակ իրան, թռավ իսկույն մայրիկի հանձնարարությունը կատարելու: Ուր որ երևաց, տարածեց լույս ու ջերմություն: Նրա տեսքից անտառը սթափվեց, թափ տվեց իրեն, ծիլ ու ծաղիկ բացեցին իրենց աչիկները, թռչնիկներն սկսեցին ուրախ ծլվլալ, առվակները՝ խոխոջել: Անտառի քամին էլ, մեղմացած Նազիկի նրբին տեսքից, սկսեց մեղմիկ շնկշնկալ... Նազիկի տեսքից հուզվեցին նույնիսկ բարձր վերևներում կատակված անձրևները և թափվեցին երկրի վրա՝ առատ սնունդ տալով հողին:

Նայեց մայր Տարին պատուհանից և տեսավ՝ դինացի լեռները կանաչ, երկինքը՝ կապույտ, օդը՝ մաքուր: Ուրախացավ, որ իր ավագ աղջիկը լավ է կատարել իր պարտականությունը: Եվ որոշեց նրան նվիրել կանաչ-զմրուխտե ծաղկավոր հագուստ: Հագավ Նազիկը մոր թանկագին նվերն և շիկնեց ուրախությանից:

- Հիմա մոտ եկ դու, սիրելիս, Արևիկ, ասաց մայր Տարին երկրորդ աղջկան,դու պետք է մարդկանց հանես Նազիկի թողած անհոգ վիճակից, հիշեցնես նրանց, որ հերիք է՝ ինչքան ուրախացան, այժմ թող անցնեն աշխատելու՝ քանի օրերը երկար են ու տաք:

Թռավ իսկույն Արևիկը՝ մայրիկի հանձնարարությունը կատարելու: Նա սև, խոշոր աչքեր ուներ, որոնցից երբ նայում էր, կրակի խուրձեր էին թռչում:

Ուր որ երևաց Արևիկը՝ աշխաժություն, ուշխատանքի եռանդ առաջացրեց: Հողն ամեն ինչ արեց, որ արտերն ու այգիները լավ բերք տան:

Տեսավ մայր Տարին արտերը դեղնած, հասուն հասկերով, ծառերը մրգերի ծանրության տակ գլուխները հակած, ուրախացավ և որոշեց Արևիկին նվիրել կարմիր զգեստ: Արևիկն էլ ուրախացած մոր նվերից՝ այնպես ժպտաց, կարծես կրակե անձրև տեղաց աշխարհին:

- Իսկ դու, իմ շիկահեր Վարսենիկ,ասաց մայրը. - գնա, Արևիկի աճեցրած մրգերի հյութը տուր, ծառ ու ծաղիկ "երանգավորիր, մարդկանց տոնական տրամադրություն հաղորդիր:

Թռավ ամրակազմ Վարսենիկը՝ շեկ մազերը ծածանելով, արվեստագետի պես խոհուն հայացքով նայեց շուրջը, հյութով լցրեց և գեղեցիկ գույն տվեց մրգերին ու կանաչ տերևներին, մեղմեց Արևիկի թողած կրակե եղանակը, մի տեսակ քնքշություն տարածեց ամենուր:

Ուրիշ շատ գործեր էլ կատարեց նա: Շուկաները և մառանները լցրեց ամենայն բարիքով, մարդկանց բերեց քեֆ, ուրախություն, լեռները նախշեց բազմազան գույներով, և բնությունը Վարսենիկի մեղմ աչքերից ու հանգիստ տեսքից խաղաղվեց, մեղմացավ...

Երրորդ աղջկա աշխատանքից էլ գոհ մնաց մայր Տարին և Վարսենիկին նվիրեց վառ դեղին գույնի զգեստ, որը շատ սազեց նրա շեկ մազերին:

Չորրորդ աղջիկը՝ Չյունիկը, տեսնելով, որ իր ավագ քույրերը լավ գործեր կատարեցին մարդկանց համար, որոշեց հետ չմնալ նրանցից: Նա վերևներում կուտակված անձրևները ծյան

դարձրեց և փաթիլների ձևով թափեց դաշտերի ու անտառների վրա, որպեսզի բոլոր բույսերը ձյան փափուկ վերմակի տակ խոր քուն մտնեն, ուժ հավաքեն, գարնանը փարթամորեն աճեն ու բերք տան մարդկանց:

Ձյունիկը չմոռացավ նաև երեխաներին: Գիտենալով, մայր Տարին Նոր տարի պիտի ուղարկի մարդկանց, նա իսկույն թռավ տատիկի ու պապիկի մոտ: Տատիկին խնդրեց նվերներ պատրաստել երեխաների համար, պապիկին էլ խնդրեց՝ տանել այդ նվերները և բախշել Նոր տարվա տոնածառի շուրջ երգող ու պարող երեխաներին:

Բայց Ձյունիկը դրանով չբավարարվեց: Նա բոլոր երեխաներին դուրս կանչեց, որպեսզի նրանք փափուկ ձյան և սառույցի վրա խաղան, մաքուր օդում ամրանան:

Ուրախացավ մայր Տարին՝ տեսնելով Ձյունիկի կատարած աշխատանքը: Նա իր ամենափոքր դստրիկին բոցկլտուն աստղերով, ճերմակ բրդե վերարկու նվիրեց:

Մայր Տարին գոհ մնաց, որ դստրիկներն այդքան պարտաճանաչ կերպով էին կատարել իր բաշխած պարտականությունները: Ու այդ ժամանակվանից էլ ամեն տարի չորս քույր-եղանակներն իրար հետևից կատարում են իրենց պատականությունները, բոլորն էլ՝ սիրով ու ջերմասիրաբար:

ՈՍԿԵ ՄԱՐԳԱԳԵՏԻՆԸ

Մ. Պրիշվին

Երբ խատուտիկները հասնում են, ես ու եղբայրս միշտ դրանց հետ խաղ ենք անում: Պատահում էր, որ խաղալու էինք գնում, նա՝ առջևից, ես՝ հետևից:

Աերյոժա, - գործնական տոնով ձայն էի տափս: Նա շրջվում էր, իսկ ես խատուտիկը փչում էի ուղիղ նրա դենքին: Հետո նա էր սկսում և հենց որ ուշքս վրաս չէր լինում՝ ինքն էր փչում: Այդ հետաքրքիր ծաղիկները քաղում էինք միայն զվարճանալու համար: Բայց մի անգամ ես մի հայտնագործություն արեցի:

Մենք ապրում էինք գյուղում: Լուսամուտի դիմաց փռված էր մարգագետինը, որը ծաղկած բազմաթիվ խատուտիկներից ոսկեղեն էր թվում: Դա շատ գեղեցիկ էր: Բոլորն էլ ասում էին.«Շատ գեղեցիկ է: Ոսկե մարգագետին է»:

Մի անգամ առավոտ կանուխ վեր կացա ձկնորսության գնալու և նկատեցի, որ մարգագետինը ոսկի է, այլ ոչ թե՝ կանաչ: Երբ կեսօրի մոտ տուն էի վերադառնամ, մարգագետինը դարձյալ ոսկի էր: Ես սկսեցի հետևել: Երեկոյան մարգագետինը դարձյալ կանաչին էր տալիս: Գնացի խատուտիկներ փնտրելու, և պարզվեց, որ բույսն իր տերևները փակել է այնպես, ինչպես, ասենք, եթե մեր մատները ներսի կողմից դեղին լինեին, բռունցք անելիս դեղինը այլևս չէր երևա: Առավոտյան, երբ արևը դուրս եկավ, նկատեցի, թե խատուտիկները ինչպես են բացում իրենց բռունցքները, և դրանից էլ մարգագետինը նորից ոսկի է դառնում:

Այդ օրվանից սկսած՝ խատուտիկը մեզ համար դարձավ ամենահետաքրքիր ծաղիկներից մեկը, որովհետև նաև մեզ հետ պառկում էր քնելու ու մեզ հետ էլ վեր կենում:

ԱՆՏԱՌԻ ԱԱՏՂԵՐԸ

Ն. Նաիրյան

Գիշեր էր: Սաղաթախիւո ու թավուռո անտառում մութ էր:

Սարիկը շտապում էր շուտ հասնել գյուղ: Նա անտառի մթից չէր վախենում. մանկությունից սովոր էր այդ անտառներին: Միայն ոտքը մեկ-մեկ դիպչում էր անտառի նեղ շավիղի երկու կողմերում գտնվող կոճղերին ու ճյուղերին:

Մեկ էլ նկատեց ինչ որ փայլող լույսեր և մնաց ապշած: Սա ի՞նչ բան է: Որքան նա գիտեր անտառում ոչ ոք չէր ապրում:

Հանկարծ նա հիշեց, որ գայլերի ու կատուների աչքերը խավարի մեջ լույս են տալիս, և վախեցավ:

Մի՞թե դա գայլ է: Նա մի պահ կանգ առավ, որ տեսնի շարժվո՞ւմ են նրանք:

Բայց լույսերը չէին շարժվում:

Սուրիկը շարունակեց ճանապարհը: Լույսերը մոտենում էին: Երբ նա մոտեցավ, նկատեց, որ այդ ճրագներն ընկած են գետնին, մամուռների ու փտած ճյուղերի արանքում: Նա վերցրեց ճրագներից մեկը: Լուսատուն ոչ միայն չէր այրում ձեռքը, այլ նույնիսկ թաց էր: Նրանից փտած փայտի ու սունկի հոտ էր փչում: Տրորելով ձեռքի մեջ՝ Սուրիկը տեսավ, որ դա սունկ է: Նա պոկեց մի քանի այդպիսի սունկ, գրպանից հանեց թղթի մի կտոր, փաթաթեց ու լուսավորված շավիղով շտապեց դեպի տուն:

Հասնելով տուն՝ նա հորը ցույց տվեց այդ սնկերը:

Հայրը ասաց նրան.

- Այո՛, սիրելիս, կան սնկեր, որոնք գիշերը լույս են տալիս: Դրանք կոչվում են «Անտառի աստղեր»:

ԴԴՈՒՄ

Գ. Մովսիսյան

Դդումը դեղնել էր և թփի վրա հասունացել:

Թվում էր, թե դդումը դեղին գնդակ է և ոչ թե աճել է թփին, այլ փախել է որևէ չար տղայի ձեռքից ու թաքնվել:

Դավիթը մայրիկի հետ գնացել էր բանջարանոց և հիացած նայում էր թփերի մեջ շողշողացող դեղին դդումին և չէր համարձակվում պոկել այն:

Վախենում էր, որ չի կարողանա տանել, որովհետև դդումը մեծ էր:

- Հը, Դավի՛թ, դդումը տանե՞նք տուն:

- Դդումն ի՞նչ պետք է անենք, մայրիկ,հարցնում է Դավիթը:

- Դդումից կարելի է համեղ ճաշ պատրաստել,ասում է մայրիկը :

- Ես դդումի մուրաբա եմ սիրում, մայրիկ,ասում է Դավիթը:

- Լավ, Դավի՛թ, դդումը տանենք տուն և քեզ համար մուրաբա եփենք,ասում է մայրիկը և Դադթի օգնությամբ դդումը տանում տուն:

ԿՏԱԿ՝ ԳԱՆՁԻ ՄԱՍԻՆ

Վ. Այգեկցի

Մի իմաստուն և աղքատ մարդ ուներ ծույլ որդիներ: Մահվան ժամին նա կանչեց որդիներին և ասաց.

-Ով զավակներ, նախնիները շատ գանձ են թաղել մեր այգում, բայց ես ձեզ ցույց չեմ տա նրա տեղը: Այդ գանձը կգտնի նա, ով շատ աշխատի և փոս փորի: Հոր մահից հետո որդիներն սկսեցին ուշխուստել մեծ եռանդով և փոս էին փորում, որովհետև յուրաքանչյուրն աշխատում էր,

որ ինքը գտնի գանձը: Այգին սկսեց աճել ու զորանալ, առատ բերք տվեց և նրանց հարստացրեց գանձերով:

* * *

Իմաստուններից մեկը հարցում արավ ծառերին և ասաց.

- Ի՞նչն է պատճառը, որ դուք ինչքան բարձրանում եք, այդքան էլ խորը արմատներ եք գցում:

Եվ ծառերը այսպես պատասխանեցին.

- Ինքդ իմաստուն լինելով ինչպե՞ս է , որ չգիտես, որ մենք չենք կարող այսքան ճյուղեր կրելով մեզ վրա, դիմանալ հողմերի բռնությանը, եթե խորը արմատներ չգցենք : Տեսնում ես մեր եղբայր հաճարի և փիճի ծառերը, որոնք թեպետ և բազմաճյուղ են, բայց դարձյալ քամիներին ընդդիմանալ չեն կարող, որովհետև խորը արմատներ չունեն:

***

Ծովի գորտերը խորհուրդ անելով՝ ասացին.

- Ինչու՞ ենք դեղնած ու փորներս ուռած խեղդվում ջրի մեջ. դուրս գանք ցամաք ու կյանք վարենք, ինչպես ուրիշները:

Մի ծեր գորտ ասաց.

- Հայրս պատվիրել է ինձ, որ ծովի ապաստանը չթողնեմ, որովհետև բնությամբ վախկոտ ենք. գուցե դուրս գանք ու վախենալով հետ դառնանք և մեր վախկոտությունն ուրիշներին հայտնի դարձնենք:

Բայց գորտերը չլսեցին ծերունուն ու դուրս եկան, սակայն ոտնաձայն լսելով՝ փախան իսկույն ու ծովը սուզվեցին դարձյալ:

ՁՄՌԱՆ ԳԱԼԸ

Կ. Ուշինսկի

Ձմռան գալն ամենից շուտ զգում են թռչունները: Աշնան գալուն պես նրանց մեծ մասը խումբ - խումբ չվում է դեպի տաք երկրներ: Կաճ թռչուններ էլ, որ չեն չվում. նրանք ձմռանը մնում են մեզ մոտ:

Աշնան վերջին ծառերի տերևները թափվում են: Նրանք մերկանում են ու պատրաստվում են քուն մտնելու մինչև գարուն: Կեղևը վերարկուի նման պինդ փաթաթված է ծառին և չի թողնում, որ ծառը մրսի:

Աշնանը վայրի կենդանիների մորթիները ծածկվում են խիտ ու երկար մազերով: Նրանք իրենց համար տաք որջեր են շինում: Որջերում մեծ քանակությամբ ձմռան պաշար են հավաքում: Այդպես են սկյուռը, դաշտամուկը և էլի ուրիշ կենդանիներ:

Բայց կան վայրի կենդանիներ էլ, որ ձմռանը պաշար չեն հավաքում: Աղվեսը, գայլը ամբողջ ձմեռը սոված փորով դեսուդեն են թափառում՝ ուտելու բան ճարելու համար:

ՕԳՆԵՑԵ'Ք ԹՌՉՈՒՆՆԵՐԻՆ

Հենց որ ձմեռը մոտենում է, դաշտերն ու անտառները մերկանում են: Օրերը ցրտում են, կերը պակասում է: Գեղեցիկ ու երգեցիկ թռչունները թողնում են իրենց բները և հեռանում դեպի տաք երկրներ:

Մեզ մոտ մնում են ագռավները, կաչաղակները և ճնճղուկները: Նրանք մոտենում են մարդկանց բնակարաններին ու ավելի համարձակ են դառնում: Երբեմն ծառերի ճյուղերին նստած նրանք ժամերով սպասում են, թե իրենց ով մի բուռ հատիկ կամ մի կտոր հաց կտա: Այդ մասին դաստիարակչուհին պատմեց երեխաներին և վերջում ասաց.

- Երեխանե»ր, օգնեցե»ք ձմեռող թռչուններին, մանավանդ ծյունառատ ձմեռներին Առանց մեր օգնության նրանց համար շատ դժվար կլինի: Չէ՞ որ նրանք մեր բարեկամներն են, ամբողջ գարնանն ու ամռանը աշխատում են դաշտերում ու այգիներում, ոչնչացնում են վնասատու միջատներին ու կրծողներին ...

Երեխաները որոշեցին իրենց բակերում ու զբոսայգիներում կերաստեղաններ պատրաստել թռչունների համար:

ՈԶՆԻՆ

Արամն ու Լուսիկը շատ ուրախ էին: Քեռի Պետրոսը նրանց մի ոզնի էր բերել իր փոքրիկ ձագերով:

Շուտով ոզնին սովորեց Արամին ու Լուսիկին: Նա ձագերի հետ միասին վազվզում էր երեխաների հետևից: Հաճախ էլ ոզնին նրանց ձեռքից հաց ու միս էր առնում ...

- Ապրի ձեր ոզնին, - ասաց մի օր մայրիկը, - մառանի բոլոր մկներին ոչնչացրել է:

- Բանջարանոցի խլուրդներին էլ է փախցրել, - ասաց հայրիկը:

Ամբողջ գարնան ու ամռանը ոզնին երեխաների հետ էր:

Եկավ աշունը: Մի օր էլ ոզնին իր ձագերի հետ կորավ: Արամն ու Լուսիկը ամեն տեղ որոնեցին, բայց ոչ մի տեղ չգտան:

Նրանք շատ տխրեցին:

- Եթե կխոստանաք ձեռք չտալ, ես ձեզ ցույց կտամ նրանց տեղը, - ասաց հայրը:

- Խոստանո՛ւմ ենք, խոստանո՛ւմ ենք, - ասացին երեխաները:

- Ահա՛ այստեղ կտրած ծառերի տակ են: Նրանք փոս են փորել, խոտ են բերել, տաք տեղ պատրաստել և քնել: Նրանք ամբողջ ձմեռ պետք է քնեն: Իսկ գարնանը կարթնանան:

Եկավ գարունը: Երեխաները շատ ուրախացան, երբ ոզնին իր ձագերի հետ դուրս եկավ բնից և նորից սկսեց նրանց հետ խաղալ:

ՀԱՏԻԿԻ ԶԱՐԹՆԵԼԸ

Ցորենի հատիկը պառկած էր հողի տակ: Իսկ նրա մեջ քնած էր փոքրիկ սաղմը: Գարնան արևի շողը եկավ, կանչեց նրան.

- Զարթնի»ր, գարուն է:

Եվ հատիկի մեջ զարթնեց սաղմը: Զարթնեց, սաստիկ քաղց զգաց: Սկսեց ծծել իր մոտի պաշարը: Ծծեց, ծծեց ու մեծացավ: Հետո պատռեց պարուրները ու արմատները խրեց հողի մեջ: Փափուկ հողի մեջ նոր կերակուր էր որոնում:

Իսկ արևի ջերմությունը շարունակ քաշում էր վերևից: Եվ սաղմը ձգվում էր դեպի վեր: Ձգվե՛ց, ձգվե՛ց ու հանկարծ նրա դալար ծիլը դուրս նայեց հողի մի կոշտի տակից:

Ի՜նչ տաք էր, ի՜նչ պայծառ ու ի՜նչ ազատ նրա շուրջը:

Առավոտյան հովիկը քնքուշ զգվեց նրան: Ապա ցողի մի կաթիլ դրեց նրա կիսաբաց թերթիկին ու փսփսաց.

- Բարի լո՛ւյս:

Օգտագործված գրականության ցանկ

1. Ա. Չիլինգարյան, «Բնության պահպանության և վերափոխման էկոլոգիական ասպեկտներ»
2. Ռ. Ալեն, «Ինչպես փրկել երկիրը»
3. Մանկական ստեղծագործությունների ընտրանի
4. Ս. Թութունջյան, «Ծաղկաբուծությունը դպրոցում»
5. С.А. Веретенникова, "Ознакомление дошкильника с природой"
6. М.М. Марковская, "Уголок природы в детском саду"
7. "Дошкольное воспитание" журнал
8. Брофенбреннер, Экология человеческого развития
9. Piaget J., Play, dreams and imitation
10. Հ. Հակոբյան «Բնության դասեր»

Բովանդակություն

Նախադպրոցական տարիքի երեխաների էկոլոգիական դաստիարակության նպատակենրն ու խնդիրները..... 3

Դիտումների, էքսկուրսիաների, զրույցների դերը երեախների էկոդաստիարակության գործընթացում.....5

էկոլոգիական բովանդակությամբ պարապմունքները նախադպրոցական հաստատությունում.....7

Խաղը որպես էկոլոգիական դաստիարակության միջոց.....16

Աշխատանքը որպես էկոլոգիական դաստիարակության միջոց.....24

Բնության օրացույց.....32

Զգայական ընկալումների դերը էկոլոգիական դաստիարակության իրականացման խնդրում.....34

Նախադպրոցական կրթական համալիր ծրագրի էկոլոգիական բաժնի թեմաներ և նյութեր.....35

էկոլոգիական կրթության ուսումնառության ժամանակակից մոտեցումները.....48

Ծնողների հետ տարվող աշխատանք.....49

***Հավելված*.....53**

Առաջադրանք-գծանկարներ 53

Գեղարվեստական ստեղծագործություններ.....58

Օգտագործված գրականության ցանկ.....77

ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔՈՒՄ

Հեղինակ՝ Գայանե Մարտիրոսյան

Խմբագիր և սրբագրիչ՝ Գոհար Ամիրբեկյան

Համակարգչային շարվածքը և ձևավորումը՝ Մանուկ Առաքելյանի

Տպագրությունը՝ օֆսեթ
Թուղթը՝ օֆսեթ
Ծավալը՝ 5տպ. մամուլ